Կան այսօր բժիշկներ , դեղադործներ , փաստաբաններ , վաճառականներ , պաշտօնեայներ , ուսուցիչներ եւ իրենց կոչում լաւ բմրոնող ու գործադրող կիներ ու մայրեր , որք՝ յանցելում վարժարանիս մէջ առած իրենց առաջին կրթութեան եւ դաստիարակութեան կը վերագրեն իրենց յաջողութիւն :

Վասն լիուլի տեղեկութեանց հաճին դիմել առ

Գ. Պատասարեան

Հիմնադիր-Skr-Ծնօրեն

8. Գ. Որբանոցն կընդունի մի միայն այնպիսի Որբեր , որոց Պաշտպանք կը վճարեն կամ կը հաւաքեն տարեկան տասն ոսկի , Որբին ծախուցը համար :



ԲԱՐՈՅԱՎԵՊՔ

1. Գործել եւ ազօթել , երկուքն ի միամին , ոչ թէ մին զանց առնել եւ միւսն ի գործ դնել : Նաւավարն թիրն մէկն կոչեց ազօթք եւ միւսն գործ . թիերէն մին գործածելով նաւն կը մնար իր տեղ եւ միայն կը գտունար , նոյնպէս կրլար երբ միւս թիրն գործածէր առանձին . Իսկ երկուքն ի միամին գործածելով . կը հասնէր նպատակին :

Այսպէս ըրաւ նաեւ Հըտարն թէյլլր , մեծ միախօնարը : Նա առագաստանուով Զինասատն կերթար . երբ յանկարծ հով դադարելով , իրենց նաւ կզզիի մը վրայ կը քշուէր , ջուրին հսանքէն : Այդ կզզին մարդակերներու բնակատեղի էր , եւ եթէ հոն հասնէին անջուշտ վայրենիներու

կերակուր պիտի րոլային : Նաւապետ
մօսեցաւ Հըտարն Թէյրրի եւ խնդրեց որ աղօթէ , որ Աստուած յա-
ջող հով մը պարգեւէ , եթէ ոչ կո-
րած են : Շատ լաւ . ըստ միսիօ-
նարք . պարզէ առագաստներդ որ
սկսիմ աղօթել : Ոչ , ըստ նաւա-
պետը , հարկ չէ առագաստներ բա-
նալ : Ես ալ չեմ աղօթեր , պատաս-
խանեց Թէյրր : Հազիւ 100 կան-
գուն էր մնացած , որ նաւ կղզիին
վրայ իյնայ , ուստի նաւապետ պար-
զեց առագաստներ եւ Թէյրր առանց-
նացաւ խուցը եւ սկսու աղօթել :
Խուցին դուռ ուժ գին զարնուեցաւ :
Ո՞վ է ան գոչեց Թէյրր : Դեռ կա-
զօթէ՞ք հովի համար , գոչեց նա-
ւապետ , ալ իը բաւէ , պէտք եղա-
ծէն աւելի հով ունինք : Նաւ եւ
մէջիններ աղատեցան : Դու կատարէ
ուս պարտք . Աստուած ալ իր մաս
կը կատարէ :

2. Երեւելի բժիշկի մը մահուան
անկողնոյն քով հաւաքուած էին իր

պաշտօնակիցներէն խումբ մը : Մա-
համերձն ըստաւ . Ուրախութեամբ կը
մեկնիմ յաշխարհէ , քանզի երեք
բժիշկներ կը թաղում : Իւրաքանչիւր
բժիշկ կը սպասէր որ իք անուն յիշուի
պիտի : Սակայն նա չարունակեց .
Այս երեք բժիշկներն են՝ չափառ-
ութիւն , մաքրութիւն եւ մարզանք:
— Հետեւէ այս երեք բժիշկներուն
եւ պէտք չես ունենար դեղերու :

3. Կուապաշտ մը սովորութիւն
էր ըրած չարունակ քրիստոնէից
թերութեանց վրայ խօսիլ : Օր մը
ժողովի մէջ նոյն բան բրոծ ատեն
երկաթագործ մը սուք ելաւ եւ ըստ .
Բարեկա՞մ , զու Առըրբ Գիրք կար-
գացած ես : Անշուշտ , ըստ միւսը :
Մէծատունին եւ աղքատ Ղաղարու-
սին պատմութիւնը զիտե՞ս , հարցուց
երկաթագործը : Հարկաւ , ըստ
միւսը ծիծաղելով Արգ , ըստ երկա-
թագործը , զու քրիստոնէից բարի
կողմն անտեսելով չարունակ անոնց
թերութիւններն ու շաղրութեանդ ա-

սարկոյ ըլլածվ . վար չես
մար ա'յն շուներէն , որք Կազարոսի
վերքեր կը լզէին . տռանց անոր ներ-
քին առողջութեան տեղեակ ըլլալու :

4. Մեծն Աղէքսանդրի առջեւ
բերուեցաւ մի զինւոր , որ Աղէք-
սանդր կը կոչուէր եւ շատ վախիոտ
էր . Ինձի նայէ , հրամացեց թագա-
սորը . եթէ Աղէքսանդր կը կոչուիս .
պարտիս Աղէքսանդրի անվեհերու-
թիւնը , քաջութիւնը եւ ուրիշ յատ-
կութիւններն ցոյց տալ . եթէ ոչ
պարտիս փոխել անունդ : — Քրիս-
տոնեայք Քրիստոսի անուն կրելով
գոհ չպարտին ըլլալ . պարտին անոր
նման ըլլալ :

5. Շնայտըր թէ գերմաներէն ա-
նուն է եւ թէ գերձակ կը նշանակէ :
Քրիստոնեայ մի զօրապետ որ մը
զունդին առջեւ կանգնած ըտաւ .
Ո'վ որ Շնայտըր է թող քայլ մը յա-
ռաջ գոյ : Երեք զինւորներ առաջ
անցան : Զօրապետը խնդրեց որ իրեն

ձեռք մը համազգեստ շինեն . Երեքն
ու ըստին թէ իրենք անկարազ են իր
հրաման կատարել զի գերձակ չեն .
միայն անուննին գերձակ - Շնայ-
տըր - է : — Անունով քրիստոնեա-
ներուն լաւ մի օրինակ :

6. Իր մահուան անկողնայն վրայ
Պ Յակոբ իր որդւոյն խրատներ առլէ
ետեւ յանձնեց անոր մի կնքեալ
տուփ . եւ պատուիրեց որ պահէ
զայն եւ միայն բանայ յետին նեղու-
թեան մէջ . օգնաթիւն սատանալու
համար : Հայրը մեռաւ եւ որդին
քանի մը տորի տուփը բանալու պէտք
չունեցաւ . Ի վերջոյ հասան նեղու-
թեան օրեր եւ աղան ստիպուեցաւ
բանալ տուփը : Ի՞նչ մեծ եղաւ զար-
մանքը երբ տուփին մէջ գտաւ միայն
երկու կտոր փայտ մին քիչ մը փոքր
քան զմիւոք : Երկայն փայտին վրայ
գրուած էր . «Կամք Աստուծոյ» :
կարճին վրայ «Կամք անձնական» :
Թուղթ մ'ալ կար տուփին մէջ որոյ
վրայ սա՛պէս էր զրուած : «Երդ անձ»

համան կամքդ Աստուծոյ կամաց
վրայ գնես , կունենաս խաչ . զի՞ր
անձնական կամքդ Աստուծոյ կամաց
ստքը , տակը , ան տան խաչ , նե-
ղութիւն քեզ համար չկայ» :

7. «Մէկ հատիկ զաւակնիս է»
կըսէին ծնողք , «մողունք որ ա-
զածն ընէ» . եւ նա կընէր զոր ինչ
կամէր . «Մէկ հատիկ զաւակնիս է»
կըսէին , երբ ժամանակ եկած էր որ
նա բան սորվի . «Նա մեր ժառան-
գորդն է , պէտք չէ որ այնքան նեղ-
ուի դպրոցին մէջ» : Որդին ալ ծոյլ
եւ անգործ կը ցըչէր :

«Մեր մէկ հատիկն է» , կըսէին ,
«եւ սէտք է մեր ամէն վայելքնե-
րուն մասնակից ըլլայ» , եւ աղօն
սկսաւ ամէն տեսակ հաճոյից ետեւէ
իյնալ : «Պէտք չէ այնքան սանձի
տակ դնել , մեր մէկ հատիկը» . կ'ը-
սէին ծնողք , երբ դրացիներ կը գահ-
գատէին անոր չար եւ յիմորական
արարքներուն վրայ . «Մեր մէկ հա-
տիկ սրդին է» ըսելով կը միսիթարէր

այրը իր կինը , երբ նա պարտք
պարտքի վրայ կը դիզէր . «Մեր մէկ
հատիկն էր» ըսելով կուլային եւ
կողբային այր եւ կին երբ նա տու-
նէն փախաւ եւ ամէն տեսակ անա-
ռակութիւն ընելով իրենց վրայ ա-
նարգանք եւ նախատինք բերաւ :
«Ո՞խ , մեր մէկ հատիկ զաւակն էր»
ըսելով աղի արտասուք կը թափէին
ծունկերնին ծեծելով այր եւ կին ,
երբ օր մը լուր եկաւ թէ իրենց «մէկ
հատիկը» անձնասպան է եղեր : —
Ռւսափ կրթէ մահուկը գեռ իր ճամ-
րան չսկած , որ երբ մեծնոյ , ծե-
րանոյ , անկէ չխոտորի :

8. Փիլիսոփայ մը ուսման պարա-
պած ատեն աղջիկը ներս մտնելով
վառարանէն քիչ մը կրակ կը խնդրէ :
Բայց ո՞ւր պիտի դնես կրակը , կը
հարցնէ ուսումնականը , եւ ամսոն
մը կը փնտոէ : Նոյն միջոցին աղջիկը
քիչ մը պաղ մսիսր դնելով ափին
մէջ կը խնդրէ հօրմէն որ կրակը ա-
նոր վրայ գնէ : Փիլիսոփան գիրքերը

գետին նետելով կը գոչէ . բոլոր զիւտութեամբս կրակի տանելու ասանկ պարզ միջոց մը չկրցայ գտնալ :

9. Սարայի թագուհին երկու պատկ դրու Սոլոմոնի առջեւ , մին ընական եւ միւսն արուեստական ծաղիկներէ հիւսուած , որ սակայն անհնար էր զանազանելի միմիանց : Սոլոմոն շուարեցաւ պահ մը . պատատականք զլուխոնին խոնարհեցուցին : Յանկարծ թագուար հրաման ըրաւ բանալ պատուհան . ներս խուժեցին մեզուներ , եւ զետելզուեցան ընական ծաղիկով շինուած պատկին վրայ : Սարայի թագուհին հիւսցաւ ու մեկնեցաւ ասանց այլեւս փարձեւ Սոլոմոնի իմաստութիւն :

10. Աղբար , գոււաթ մ'օղիէն ի՞նչ կրլայ . բաւ մին իր բարեկամին , որ հրաժարած էր օղի խմելէ : Հիշ , բան մը չըլլար . կրնայ ըլլալ որ վնաս ալ չի տայ , սակայն եթէ չխմեմ կատարելապէս վստահ եմ որ

վնաս չի պիտի տայ , պատասխանեց միւսը :

11. Փողոցէն անցած տահն ծռեցաւ պառաւը , գետնէն բան մը վերցուց ու թաշկինակին ծայրը կապեց : Մարդ մը կը զիտէր պառաւին ըրածը եւ մինչեւ տունը հետեւեցաւ անոր : — Գտած գ ցոյց տուր ինձ , հրամացեց մարդը : — Պառաւը թաշկինակին հանգոյցը քակելով քանի մը ապակիի կտորներ զրաւով մարդուն մէջ : — Զարմանօք հարցուց մարդը պառաւին գետնէն ապակիի կտորներ ժողուելուն պատճառը : — Ծերուկը սա՛ռէս պատասխանեց . Բոսիկ սաքով խեղճ տղայք կանցնին փողոցէն եւ վերցուցի առակիին կտորներն որ անոնց ոտք չխրին : — Մանաւանդ տղայք վնասէ ազատ պահելու համար այս պառաւին նման վնասակար բաներ վերցուր անոնց աղիւէն :

12. Զորոս սարդ եկեղեցին մտան

եւ ութ օրուան մէջ իւրաքանչիւր աւարտեց իր սատայն :

Քո՛ւրիկի , ըսաւ սարդին մին իր ընկերին , ես բեմին վրայ շինեցի իմ անակ մէյ մ'ալ եկաւ ժամկոչ եւ բիրտ ձեռքերով վոշին առած ատեն ատենս հիմէն քանիթեց :

Երկրորդն ըսաւ . Ես ալ իմ անակ աւազանին վրայ շինեցի . երեք օր կրցայ մէջը բնակիլ . զի չորրորդ օր մկրտութիւն կար եւ աւազանը չուր լիցուցած ատեննին հիւղակո քար ու քանիթ ըրին :

Ես ալ , պօսաց անգիէն երրորդ սարդը , իմ անակո սիւնէ սիւն թելեր քաշելով շինեցի . բայց աւա՛զ , մանոլ ելող զիստրկովնին աւրեցին իմ անակ :

Չորրորդ սարդը , թաթիկներ իրար զարնելով եւ ծափահարելով սար ծիծալ մ'արձակեց . Անխելքներ , զոչեց սա միւս Յ քարիկներուն . իրաւ որ ես ձեզմէ շատ խելացի եմ եղեր . գիտէ՞ք , ո՞ւր շինեցի իմ անակս . աղքատաց գանձանակին ճիշդ

վրան , եւ հօն կը բնակիմ դեռ հանգիստ եւ խաղաղ . եթէ չէք հաւատար , եկէք մէկտեղ եկեղեցի երթանք եւ ձեզի ցոյց տամ իմ լարած սասայն աղքատաց գանձանակին ծակին վրան : — Զարս սարդերուն վերջինը կը դատապարտէ շատեր որք անփոյթ են աղքատին բաժին հանել Աստուծոյ իրենց պարդեւած բազում օրհնութիւններէն :

13. Երկու Զինացի կիներ ներկայացան Մանաւարինին — դատաւոր — երախայ մը միմիանց ձեռքէն քաշքշելով . մին կը պօսար . «Տղան իմսէ» . իսկ միսն «ո՛չ իմսէ» . Մանաւարին անկարող ըլլուրով վճիռ տալ . զեր կելէ եւ կնոջը ը պատմէ : Սա կը հրամայէ ծառայից մեծ ձուկ մը բռնել եւ դեռ ողջ իրեն բերել . Ապա երախան վեր բերել տալով կատանձնանայ իր սենեակ : Ծառաներ խոչըր ձուկ մը կը բերեն . զոր դեռ նոր հանած էին ջուրէն . Տիկին Մանաւարին երախային հանդերձներն ձուկին հագ-

ցընելով կը հրամայէ ծառայից որ .
երկու կանանց ներկայութեան ձու .
կը գետը նետեն : Հրաման կը կա .
տարուի . ձուկ ջուրը ձգուելուն
պէս ճիզեր կընէ իր տարօրինակ ծած .
կոցէն աղատուելու համար . երախտ .
յին բուն մադրը զայս տեսնելուն
գետը կը նետուի իր հոգեհատոր տ .
զատելու համար : Այդ է ճշմարփա .
նայր . կը վճռէ Մանտարին եւ տիկին
Մանտարին մետաքսեայ հանդերձնե .
րով հագուած երախտան վար բերելով
կը յանձնէ մօրք : Այս է Սոլոմոնեան
նորագոյն դատաստան :

14. Աշխարհիկ օրիորդ մը կը պար .
ծէր թէ կրնայ տրձակ համարձակ տ .
մէն միջավայր մոնել ասանց ո՛ եւ է
երկիւղի թէ ատով կաղարոփ իր տ .
նուն : Այս՝ բաւ հանգագործ մը .
ձեր սպիտակ հանդերձնվ համարձա .
կեցէք անդամ մը մանել մեր տծ .
խահանք , եւ երր անկէ գուրս ելլէք
այլեւս սպիտակ չէ ձեր հանդերձ ո՛ր .
քան ալ զգոյշ կենաք , ուստի լու

եւս է բնաւ ներս չմտնել աղտոտ
վայրեր :

15. Հանգուցեալ Վիքթօր էմմա .
նուէլի ներկայացան բոլոքական յար .
անուանութեանց քարոզիչներ ի ներ .
կայացման արարողապետ կրսէր «այս
պարմն սա յարանուանութեան քա .
րոզիչն է» . եւ այսպէս մինչեւ բոլորն
ալ ներկայացուեցան թագաւորին :
Է՛ն , ըստ թագաւորը , վերջին ներ .
կայացողին ձեռքն սեղմելով . այս
ի՞նչ պիտի ըլլայ . այս քանի՞ բաժա .
նու մներ կան բոլոքականաց մէջ :
Վեհափառ տէ՛ր . ըստ քարոզիչը .
Զեր Վեհափառութեան բանակ շատ
մը գունտերու եւ վաշտերու է բաժ .
նուած . իւրաքանչիւր գունդ եւ վաշտ
իր սեպհական համազգեստն ունի եւ
արտաքուստ կը տարրերին ի միմիանց .
սակայն բոլոր զինւորներ եւ զօրա .
կաններ ի միտափին Զեր Վեհափառու .
թեան կը հպատակին ու կը հնազան .
դին եւ միայն ձեր զրօշակ կը բարձ .
րացնեն : Ճիշդ այսպէս ենք բոլոքա-

կաններս . թէեւ շատ մը խումբերու բաժնուած ենք , սակայն բոլորս ի միայն Տէր Յիսուս Քրիստոսի կը ծառայենք , Անոր կը հնազանդինք եւ զնա կը պաշտենք : Արքան շատ գոհ մնաց այս պատասխանէն :

16. Մանօթ է Քրիւկէր նախագահին խոտամիւր բարեպաշտութիւնը . Ասուուած աշունչն անոր սնարքին գիրքն է , զոր երբեմն կը մեկնէ շատ զարմանալի կերպով : Քրիւկէր նախագահ օր մը աղէկ մը յանդիմանելէ գիրջ հետաքրքիր մը . որ կը յայտարարէր թէ չէր ըմբաներ Երրորդութեան Խորհուրդը , աւելցուց թէ հիմա պիտի բացարէր իրեն . —

«Աշտանակ մը առէք ձեռքերնիդ . ըստու , ի՞նչ ունիք . ձանձախարիթը . որ Հայրն է , պատրոյդն որ Որդին է եւ բոցը՝ որ Սուրբ Հոգին է : Եւ սակայն եթէ երեք տարրեր բաներ կան հոդ , ի՞րնդանինք թէ աղոնք ամէնքը մէկ հատ են միայն , այսինքն աշտանակը : Է՛ ուրեմն , եթէ այս-

պիտի բաներ հնարաւոր են ամէն օր ձեր աչքին տակ տեսած բաներուն համար , ինչո՞ւ կը տարակուսիք Աստուածած աշունչին մէջ ըստեածին վրայ »

17. «Ես չեմ հասկնար թէ ինչո՞ւ մէկը որ բարոյակոն լաւ կեանք մը վարել ջանացած է ամբարիշտէ մը տեկի հաւանականութիւն պիտի չունենայ երկինք մոնելու իր լաւ բարոյականին շնորհիւ . » ըստու տիկին մը փրկութեան խնդրին վրայ ուրիշներու հետ խօսակցելու պահուն : « Լոկ սա պատճառով , » ըստու մէկը՝ անոր պատասխանելով . « Դիցուք թէ զուք ու ես կ'ուզենք զրոսավայր մը երթալ , ուր մուտքը մէկ մէծիալյէ է : Դուք կէս մէծիալյէ ունիք , իսկ ես՝ ոչինչ : Երկուքէս ս՞րը աւելի հաւանականութիւն պիտի ունենայ ներս ընդունուելու . » « Ոչ մէկս : » « Շիտակ . ձիշտ այսպէս բարոյական մարդը յայտնի մեղաւորէն աւելի նպաստաւոր զիրք մը չունի : Բայց դիցուք թէ բարի եւ հարուստ մարդ

մը մեր նեղութիւնը նշարելով մուտքի
մէկ մէկ տուսն նուիրէր մեզի իր անձ-
նական ծախոքով : Ի՞նչ կըլար այն
տաեն : » « Այն տաեն երկու քո ներս
կը մտնէինք : »

18. Հնդկաստանի միսիոնարներէն
մէկը օր մը Գանդեսի եզերքը բնիկ-
ներու բազմութեան մը խօսեցաւ :
Երբ լմնցուց իր խօսքը , Պրահմին մը
սոսպէս ըստաւ անոր . « Տիար , դուք
չէ՞ք ըսեր թէ Սատանան մարդիկ կը
փորձէ օր մեզք գործեն : » « Այո , »
պատասխանեց միսիոնարը : « Աւ-
րեմն , » ըստ Պրահմինը , « անշուշտ
Սատանային է յանցանքը : Ուստի
Սատանան եւ ոչ թէ մարդը կրելու
է պատիժը , » Տեղացիներէն շատե-
րտն աչքերէն կը հասկցուէր որ հաւ-
նեցան Պրահմինին զիտողութեան :
Այդ միջոցին միսիոնարը նշարեց
գետն ի վար գացող նաւակի մը որուն
մէջ քանի մը մարդ կար . Իր շինիչ
սրաբանութեամբ որով նշանաւոր էր
պատասխանեց : « Պրահմին , կը տես-

նէ՞ք սա նաւակը : » « Այո : » « Եթէ
բարեկամներէս մէկ քանին զրկէի
սպաննել անոր բոլոր մարդիկը և
ինծի բերել անոր մէջ դանուած բո-
լոր հարաստթիւնը , ո՞վ պիտի կրէր
պատեմը : Ե՞ս՝ զանոնք զրդելուս
համար , թէ անո՞նք՝ այդ սճիրը
գործենուն համար : » « Ամէնքդ ալ »
ըստ Պրահմինին յուզմամբ , « ամէնքդ
ալ մահուան պիտի դատապարտ-
ուիք : » « Աւրեմն , » յարեց միսիո-
նարը . « Եթէ դուք ու Սատանան
մէկաել մեզանչէք , Սատանան ու
գուք մէկտեղ պիտի պատժուիք : »

Եթէ առանց ծառայի չես ըլլար
հատ մը կը բաւէ . եթէ կուզես որ
գործերդի բարձի թողի ըլլան , ո՛ւ եր-
կու ծառայ . եթէ կուզես որ գուն
կատարես գործերդ ա՛ւ երեք ծառ
ուայ . իսկ եթէ կուզես որ գործերդ
կարգի կանոնի ըլլան , դու ծառայէ
քեզի :

Թալմուտ սապէս կ'ըսէ :

Երեք են որք իրենք զիրենք
թշուառ կ'ընեն. նա որ դրամ փոխ
կուտայ առանց երաշխաւորի, նա որ
իր կնոջ իշխանութեան տակ կը մըա-
նոյ եւ նա որ յօժարակամ գերի
կ'ըլլոյ՝ դեռ ողջ եղած ատեն ստաց-
ուածքը որդւոց վրայ փոխանցելով :

Հարուստ ըլլալ ստացուածքի տէր
ըլլալ ըսել չէ, հապա զոհունակ ըլ-
լալ:

Ոսկի շինելու միջոցը. — Ռի-
պէրա, երեւելի ու ճարտար նկարի-
չը, սիրելի էր Նարովիկ փոխարքա-
յին, որով շատ հարստացաւ ու բա-
րեկամացաւ ազնուականներու եւ իշ-
խաններու. կը պատմուի թէ երկու
Սպանիացի պաշտօնակալք. Ալէ թոյի
հրաշներէն յափշտակեալ. Ռիպէրայի
գալով կ'ուզէին զանիկա մասնակից
ընել իրենց ապագայ հարստութեան,
եթէ յանձն առնէր ֆէլքոնքայական +որ
փնտուելու հոմար պէտք եղած ծախ-
քը վճարել: «Ես ալ ոսկի կը շննեմ,

ըստաւ Ռիպէրա, վաղը եկէք եւ
յայտնեմ ձեզի ժաղդնէլը. »

Երկու պաշտօնակալք հետեւեալ
օր Ռիպէրայի բնակարանը գալով,
զանիկա գտան իր սենեեակին մէջ,
որ պատկերի մը վրայէն վերջին
անգամ կ'անցնէր վրձինով: Սպասա-
ւորը կանչելով հրամայեց պատկերը
տանիլ վաճառականի մը, որուն փո-
խարէն 400 տուժութ պիտի տար, եւ
երբ սպասաւորը դրամներովը դար-
ձաւ, նկարիչը նետեց զանոք սեղա-
նին վրայ, ըսելով. «Տեարք, այս
ոսկիներն ահա իմ բովէս են. առէ
շնելու համար բաց է աշխարհունենէ ու-
րէլ գլուց չէմ ժիշեր: »

Թրանքին փիխովիան ալ կ'ըսէր,
«Մարդ հարուստ ըլլալու համար իր
արուեստին կամ իր գործին յարեալ
մնալու է: » Ուր էր թէ մեր երի-
տասարդները ըմբռնէին առ խօսքին
ճշմարտութիւնն եւ փոխանակ ան-
գործ նստելով բախտին սպասելու,
ըլլային ո' եւ է գործի կամ արհեստի
մը տէր եւ անոր յարեալ մնային յա-

բառեւութեամբ :

Պատ. Ափրիճն . երբ խօսքն ուղղեց հարանցուին որ իր մէկ բարեկամին ազգիկն էր , առաջէս ըստաւ ամուսնական հնապանդութեան վրայ նկատմամբ անոր ապագայ տիրոջ . «Թող անիկա զլուխ ըլլայ . եւ գոն պարանոց , որ գործնես զանիկա ո՞ր կողմբ որ է՛տզես : »

Աշխարհի մէջ ապրող ճշմարիտ քրիստոնեան Ովկիանոսի վրայ նուող նաւու կը նմանի . Նաւը չընկրդմիր ջուրերու մէջ գտնուելով , այլ կ'ընկզմի՝ ջուրերն իր մէջ առնելով . Նմանապէս քրիստոնեան չկործանիր աշխարհի մէջ ըլլալով , ուր ըլլալու է ցարչափ ժամանակ մարմնի մէջ կը մնայ , այլ կը կործանի՝ աշխարհն իր մէջ առնելով :

Միջեւ

Ծերունի ամուլ մը կար , ծանօթ իրենց գոհունակութեամբ , փոխա-

դարձ սիրով եւ քրիստոնէական երջանիկ կենցաղով : Որովհեաեւ շատ կը խօսէին ուրախութիւններու վրայ սրոնք իրենց բաժինն եղած են , որ մը սա հարցումն ուղղուեցաւ անոնց . «Բնաւ ամպոտած չէ՞ ձեր երկինքը : » Պատար պատախանեց . « Ամպոտած , անշուշտ . Ուրիշ ի՞նչ կերպով կրնային գոլ բոլոր օրհնեալ անձրեւները : »

Ք.



ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆ


Անօթութիւն եւ ծարաւ մեզի ի-
մաց կուտան ուտելիքի եւ բմպելի-
քի պէտք ունենալիս :

Մարտինին օրական կորուստ՝
պէտք է օրական սննդառութեամբ
հաւասարակըսել :

Ամէն մէկու կարօտ եղած սնրնդ-
եան չափն իր մարսողական գործա-
րանաց գործողութենէն կախում
ո՞նի :

Սննդեան համար մեր ոնեցած
նիւթերէն պէտք է ընտրենք լուս-
դոյնը ու յարմարագոյնը :

Դիւրամարս եւ սննդարար նիւ-
թերէն քիչ, փոքր քանակութիւն կը
բաւէ, իսկ զժուարամարս եւ քիչ
սնունդ պարունակող նիւթերէն պէտք
է մեծ քանակութեամբ առնել :



ՊԱՏ. ՅՈՎՀԱՆՆԵԽ ՏԷՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ
Ծննդ 1832ին Մեռած 1900ին

Մննդեան նիւթն դիւրամարս կը կոչուի երբ շուտ մարտուելով արեան կը փոխուի . մննդարար կը կոչուի այն նիւթ որոյ մէջ ուրիշ նիւթերէ աւելի լուծելի եւ արեան վերածելի տարր կը գտնուի :

Զօրաւոր , առողջ եւ աշխատութիւն ու հանդիսա փոփոխակի վայելու անձ մը՝ պէտք է մէկ հաստատուն եւ չորս լոյծ ջրու սնունդ ստանայ :

Հետեւեալներն օգաակար են միշտ .

1. Կերակուրի հաստատուն նիւթերն ընտրել , ոչ թէ ձեռքը անցածն ուտել , աժան ըլլալուն համար . հաց , կանանչեղչէն , միա , հաւկիթ , կարագ , իւղ , եւլն . պարզ համեմեներ , աղ , պղպեղ եւլն . գործածել . կերակուրներն համեղ ընելու համար :

2. Միտ եւ կանանչեղչէն ի միուսին գործածել . միա կը պարունակէ հաւկիթի սպիտակն , իւղ եւ կեր . ասանց պէտք ունի մարմին :

3. Դիւրամարս միան ուտել . ոչ-

խարի , աղստնիի , հաւի , նիհար խոզի եւ եղան , մանաւանդ հորթու միս . եղան միսին էն սննդարար մասն է «Փիլէթօ»ն . Միտ խորոված ուտել լու է . զի հիւթ մէջ կը մնայ :

4. Հաւկիթ , հում կամ թեթեւ խաչած . հումը էն դիւրամարսն է . պինդ խաչուածն շոտ ծամելու է : Հաւկիթին ճերմակը էն մննդարար մասն է :

5. Լաւ պանիր , չափաւոր կերպով ուտելով , մարտողական գործարաններուն գրգիւ կուտայ , ախորժակ կը բանայ :

6. Կարագ առատ ուտելու է . առաջնակարգ սնունդ մ'է նաւ :

7. Շաքար շատ դժուարամարս է եւ մարմնայ ջերմութիւն կուտայ . տղայոց անհրաժեշտ պէտք է շաքար , քանզի մարմնայ աճման պէտք եղած կերն կը լուծէ . որ արեան ցջանով ամէն կողմ կը տարածուի :

8. Հացին ոոը ամէն կերակրոյ հետ ուտելու է . հաց սնուցիչ եւ դիւրամարս է , մանաւանդ դուրսի

կողմը . միջնուկը խամր բլալով դրժուարամարս է :

9. Ընդեղէնք , լուրիա , սիսեռ , ոլոռն , պէտք է շատ ուտել . ասոնք սնուցիչ են եւ օտարյէն — նիշաստա — շատ բուսական հաւկիթի սպիտակ կուտան մարմնոյ :

10. Պառւզ , հասունը՝ չափաւոր գործ ածութեամբ աղիքներուն գործ աղութեան խիստ նպաստաւոր է :

11. Կերակուրներն համեղ ու դիւրամորս ընելու համար համեմ գործ ածել պէտք է , բայց չափաւոր կերպով :

12. Ջուր խմել . ջուրը անդեան անհրաժեշտ պէտքն է . ջուրը որնընդեան գլխաւոր մասն է . մեր մարմնոյ 3/4ը հեղուկէ կը բաղկանայ . առանց ջուրի չկայ կեանք :

Առառուն անկողինէ ելլելուգ գաւաթ մը պազ ջուր խմէ , նոյնպէս ամէն ճաշէ ետեւ ու երեկոյին պառակած ատենդ : Լաւ ջուրը գոյն եւ հոտ չունի . պազ եւ կազզուրիչ կ'ըլլայ . գաւաթին յատակ ու եւ է նիւթ չձգեր :

13. Կաթը ըմպելիքներուն էն սնուցիչն է . մանկանց , ապաքինողներու եւ անզօրներու համար կաթն առաջին սնուցիչ նիւթն է . սեւ հացացով ու պաքսիմատով ուտելու է . կաթով շինուած կերակուրներն ալ սնուցիչ են :

14. Զուտ գարեջուրն ալ սնուցիչ է : Օրը մի քանի գաւաթ ուրբ ջիղերուն գրգիռ կռւատյ , ուժագափութեան գեղ ու դարման է եւ նոր աշխայժութեան կը մղէ :

15. Լու սեւ թէյ , մանաւանդձմեռ , խմելով ստամոքս կը տաքնայ , կերակուրներն կը լուծարին , ստամոքսին եւ աղիքներուն մսաններն մեզմիւ կը գրգռուին . ջիղերուն գրայ ալ թէյլ կ'ազգէ նպաստաւոր կերպով . խորհուրդներն կ'ամփոփէ եւ խաղաղիկ զուարթութիւն կռւատյ :

16. Պէտք է որոշ ժամերու մէջ ուտել . նախաձաշ անկողինէ ելլելէ կէս ժամ յետոյ , զօրացուցիչ ճաշ կէս օրին , թեթեւ ընթրիք կէս օրէն 6 ժամ յետոյ :

17. Ծանր ծանր ուսել, լուծ ծանել եւ մանրել, կերակուրը լորձունքին հետ շաղախել, ասավ մարտ սողութիւն կր զօրանայ :

18. Ճաշէն ետեւ պահ մը հանգիստ, մարմին պէտք է հանդչի որ ստամոքս սկսի գործել :

19. Ճաշը սկսէ ապուրով, սա կը զրցոէ ստամոքսին մարտով հիւթորով հաստատուն նիւթերն մարտելու կը պարտաւորուի :

Հետեւեալներն մնասակար են :

1. Հիւանդ անասուններու միոը, քննէ տառձ միսդ :

2. Շատ տաք ապուրը, ստամոքոը կ'աւրուի եւ կը հիւանդանայ :

3. Պինա խաշած հաւկիթ, մանաւանդ երեկոյին . մարտովթիւն կը խանգարէ :

4. Մզլոտած, +է-ֆէլ, կզուած պանիր, կարագ, ձէթ եւլն .

5. Թթու, սեւ եւ խմոր հաց, շափազանց թէփ պարունակով հաց, սա առանց մարտուելու գուրս կ'ելլէ նորէն : Նաեւ գետնախնձոր եւ ուրիշ

նիւթեր պարունակով հացը, ասոնք հացը պինտ եւ զժուարամբար կ'ընեն :

6. Զափազանց շատ օվլայ-նիշառատա-պարունակով կերակուրներ եւ գետնախնձոր մէկ անգամին առատ ուտելն :

7. Տհաս պասւղ, մանաւանդ մանկանց ստամոքսի խանգարում կը պատճառեն :

8. Միշտ մուղէն կերակուրը, որով վայնի հիւանդութիւնյառաջ կը բերէ :

9. Բուսական եւ կենդանական նիւթեր պարունակով ջուրը, որ անօթին տակ ո՛ եւ է նիւթ կը ձգեն, եւ կը հոտին երբ որահուին :

10. Անշարժ կեցած, աւազաններէ, լճակներէ եւ խրամներէ առնուած ջուր, Միքրոպ կը պարունակեն ասոնք :

11. Ալքոլ պարունակով ըմպելիներ, ասոնք մարմնոյ թմրաթիւն եւ անզօրութիւն, շարժման եւ խորհելու անկարողութիւն եւ ստամոքսի ախտեր կը պատճառեն :

12. Ոուրճը, թէյը եւլն շատ

տաք խմել . ակրաներն եւ ստամոքս
վնաս կը կրեն ասով :

13. Աճապարանօք կերակուր ու-
տել , ստամոքս չկրնար նաեւ ակ-
ռաներուն պաշտօն կատարել :

14. Կանգնած եւ պառկած կե-
րակուր ուտելն :

15. Կերակուր կերած տաեն
կարդալ . մարմինը միեւնոյն ատեն
թէ ուղեղը եւ թէ մարսողական գոր-
ծարաններն չկրնար հոգալ . ոչ ոք
կարէ երկուց տէրանց ծառայել :

16. Գործի եւ աշխատաւթեան
սենեակը ճաշել . սովորաբար ան-
մաքուր օդ կայ հոն :

17. Կերակուրէ անմիջապէս յե-
տոյ գործի սկսիլ . մարմին գեռ չյոգ-
նած պէտք է ստամոքս մարսելու գոր-
ծին սկսի :

18. Զափազանց իւղոտ կերա-
կուրներ , ասոնք մարմինը կը թու-
ցընեն անդամներուն չափէն աւելի
գերութիւն տալով . որովայն կը մեծ-
նայ , կ'ուռի եւ մասներն յոյժ կը
ծանրաբեռնին :

19. Կերակուրէն յետոյ քնանալ .
ոյս միայն տարիք պառած մարդոց կը
յարմարի :

Գալ տարուան նիւթն է
«Մարզանը եւ հանդերձ » :

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԿԱՆԱՆՑ ԲԱԺԻՆԸ

Յարգենի արհեստաւորները

— Տիկին , ձեր զաւկին համար
ի՞նչ ասպարէզ պատրաստած էք :

— Ինքը թէեւ շատ հետամոււտ է
ձեռքի արուեստներու , հիանալի կեր-
պով ասեղ կը բռնէ , մերատ կը շար-
ժէ կամ շատ յաջող կերպով կոտրած
կարասիները կը չինէ . ձեռքն անցած
փայտով նաւակներ ու պղափի կամ
կարասիներ կը չինէ . կամ զարմանա-
լի կերպով յատկութիւն ունի մուրճը
գործած ելու կամ ողտիկ որմնադիրի

մի պէս տանիր փլած կողմերը կը նուրոգէ . բայց մտադիր չենք զինքն արհեստանոց մր դնել . ընդհակառակը հազար տեսակ ուրիշ ազատ ասպարէզներ կան , բժշկութիւն , փաստարանութիւն . վաճառականութիւն , գրագրութիւն . երբեք մտադիր չենք ոչ հայրն եւ ոչ ես պարապ բաներով զբաղեցնել զինքր . նորէն դպրոց պիտի գնենք որ մարդ րլայ :

Մարդ րլայ . բայց սովորականէն վար բժիշկ մր նոււազ մարդ է քան յաջողակ երկաթագործ մր . կահագործ մր . նոյն իսկ գրագրութեան :

Այս' . Տիկիններ . գարգացած , դաստիարակուած , բարեկիրթ մարդը միշտ կը սիրուի . հոգ չէ թէ կոչտ ձեռքեր ունենայ : Աէրն ու յարգանքը մարդուն համար է . գարգացած ու դաստիարակուած մարդուն . կօշկութիւնն իր պատուէն բան մը պէտք չէ պակսեցնէ , քանի որ կօշկակարը լաւ դիտէ իր արուեստը . զարգացում ու կրթութիւն ունի . մեր տղաքն ու աղջիկները չխորշեցնենք

անուններէ ու չկապենք անուններու . Սյոօր աղջիկ մր երբ մեծցած է օր մր րժիշկի . կամ վաճառականի կին րլալու գաղափարով , իրեն համար ահագին պատրանք է . սոսկալի անկում երբ իմացնեն թէ պարկեցտ նոյն իսկ լաւ շահագ կօշկակար մը իր ձեռքը կը խնդրէ : Թերեւս առարկեն ունանք թէ արհեստին կամ զբաղման տեսակը շատ կը փոխէ մարդուն ապրելու . խորհելու կամ գործելու եղանակները . ասիկա գուցէ քիչ մր արդարացի ըլլայ . մեր պապիկները , նոյն իսկ մեր հայրերուն մէկ կարեւոր մասն հին գաղափարներ ունէին , որք անշուշտ արգիւնքն էին իրենց գործած միջավայրերուն , բայց անոնց նորահաս զաւկներն երբէք այդպէս պիտի չըլլան , ընդհակառակը զարգացում եւ ուսում ստանանուն վերջ արհեստի պիտի սկսին , քիչ մը աւելի խերահաս արբիքի մը մէջ . լաւագոյն պայմաններու մէջ . Թող մեր տղաք արհեստ մը գիտեան ու շատ շահին , փոխանակ առաւօտէն մինչեւ

իրիկուն թուանշաններով զրագելու ,
կամ տգէտ ու անկարող բժիշներ ,
վաճառական , խեղճուկ գործակա-
տարներ ու շատ անգամ անգործ ու
փողոցին երկայնութիւնը չափող մար-
դիկ րլարու , որք իրենց ամրողի
յայսը պիտի դնեն աղջիկներու դրամ-
օժիտին , ու ձեռքերնին բանան որ-
պէս զի հոն դնէք ձեր ոսկիները եւ
հասունցած ու խոշորցած մարդիկ
ամուսնութենէն վերջ կարգադրու-
թիւն մ'ընել ջանան իրենց կեանքին
մէջ . մինչդեռ մեր պապիկները մեր
փեսացուներու ամուսնացած տարի-
քին մէջ զմեզ ծնած մեցուցած ու
հարսնցու աղջկանց կարգ անցուցած
էին արդէն :

Գ. ԶԱՐՈՒՀԻ

Աշխարհիս ստեղծմանէ մինչեւ
այսօր , 6,000 տարուան ենթագրեալ
շրջանին մէջ , ամէն բան փոխուած
է , բայց կանացի պշրասիրութիւնը
բնաւ փոխուած չէ :

Պ. Կայէ Մէմիխի եւ Թէփէի մէջ-

տեղը գտնուած Անթինօէ քաղաքին
եզիպտական մեհենի մը մէջ պեղում-
ներ ընել տալով , շատ հետաքրքրու-
կան բաներ երեւան հանկած է : Տի-
կիններ , կուզէք հասկնալ թէ ի՞նչ
իր հագնէր ազնուական տիկին մը
յ'Անթինօէ , մէկ քանի հազար տարի
առաջ : Խիստ նուրբ զիթանէ շապիկ
մը , քրան կապոյտ ոլոսիկներ եւ
ձերմակ ծաղիկներ սփռուած : Նկա-
րատիպ գեղին +ընտնէ ոսպա մը քա-
ռակուսի բացուած : Քառակուսիին
բոլորտիքն ալ կապոյտ կալաներով ,
դեղին նկարներով . կուրծքին վրայ
տանիւներ , ոօպային քղանցքն ոլ
ոսկեհուռ Աբովլէօններով : Կարմիր
մետաքսեայ զգակ . կարմիր կաշիէ
կօշիկ , ոսկեզօծ կոճակներով :

Անթինօյի մէջ երկու ամազոններ
գտնուած են իրենց հեծած թամբե-
րով : Հագուստնին բարակ կիսամերկ
կրկնոց մ'է , վոչչք քրքմազոյն ոօպա-
գծաւոր եւ վշեայ շապիկ մը , ոկէ
գոյնով մետաքսեայ ժապաւէնով
զգակ մը եւ ոսկեճամուկ կաշիէ կօ-

Հիկներ : Զմուռանք բսելու նաեւ որ
ըրլորդ այս հագուստներն անվթար
մնացած են մինչեւ ցարդ :

Քոլորատոյի մէջ (Միացեալ Նաւ-
հանգներ) ծրագիր մը պատրաստուած
է, որ եթէ ընդունուի, այդ նահան-
գին մէջ ամուսնութեան արտօնագիր
տալու պաշտօնք պիտի յանձնուի
րժիշկ քննիչներու : Մէն մի գաւառի
մէջ պիտի հաստատուի վարչութիւն
մը որ տարրեր դպրոցներէ ելուծ երեք
րժիշկներէ պիտի բազկանայ եւ,
որ կարելի է, վարչութիւնը մէկ կամ
աւելի կին անդամներ պիտի ունենայ
Ամուսնութեան արտօնագիր պիտի
տրուի քսանըհնգէն պակաս տարիք
չունեցող այր մարդոց եւ քսաներկուու
քէն պակաս տարիք չունեցող աղջ
ջիկներու : Արտօնագիր ստանալու
համար երկու սեռէն եղաղներն ալ
պէտք է զերծ եղած ըլլան ինչ ինչ
ախտերէ, ոչ ալ արենակալցութիւն ու-
նենան իրարու հետ :

ԳՈՐԾԻ ՄՈՐԴՈՑ ԲԱԺԻՆ

Սակ շահելու կերպը

1. Մեծ եւ փոքր այս խորհրդավ
կղբաղի — ի՞նչ բնեմ որ ստակ շա-
հիմ, չուտ շահիմ, չատ շահիմ . ստակ
անեցողն իսկ, միլիոնատէրն անդամ
այս խորհրդավ կղբաղի :

2. Զի պիտի խօսինք հոս թէ ի՞նչ
նպատակով մարդիկ ստակ շահիլ կը
ճգնին եւ զիշեր ցերեկ անհանգիստ
կրլան, առողջութիւն, կեանք վրայ
կուտան լոկ ստակի տէր ըլլալու հա-
մար, զի յայտնի է որ խիստ մեծ
մեծ ամասնութիւն իր եսին իննկարկե-
լու համար միայն ստակ շահելու ե-
տեւէ է :

3. Եթէ մեր ես կոչուած կուռքն
պաշտել է ստակ շահելու նպատակ,
լաւագոյն է որ ստակ շահելու կերպ
չուսումնասիրինք, ստակայն կան նաեւ
ումանք որոց ստակ շահելու փափաք
բարեգործելու համար է, ուստի հոս

մի քանի օգտակար հրահանգ կը
արուին սոյն նպատակի իրագործման
նպաստելու համար :

4. Հարստութեան ճամբան, կըսէ
Ֆրանքին, այնպէս պարզ եւ ստոյգ
է, որքան ջաղացքին ճամբան, այն
է, «սպասել, ծախսել, վատանել
և ուտազ քան վաստակն, շահն, եկա-
մուան : Ունիմ 50 սոկի եկամուատ եւ
կը ծախսեմ 51, թշուառութիւն
ստոյգ է : Եթէ 49 ծախսեմ երջան-
կութիւն անտարակուսելի է» :

5. Եթէ ստակ շահիլ խիստ դիւ-
րին ըլլար, զայն պահեն աշխարհի
ամենէն դժուարին բանն է : Ասոր
խնայողութիւն կրսենք, որ հարս-
տութեան ճամբան է, քանի որ
չայլութիւն ամէն անյաջողութեան
եւ ոնանկութեան մայր եւ պատճառ է:

6. Խնայողութեան նշանակու-
թիւն ամէն մարդ ուղիղ չէ բմբռնած:
Ուտեսափ վարնոց, վնասակար նիւ-
թեր գնել, մամէն վազած ճարպն
հաւաքել, ծառայութեանց արժանի
վարձն զեղչել, անարդ, զազիր :

գարշելի կծծութիւն ընել, չէ խնայ-
ողութիւն :

7. Ոմանք լուցկին կը խնայեն,
այլք ճրագն . ուրիշներ թղթի կտոր-
ներ կը գործ ածեն զիր զրելու հա-
մար, սակայն տարին 4-5 սոկի ժա-
պաւէններու, փետարներու եւ զար-
դերու կուտան, որ հարկաւոր չեն.
մեծ ածախ ընթրիքներ կընեն, կառք
եւ ձի իսկ կը պահեն . այս խնայո-
ղութիւն չէ, ասոնք Ֆրանքին «բա-
րայի մը իմաստուն բայց սոկիի մը
յիւար» կը կոչէ :

8. Ուրիշ մ'ալ այսպիսիններուն
համար խօսելով կըսէ . այսպիսիք
նման են այն յիմարին որ քան բա-
րայի հստած ձուկ գնեց րնտանեցը
համար եւ 10 դահեկանի կառք մը
վարձեց զանի տուն փոխադրելու
համար :

9. Ոչ ոք հարստացած է այս
կերպով, կամ թէ եթէ ստակ դի-
զած ալ ըլլայ, ճշմարտապէս երջանիկ
եղած ըլլայ, խնայողութիւն այս է .
«ծախքը նուազ քան եկամուատ» :

10. Հին հանդերձներդ քիչ մ'աւտեն ալ գործածէ , ձեւնաց թող առայժմ մեսոյ , կարկաէ , նորոգէ հանդերձներդ , կերակուրդ պարզ եւ սննդարար ըլլայ . սակաւապէտ եղիր . կարճ խօսքով եկամուտէդ նուազ , պակաս ծախք ըրէ , ի սկզբան դըժուար կուգայ խնայողութիւն , «գոհ ըլլալ» սորդիլ . սակայն շուտավ պիտի տեսնես որ աւելի հաճոյք կայ բանաւոր խնայողութեան մէջ , քան աննպատակ մսխումի մէջ :

11. Տարւոյն վախճանին հաշիւդրէ . եթէ ստոկ շես աւելցուցած եւ հասոյթգ նոյնն է , առ փոքր հաշուետեար մը եւ արձանագրէ օրը օրին ամէն , մինչեւ իսկ չնչին ծախքերդ . Ամիս մը շարունակէ եւ ամսագլխուն թղթի մը մէջտեղէն զիծ մը քաղելով աջ սիւնակին վրայ գրէ «Հարկաւոր ծախք» եւ ձախ սիւնակին գլուխ «Հաճոյից ծախք» :

12. Սոյն երկու սիւնակիներուն մէջ զրէ ամսական ծախքերդ եւ տեսնես որ հաճոյից համար եղած

ծախք , հարկաւոր ծախքերէն շատ աւելի են , այս՝ կրկինն եւ քառապատիկն եղած են :

13. Եւ ինչո՞ւ համար այսքան հաճոյից . զուարմութեանց անպէտ ծախք . Քանզի ուրիշներուն երեւել կուզենք . այլոց աչքն է որ մեզ կը կարծանէ , կըսէ ֆրանքլին . եթէ բուլր մարդիկ , նման խլուրդի , կոյր ըլլային , բնաւ հոգ պիտի չընէինք , գեղեցիկ հանդերձ եւ ճոխ կահ կարսափք ունենալու : Ուրիշներու խօսակցութեան վախն է որ մեզ ցեխէն , տիզմէն դուրս չհանէր :

14. Բայց ինձի քանի մը տարի առաջ վիճակակից եղող անձը հիմակ հարուստ է սրով ինքզինք ինձմէ վեր կը համարի , կարծելով թէ հարսաւութիւն զինք լաւագոյն մարդ մ'է ըրած . ոչ , բարեկամո , հարսաւութիւն մարդու լաւագոյն չէ կարսղ ընել , դու իրեն չափ կատարեալ մարդ ես , եթէ ոչ անկէ աւելի կատարեալ եւ տէր նկարագրի :

15. Համակերպէ վիճակիդ , գոհ

եղիր ունեցածովդ եւ զիրքովդ ։ ջըւլայ որ փորձուիս արտաքուստ անոր հաւասար երեւնալու փորձեր լնել . ոչ . այդ ձախող որոշում պիտի սպառէ ժամանակդ եւ ստակդ , պիտի պարտաւորիս տանդ մէջ անհրաժեշտ պէտքերուդ մէջ խնայողութիւն լնել , որպէս զի արտաքին կեզծ ու պատիր երեւոյց մը պահել կարենաս , խարբելով ուրիշներ ատեն մը , որ ոչ կամ կանուխ վախճան մը պիտի գտնէ :

16. Երանի թէ մեր տիկնայք եւ օրիորդք եկեղեցի երթային Աստուծոյ խօսքն լսելու , տա՞ղ սակայն որ նոքա իրենց սեսին ներկայացուցիչներուն ճոխ արդուզարդն զիտելու համար Աստուծոյ տուն կ'երթան , եւ տուն գալով կրկին իրենց ամուսիններն կամ ծնողներն թախանցել եւ սախուել որ սա եւ նա գնեն , անոնցմէ վար չմնալու համար :

17. Եթէ այսպէս խորհիս , տիկին , օրիորդ , զիտցիր որ շուտ պիտի հասցնես ամբողջ գերդաստան գա-

հավիժին եզերք եւ անկէ ալ վար զահավիժել տաս : Իմաստուն եղիր , ու հասուն տարողութեամբ յիշէ այս կանոն . «Մեր ապրուստ պարտինք համաձայնեցնել մեր եկամուտին , եւ մաս մ'ալ մէկդի զնել անձրեւոտ օրուան համար» :

18. Կենաց պատահարներ կան , ասոնք են անձրեւոտ օրեր կոչածս , ասոնք նկատի չառնելով բալոր եկամուտ մսխոցք , անկախութիւն չի պիտի ունենայ , միշտ այլոց բեռ եւ ծանրութիւն պիտի րլլայ :

19. Ուստի վերջ տուր անպէտ եւ անհարկաւոր ծախուց . հոգ չէ տունը փոքր թող րլլայ , կամ տան մը մէկ յարկին մէջ բնակէ , որ զարդարուած րլլայ պարզ եւ զիւրաւ գնելի կարասիններով . աժան հանդերձ հազիր , պէտք չէ սպասաւոր , ձգէ երեկոյթներ , հրաժարէ թատրոնէ , կառքերով շրջագայելէ , զրօսավայրեր երթալէ , գինիէ , օղիէ ու եթէ կուզես — ծխախոտէ :

20. Բոյնը զիր անգամ մը , փոքր

գումարներ մէկզի դիր, տոկոսի տուր,
շահաւոր բանի մը գործածէ զայն,
եւ տես ո՞րքան մեծ պիտի բլլոյ
զգացած հաճոյք ։ Հին հանդերձ
սիրով պիտի գործածես տառեն մըն ալ,
զով ջուր աւելի հաճելի պիտի թուի
քեզ քան Պօրտօյի բաղանածախ զի-
նին . սաքով պառյա , աւելի առող-
ջարար ըլլալը պիտի զգաս , քան
կառքով պարտելն . բարեկամական
աեսակցութիւն , օգտակար գրքի մր
ընթերցում , անմեղուկ խաղով ժամ
մը զրօսանք աւելի հաճոյ պիտի
թուի քեզ տեսնելով ծախուց մեծ
տարրերութիւն ու զրամիդ աւել-
նարն :

21. Ուստի ապրուսափ սահմանը
շատ ընդարձակ մի գծէր . հարուսաը
կ'աղքատանայ այսպէս ընելով եւ
աղքատն մուրացիկ կ'ըլլայ : Երանի
այս սահմանէն անդին չանցնողին :

22. Դիւրաւ եկածը դիւրաւ ալ
կ'երթայ հին եւ ճշնարիտ առած մ'է
երբ հղարտութիւն եւ ունայնամու-
թիւն թողունք որ տիրեն մեր վրայ ,

ա՛լ հարստութեան ակն ու ազրիւր
կսկսի սպառիլ , ո՞րքան ալ մեծ ըլ-
լայ նա : Յաջուաթիւն աւելի մեծ
փորձութիւն է քան ձախորդութիւն :
Երբ սմանք յաջողիլ սկսին , կ'սկսին
նաեւ ծախուց նոր նոր գուներ հաւ-
րել եւ բանոլ ու ապրուսափ սահման
րնդարձակել : Մէջ մ'ոլ տեսնես որ
եկամուտ կ'րնկղմի ծախուց յործան-
քին մէջ :

23. Պրն. Սմբատ սկսած էր գոր-
ծին մէջ յաջողիլ եւ ստակ շահիլ .
կինը դիտեց զայս , եւ սալօնին հա-
մար շքեղ թիկնաթոռ մ'ուզեց : Պրն.
Սմբատ հաճոյակատար ամուսին մըն
էր , եւ զնեց պահանջեալ թիկնա-
թոռ , սակայն ինձ պատմեց թէ 6000
լիրոյի ճռէ եղաւ այդ թիկնաթոռ :

24. Ի՞նչ կ'ըսես . Պրն. Սմբատ ,
գոչեցի , ատանկ բան կ'ըլլայ : Կէցիր
որ պատմեմ բառաւ : — Եւ սկսաւ այս-
պէս : Թիկնաթոռ տուն բերին .
տեսանք որ միւս աթոռներն անոր
չեն յարմարիր . ուրիշներ գնեցինք .
մէջտեղի սեղան բնաւ ներդաշնակ չէր

աթուներուն, ան ալ փոխեցինք, աւելի շքեղն տեղով գնելով : Փորդը, վարագոյններն եւլն, անպատշաճ էին միւններուն, ուստի անոնք ալ փոխեցինք, վերջապէս տան բոլոր կահ կարասիք փոխել եւ աւելի սուզն եւ աւելի գեղեցիկն գնել պարտաւորեցանք :

25. Է՞՞, ատով 6000 լիրա վճարել չպարտաւորեցաք, շատ շատ 2-300 լիրա : — Կեցիր, անէլք մընէր, գոշեց Պրն. Սմբատ, ատով շմնցաւ խնդիրը : Տուներնիս հին ոճով շինուած եւ փոքր ըլլալուն անյարմար եկաւ մեր նոր եւ թանկագին կարասեաց . ուստի նոր տուն մը կառուցանել ելանք : Պարտէզ, աւազաններ, արձաններ եւլն, եւլն, եւլն. Ճիշտ 6000 լիրա եւ ոչ պակաս ծախոք ըրի այդ մէկ թիկնաթուին երեսէն . կնոջս մէկ խնդիր անխոնէմարար կատարելավս . բայց ատով ալ շմնցան . ասանկ փառաւոր ապարանք մը ծառաներու եւ սպասուհիներու եւ ա'լ բազում ծախուց կը կարօտի, որ ար-

տաքին տեսքերնիս եւ մեր վիճակ միեւնոյն փառաւորութեան մէջ պահնք, եւ հիմակ տարին 2000 լիրա աւելի ծախոք կ'ընեմ, քան այս թիկնաթու տունս դեռ շմտած : Տասն տարի առաջ աւելի քիչ հոգ ունենաւըվ, շատ աւելի հանգիստ եւ միութարական էր կեանքերնիս Այդ թիկնաթու ի վերջոյ մեր սնանկութեան պատճաւ պիտի ըլլար, եթէ վերջին պահուն խելքով զլուխոս չրերէի եւ հետզհետէ պահանջեալ ծախուց առաջին քաջութեամբ հաստ պատ մը շքաշէի :

Հաւ խրատ բազում ամուսիններու համար, իցիւ թէ սկիզբէն նոքա բաւական քաջութիւն ունենան անպէտ ելու եւ անհրաժեշտ հարկաւոր չեղող ոչ մի բան գնել, ո'րքան աժան ալ ըլլայ նա :

ՕՐԻՈՐԴԱՑ ԲԱԼԻՆ

1. Երկու գար առաջ ֆէնէլօն կըսէք . Աչ մէկ բանի համար այնքան անհոգ կը դանուինք , որքան մեր ազջկանց դաստիարակութեան մասին : Այսօր ասոր հակասակն կրնայ ըսուիլ աշխարհի քաղաքակիրթ ազգաց համար : Այսու հանդերձ ֆշմքէտ եւ հիմնական դաստիարակութիւն գեռ շատ քիչ տեղեր յարգ եւ արժէք գտած է մեր օրիորդներէն :

2. Դաստիարակութիւն այսօր մեծաւ մասամբ արտաքին փայլէ , զարդէ , յղկումէ անդին շանցնիր , էական , զործնական , օգտակար մասն անտես է եղած : Ամէն կերպով կապկական նմանողութիւն մը կայ օտարասիրութեան . մայրենի լեզուն , մէկ կողմէ ձգուած եւ գաղզիերէնի է տրուած բազոր ուշադրութիւն . ձեւագիտութիւն , ընտանեկան տնտեսութիւն , մանկատածութիւն , առողջա-

րանութիւն , ա . հ . բնդ ակամբ կը դիտուին , իսկ զաշնակ , երգ , պար , եւրոպական լեզու , եւ նորաձեւութիւն ասոնցմով կը տոջորի մեր օրիորդաց ներկայ սերունդ :

3. Ասոնք արդիւնք են մտքի մշակութեան կարեւորութիւն չարբունութիւն . զպրոց մը թող երթան մեր ազջիկներ և հոգ չէ թէ անոնք մտաւորապէս զարգանալու վրայ են թէ ոչ :

4. Ոմանք այս ալ կր զլանան , ինչ պէտք է ուսում ազջկան համար , կըսեն , եւ լոկ տնական զործերու կը վարժեցնեն զանոնք . եփել , կարել , հիսուել , լուացք , մաքրել , կարիտել : Այսպիսիք զեռ կը խորհին թէ կին ըսուածն աղախին , սպասուհի . գերի ըլլալ սահմանուած է , իր ամուսոյն ստորադաս , առանց դիտելու թէ հիներն անցած եւ ամէն րան նոր են եղած . թէ կինը ընկերական վիճակի զարգացման մէջ կարեւոր գեր կը կատարէ , եւ զէկավարն պիտի ըլլայ ընկերութեան :

5. Աւստի իգական սեռ արականին չափ մաքի մշակութիւն սահանալու է . ոչ թէ մանչերու սորվածն աղջիկներն ալ սորվելու են , ոչ . աղջիկներ անանկ բաներ սորվելու են , որոնցմավ իրենց կնոջական յատկութիւններն կրնան զարգանալ եւ իրենց կոչման կրնան հասնիլ :

6. Այս՝ զպրոցի մէջ ստացած հմտութիւնով չէ կարող ըլլալ . պէտք է ինքզինքնին կրթեն , որով կատարեալ գաստիարակութեան տէր կրնան ըլլալ . ինքզինք կրթել . առ ի՞նչ է . պիտի ըսեն մեր օրիորդներ . կեցիք որ բացատրեմ :

7. Դպրոցի երես չահսած օրիորդ մը կայ որ շատ աւելի խելացի . հմուտ եւ կրթեալ է քան բարձր վարժարանի տիֆլուման ձեռքն ունեցող օրիորդներն չբա՞շք է այս . ոչ , հապա պատճառն հաս է որ նա իր սակաւ պատեհութիւններն լաւագոյն գործածեց վերջինէն աւելի կը կարդար . կը դիտէր . կը խորհէր . կամ փոխանակ շատ աղջիկներու նման ժամանակը վատնե-

լու . պարապ անցնելու , ինքզինք կը կրթէր :

8. Վարժարան խորհելու կը պատրաստէ . գործնական կեանքն է ուր աղջիկներ իրենց բուն դաստիարակութիւն ձեռք կը ձգեն , առօրեայ կենաց մէջ զիտելու , մտածելու , ուստամբասիրելու եւ անձը զարգացնելու մեծ ասպարէզ կայ . Վարժարանէն եղած օր , ընթացաւարտ հոչշակուած բապէին , այս բնդարձակ ասպարէզ կը բացուի աղջկանց առջին :

9. Ինքզինք կրթելով շատ մեծ մարդիկ զարգացած եւ յաջողած են . մեծոթեան գալանիք խորհող ըլլալուն մէջ պէտք է փնտաել . այն աղջիկ որ կարեւորաթիւն չի ասր խորհելու , անհնար է որ զարգանայ :

10. Ընթերցումն ալ ուրիշ միջոց մ'է ինքնակարթաթեան . ամէն աղջիկ կարող է բնել զայս : Ժամանակ անցրնելու համար ոչինչ եւ վնասակար գրքեր կարդալուն ընթերցում չենք ըսեր . մտքի մշակութեան պէտք է նպաստէ մեր կարգացածը : Լաւ է

բնաւ չկարգալ քան թէ գէշ եւ ահօ-
գուտ բաներ կարգալ . բարոյական
անկաւմնին շատ կիներ իրենց կար-
գացած զրքերուն կը պարտին :

11. Միաք բարձր եւ ազնիւ գա-
ղափարներով լեցնող գրեանք պէտք
է կարգանք . զիրք եւ լրագիր , հացի
եւ հանդերձի նման , անհրաժեշտ
պէտքեր են . ագիտութեան խաւար
զար անցած է . օգտակար թերթեր
եւ զրքեր շատ առատ են եւ աժան.
ընարէ ընթերցման զրքերդ . ձեռքդ
հասածը մի՛ կարդար :

12. Սակայն մտքի մշակութիւն
չբաւէր , կեանքի մէջ՝ բարձրանալու
եւ փառքի հասնելու համար պէտք
է սիրա եւս մշակուի եւ կրթուի :
Իմացական զարգացում , մտաւոր
զարգացում , ոչ ոք անարդ բան կը
համարի . սա է էն թանկազին գու-
հար որով կը զարդարուի օրինորդ մը .
սրտի կրթութիւնն է սակայն որ մտա-
ւոր զարգացում անթերի եւ կատար-
եալ կընէ :

13. Մաքով եւ սրտով զարգա-

ցած օրինորդ մը , կին մը , անգին գո-
հարի մը ալրացած է , եւ ուր որ
ալ ապրի , ամէն կողմի հիացման ա-
ռարկայ պիտի ըլլայ . զիւաց գեղեց-
կութեան , մարմինի արտաքին փայլ
կը նսեմանան մտքով եւ սրտով կըր-
թուած կնաջ քով . այսպիսի մի կին
է ընկերութեան առաջնորդ հրեշ-
տակ . մարդկութեան մեծագոյն բա-
րերար :

14. Ցաւալին սակայն եւ ողբա-
լին այս է որ մեր օրինորդներ , ապա-
գայ սերնդեան զէկաւարներն , մտա-
ւոր եւ սրտի զարգացման կարեւո-
րութիւն չտալով , նորաձեւութեան
սատանային ճիրաններուն մէջ են
ինկած սւսկից խոյս տալ զրեթէ ան-
հնարին է եղած : Ուրիշներու ըրածին
հետեւիլ . կապկօրէն նմանելու հե-
տեւիլ այլոց , մանաւանդ օտարնե-
րուն , վարնոց զասակարգին , հազ-
ուելու , ապրելու , խօսելու , շարժե-
լու հղանակին : Այս է նորաձեւու-
թիւն ըստածնիս :

15. Այս փափաք այնքան հզօր

կերպով գրաւած է սմանց սիրտ .
միտք , խորհուրդ եւ փափաք . որ
ամէն ազնիւ . զգացում մարած , ան-
դամալոյծ է եղած . ուրիշ նիւթի
վրայ խորհելու եւ խօսելու ժամանակ
չունին . նորաձեւութեամբ միայն
կր զրագին : Մեծ կիներ րնաւ նորա-
ձեւութեան խնկարկու մայրեր չեն ու-
նեցած :

16. Օր. Լօրէնո հարուսա դիւտ
նագէտի մը աղջիկ էր . եւ Բարիզ
կը րնակէր . հայրը 600 ոսկի տուաւ
որ զիւրութիւն ունենայ նորաձեւու-
թեան ամէն փափաքներ յագեցնե-
լու . օրիորդը հաւաքեց Բարիզի աղ-
քատ , անոք աղաքները եւ անոնց
ձրի դպրոց մը յացաւ այն դրամով :
Մերժեց նաեւ ազնուականներու հետ
ամուսնութիւն կնքել . եւ Աների-
կացի պատմարանի մը հետ ամուս-
նացաւ , եւ մեռած ատեն կտակեց որ
պարզ սնտուիի մը մէջ դրուելով
համեստ եղանակով մը գերեզման
դրուի :

17. Նորաձեւութիւն նաեւ ա-

ոսղութեան թշնամի է . հակառող-
ջական հագուստներ . որք ցուրտէն
չեն կարող պաշտպանել եւ տաքին
խիստ ծանր եւ հեղձուցիչ են , լոկ
այլոց երեւնալու համար գործածուե-
լով անձին առողջութեան կը վնասեն .
Այս՝ Տօռային անհամար կոտորածներ
ովք կրնայ թուել . Անցեալ տարուան
1900ի «Հանրագիտական Օրացոյց»
քօրուէի վրայ խօսեցաւ . յիշեցէք հոն
ըսուածներ :

18. Նորաձեւութեան յատկաց-
ուած ժամանակն ալ նկատողութեան
առնելու է . ժամանակ էն կարեւոր
դրամագլուխն է . զայն սպառել
դրամ սպառելէ աւելի ծանրակշիռ
հետեւանք . կունենայ . Մօռայի հե-
տեւող կին մը բսեր է . եթէ նորա-
ձեւութեան ամէն պահանջ կէտ առ
կէտ ի զործ դնելու րլլամ . ձեռքս
ասեղ . առնելու կամ երես մը բան
կարդալու իսկ ժամանակ չեմ կրնար
գտնել :

19. Մտաւոր եւ բարոյական կե-
նաց ալ մեծ վնաս ունի նորաձեւու-

թեան անյագ բաղձանք . ոչ ժամանակ եւ ոչ փափաք ունին սրտի եւ մտքի զարգացման . ճաշակնին բժացած է , իրենց ամրող միտք եւ էռթիւն հօդոյին են տուած . նա է իրենց կուռք , որոյ առջեւ կը ծնրագրեն միշտ :

20. Նորաձեւութեան գերի եղող կիներ , ուրիշին վրայ տեսածն իրենք ալ ձեռք ձգելու կը ճգնին , առանց նկատողութեան առնելու իրենց ամուսնոյն դրամական կացութիւն . անձնասէր են եւ ինքնահաւան , ընտանեկան կեանք անտանելի կընեն , կը դառնացնեն . անձնուրացական , բարեգործական ձեռնարկներ ինպաստ եւ ազգատին անհնար է ասոնցմէ ակնկալել . չորցած , ցամքած աղբւրներ են :

21. Բարեսիրական նորատակի համար մարմինը փոքր ինչ յոգնեցրնելէ , անհանգիստ ընելէ իսպառ կը հրաժարի , զայն վնասակար համարելով , եւ անդին քանի , տանջանքնիրու կենթարկէ իր մարմին լոկ նո-

րաձեւութեան համար : Թող մինչ արշալոյս պարելն ; ցուցահանդէմներ , թարտոններ յաճախելն , որոնք ամէն ուրիշ բաներէ աւելի կը վնասեն առողջութեան :

22. Հապա այն մէջքերնին սեղմ'լն . ի՞նչ անլուր տանջանք նրակազմ , կանացի մարմնոյ , որով թոքերն անշարժութեան կը դատապարտուին եւ աղատ շնչառութիւն կարգիլուի . սկրթուկի մը չեն զիմանար , բայց ականջնին ծակել կուտան սկի եւ գոհար անկէ կախելու համար . եւ ոտքերնին , նման ջնական բարբարոս սովորութեան . կը ճնշեն , նեղ կօշիկներու մէջ կամփոփեն , չնորհալի՛ երեւնալու համար . առանց նուռըներուն ահոելի ցաւին կարեւորութիւն տալու — ասոնց ամէնուն սիրով կը հանդուրժէ ի սէր նորաձեւութեան :

23. Ուստի մեր ազնիւ օրիորդներ վերոյիշեալ մի քանի հրահանգներէն թող սորվին թէ նորաձեւութեան գերի ոլլալով ինքզինքնին կը

զրկեն կնոջական յատկութեանց զարգացումէն : Զգոյշ եղէք ճշգայի անձնատուր ըլլալէ . քանզի այսպէս ընելով կենաց մէջ օգտակար դեր ունենալէ կը դադրիք :

24. Սխալ չհասկցուինք . վայելուչ հագուստ , վայելուչ շարժում , վայելուչ ապրիլ պարտք մ'է իւրաքանչիւր օրիորդի եւ կնոջ : Ես ճշգանչեմ սիրեր բսելով հանդերձ եւ արդուզարդ անիմնամ թողուլ , աղոտու , պատուած , մազեր չշտկած , տան մէջ եւ դուրս երեւալ ամօթ եւ պախարակելի է : Մայրայեղութենէ զգոյշ եղէք :

25. Ո՞հ , կը զոյէ բանաստեղծր , ո՞հ , ի՞նչ սիրուն է ինոջ յղիուած բազուիներ երբ ծածկուած են պարզ , անզարդ , անպաճոյն հագուստին մէջ . այս է իրենց լաւագոյն պատեան եւ յարմարագոյն պահարան . ադամանդ , գոհար , պարզ տուփի մը մէջ . գանձ հողէ ամանի մէջ . սիրունութիւն պէտք չունի օժանդակութեան , երբ անզարդ է , լաւագոյն կերպով զարդարուած է :

ԵՐԻՏԱԾԱՐԴԱՑ ԲԱԺԻՆ

1. Խաղը օգտակար է երբ մարմոյ մկանունկներուն զօրութիւն կը պարզեւէ . սակայն եթէ խաղի պատճառաւ գործերնին եւ զբաղւեմին կը մնունան , ան տաեն խաղ փոխանակ օգուտաի՛վսաս , եւ փոխանակ օրհնութեան՝ անէծք կ'ըլլայ :

2. Ամէն բանի չարաչար գործածութիւն կը դատապարտուի . Պղատոն տեսնելով որ իր աշակերտաց մին սաստիկ եռանդով կը խաղար , խսիւյանդիմանեց զայն եւ ըսաւ , միթէ բանի տեղ չե՞ս զներ խաղալու կիրքը , որ կոմաց կոմաց ունակութեան կը փոխուի :

3. Խիստ ցաւալի է սակայն որ խաղեր առողջաբանական դիրքէն ելած ուրիշ կերպարանք առած է , մինչ մենք խաղ բսելով մարմնավարժութիւն կը հասկնանք , այժմ խաղ եղած է մի արհեստ դրամ շահելու :

4. Սեղանի մը շուրջ են շարուած զիշեր ատեն . ո՞րչափ արտօւմ է զէմքերնին . ախուր լուսթիւն կը ափրէ . կ'անցնին ամբողջ զիշերներ եւ գեռ անոնք անշարժ հատած են ահշերնին . յաջողաւթիւն , անյաջողաւթիւն , ուրախութիւն , արտօւթիւն միմեանց կը յաջորդեն . շահելու տէնչն եւ կորսնցնելու երկիւզն է ափրող հոգին իշաղատան :

5. Ասոնց կը յաջորդեն վէճեր , գժառւթիւններ , նախապինք , կոխ . հոգւոյ զանազան յուզմունք որ շարունակ խաղացողներուն դէմքին վրայ կը պատկերանայ , ո՞վ կարող է նկարագրել . Քանի անձնասպանութիւններ խաղամոլութեան հետեւանքն են եղած . Մօնթէ Քարլօփ խաղատան զոհերուն ահսելի պատմութիւններն միշտ կը կարդանք լրագրաց մէջ : Ո՞վ երիասարդ , քաշուէ այդ յորձանքէն դեռ իսպառ չկորսուած :

6. Երիասարդաց մի ուրիշ թրշնամին գինին , օղին եւ ո՛ եւ է ոգեմց ըմպելին է , պահ մը կուրախա-

ցընեն ասոնք սակայն յետոյ կը կատաղցնեն զմարդ : Երբեմն խորհրդոց պայծառութիւն եւ կենդանութիւն կուտայ զինին , բայց յետոյ ծաղկելի , յիմարական , այլանդակ ու մեղսալից խորհուրդներով կը լիցնէ մեր սիրտ :

7. Մեր մէջ զրուած պատուական ջահն , խմացականութիւն , կը նսեմացնէ , կը խաւարէ իր թանձր մասախուզով . այս լոյս մարելով աչքերնիս կը դառնոյ , քայլերնիս զողբողուն կ'ըլլայ , գաղափարներնիս չփոթ , դասողութիւն կը խանգարի , կիրք կը գրգորին , եւ անկումէ անկում մինչեւ գահավէժին յատակ :

8. Սպարդացիք պատանիներն եւ երիտասարդներն արրեցաւթենէ ետպահելու համար ծառայ մը կը զինովցնէին եւ անոնց առջեւ կը ներկայացնէին , որպէս զի տեսնեն գինին ազգեցութիւն մարդուս վրայ , թէ ինչ սոսկալի վիճակի կենթարկէ զմարդ , խելքը զլիէն առնելով եւ աւելի անբանի քան մարդու նմանը ցընելով :

9. Մօլիէռ հիւրերն Շարէլի բանաստեղծի յանձնեց եւ մեկնեցաւ : Կերտն խմեցին գլուխներ տաքցուցին եւ սկսան բարցափառուել . Այս . կ'ըսէր Շարէլ բանաստեղծ , ո՞րքան կարճ են մարդուս օրեր . 30 . 40 տարի անդադար եւ դասն աշխատանք վայրկեան մը հանգչելու համար , եւ ան ալ չենք զիսեր : Բոլորն ալ զինիին ազգեցութեան տակ որոշեցին զետը նետուիլ եւ ազատիլ կենաց թշուառութենէ . բոլորը մէկանց գեաը վազեցին , ծառաներն ալ այս խելա . գարներան ետեւէն կ'երթային որ արդէն ջուրը նետուեր էին , եւ քաշելով , քաշքչելով դուրս հանեցին : Կինովներն սուրերնին քաշեցին եւ իրենց ազատարարները հարուածել սկսան : Մօլիէռի իմաց տառին , անմիջապէս հանդիսավայր հասաւ եւ հարցուց թէ ի՞նչ զիտողութիւն ունին : Յանձնացեալ այս աշխարհէն որոշեցինք միւս աշխարհ չուել : Բարի ըսաւ Մօլիէռ , բայց ես ձեզի ի՞նչ եմ ըրած որ զիս հետերնիդ

չէք տանիր , ա՞յս է ձեր բարեկամութիւն , զիս հետ չառած խեղզուիլ կուզէք : Իրաւունք ունիք գոչեց Շաթէլ , զինեմոլի մը յատուկ լեզւով , քիչ մնաց մեծ անիրաւութիւն պիտի գործէինք . եկ , ուրեմն Մօլիէռ եւ ի միասին գետնետութիւնք : Ամենայն սիրով , ըսաւ Մօլիէռ , սակայն եթէ այս վայրկեանիս գետն նետութիւնք , անշուշտ պիտի ըսեն թէ յուսահատ կամ արբեալ մարդիկ զիշերն գետն են ինկեր . եկէք , վազ առաւօտեան ձգենք ու նախաճաշէն առաջ գետ նետութիւնք ի ներկայութեան բոլոր ժողովրդեան , որ արժանիքնիս չկորանցնենք եւ սխալ մեկնութիւն չտան : Բոլորն ալ հաւանական եւ յաջորդ առաւօտ ոչ մին զետ նետուելու վրայ կը խորհէր , քանզի զինիին յիմարեցուցիչ ազգեցութենէն ելած էին :

12. Ահա զինիին կատարած գործեր մեծամեծաց վրայ իսկ : Վայրի ազգեր չկարենալով կապիկ որսալ ուրիշ միջոցով կը զինովցնեն զանոնք

եւ յայնժամ զիւրաւ ձեռքերնին կ'իշ-
նան եւ կը հետեւին որսորդին . սա-
տանան ալ գինին նոյն նպատակի
համար կը գործածէ :

13. Սրբեցութիւնն վնասակար է
նաեւ առողջութեան , եւ կը փճացնէ
մեծ հարասութիւնն իսկ . կը նոււաս-
ացնէ մարդու կորզելով իր պատ-
ուական ձիրքեր եւ անրանի աստի-
ճանին իջեցնելով : Վիճակագրու-
թիւնք ցոյց կուտան թէ արբեցու-
թիւնն է պատճառ ամէն չարեաց ու
ահռելի ոճիրներու . ուստի զգաստ
ըլլանք : «Ում է վայ , ում ում են
դատաստանք , ում գմնդակութիւնք ,
ում են ջախջախանք դատապար-
տուց , ոյր են կապուտակ ականո-
զիք , ոչ ապաքէն այնոցիկ որ յա-
մենն ի դիմւով» կըսէ Սողոմոն : Այս
մոլութեան ունականելէ ետեւ խիստ
գժուար է հրաժարիլ անկէ , քանզի
երկրորդ բնութիւն կըլլայ : Ուստի
հրաժարէ զեռ անկարելի չեղած :

14. Քանի մը խօսք ալ կատակի
վրայ : Սուանց վիրաւորելու ձաղբելն

այնքան գժուարին է որ կատակելն
բոլորովին ձգելն խոնհմութիւն է :
Ուստի կատակ այնողէս ընելու է որ
անոր նիւթ եղողն աւելի գոհ ըլլայ
քան վիրաւորուի : Լա Պրիմէս կըսէ ,
միայն բարեկիրթ անձանց հետ կա-
տակարանեւու է :

15. Շատ զուարճաբանելն ալ
լու չէ , սա թէեւ խօսակցութեան
աղն կրնայ կոչուիլ , սակայն չափա-
զանցը դառնութիւն կը պատճառէ :


16. Խեղկատակութիւն եւս ան-
վայել է եւ վախճանը վրէժինորու-
թիւն կըլլայ : Ֆիլիք Ա. ծագր կընէր
Նորմանաֆոյ գու քսին , Կիյօմի , զե-
րութիւնը եւ պաշարականներուն
կը հարցնէր . Ե՞րբ պիտի ծնի Կիյօմ :
Կիյօմ լուր խրկեց թէ ծննդեան
վայրկեանին կըսպասէ , երբ պիտի
վայ չնորհակալութիւն մատուցանել
Փարիզի եկեղեցին մէջ , փոխան
մոմի , 10,000 նիզակով : Եւ յիրաւի ,
զրաւեց Գաղղիոյ մի քանի մասերն
եւ եթէ մահ վրայ չհասնէր , բոլոր
Գաղղիա պիտի նուածէր :

17. Զարախոս լեզուին պատճառած չարիք անդարմանելի են : Պատշոյ ու անուան նման փափուկ նիւթի մը մէջ ո՛վ կրնայ բաւական զգոյշ ըլլալ : Պատուաւոր անձը մինչեւ իսկ անարժանը անպատիւ ըլլալէ կազատէ, պատիւ չունեցողն է որ զայլու անպատուել կը ջանայ :

18. Ալֆօնս իշխան գոհարավաճառի մը խանութ գնաց իր պաւատականներով . երբ զուրս կելէին, գոհարավաճառ իշխանին ետեւէն երթալով ըստ թէ մեծագին ադամանդ մը գողցուած է : Ալֆօնս իսկոյն ետ դարձաւ, իր մարդոց հետ եւ խեցիէ անօթ մը բերել տալով հրամայեց որ իւրաքանչիւր պալատական ձեռքը մէջը երիշցնէ ու գուրս հանէ . ինքն ալ նոյնը ըրաւ . յետոյ անօթը բերանն ի վար շրջեց եւ ահա ագամանդ գանուեցաւ :

19. Մի չար խօսիր եթէ պատիւգ կը միրես եւ համարումդ կորմանցնել չես ուզեր . մի կարծեր թէ չար խօսելով ուրիշն հաճոյ կըլլաս,

ընդհակառակն կը նախատուիս, կարհամարհուիս : Մի թողուր որ մէկը առջիդ ուրիշին վրայ վեասակար խօսք մ'ըսէ, եթէ լսես, զգուշացիր ուրիշին յայտնելու, եթէ հարկն չստիպէ : Մեռելոց յիշատակն ալ կենդանեաց պատոյն նման արժանի է ակնածութեան : Ակրւմի մը մէջ հանգուցեալ դուքսի մը ագահութեան վրայ կը գանգատէին . ի վկայութիւն իրենց ըսածին, հանգուցեալին յայտնի թշնամին, որ հոն ներկայ էր անձամբ, խօսքի հրաւիրեցին : Սա պատասխանեց . Դուքսը այնքան մեծ անձ մ'էր, որ ես մոռցած եմ իր թերութիւններ :



ՊԱՏՈՒԵԼԻ ՅԱԿՈԲ ԱՊՈՒՀԱՅԱԹԵԱՆ
Ծննդ 1839ին Մեռած 1901ին

ՀԱՐՅԵՔՈՒ ՊԱՏՈՒՄԱՆՆԵՐ

1. Պ. Ե.—Զեր 9 ամսուան զիրու կ զաւակը չըլլայ որ քալելու վարժեցնէք . բնութեան ձգեցէք . մանաւանդ գեր երախաներ կտնպնեցնել եւ քալեցնել շանալու չենք սրունքնին կը ծովին :

2. Պ. Պ.— Զեր զժուարամարտութիւնը ա'յն ահսակէն է որ ճարտար բժիշկի մը կը կարոսիք . ասոր անոր յահճնարարածը մի ընէք :

3. Կ. Ն.— Մրջիւններուն ելած կողմին մօտ աափակ պնակով շաքար ջուր զիր, մէջը կը ժողովին ու կը խեղդուին :

4. Ա. Դ.— Ցրտի խածուածքի—պառութիկ — համար բաւ է խաշած

գետնախնձորի ջրով սաքն լուղանք
ընել :

5. Բ. Տ.— Ցաւած ականջին մէջ
քանի մը կաթիլ անուշ նուշի իւզ
կաթեցուր և ականջը բամպակով
խցէ որ պազ օդ մուտք չգտնէ :
Իւզը քիչ մը տաքցուր :

6. Մ. Թ.— Երախայից գանկը^{«կարը»} երկրորդ աարուան մէջ կը
միանայ , եթէ ձեր զաւկինը գեռ
բաց է , կաթին հետ կրաջուր խառնէ
և անանկ կերցուր . սակայն հմուտ
և մասնագէտ բժիշկի մը պարտիս
զիմել :

7. Տերեն .— Զեր վարժարանին
մէջ Սնող . լեզուն կարճ ժամանակի
մէջ յառաջ տանելու համար «Ոսկե-
զէն Բանալի» էն ուրիշ յարմար դիրք
չկայ . արդէն բոլոր Հայ վարժարան-
ներուն մէջ այս գասազիրք կը գոր-
ծածեն : Դիմել Մատթէոսեան գրա-
տուն :

8. Խ. Ե.— Շնորհալի քալուածք
կը պահանջէ մարմին ուղիղ զիրքի
մէջ պահել , բայց ոչ փայտի նման .
զլուխն ալ անանկ բանելու է , որ
աչքերն միշտ դէպ յառաջ ուղղեալ
ըլլան :

9. Կ. Պ.— Ոտից լոգանգ խիստ
նպաստաւոր է առողջութեան ,
քրաինք և ազտ , ծակաիկներ կը
դոցին . ոտից մաքրութիւն կարդիւէ
պաղառուրիւն և ջերմ :

10. Ա. Ա. — Տուն մը կարգա-
ւորեալ պահելու համար

1. Ամէն բան իր ժամուն ըրէ .

2. Ամէն բան իր ժամանակին
գործածէ .

3. Ամէն բան իր սեպհական
աեղը դիր :

11. Փ. Կ.— Նոր արդուկներդ
միշտ կը ճաթին . անշուշտ . ասկէ
յետոյ երբ նոր արդուկ դնես , նախ
քիչ կրակ դնելով սկսէ և հետզե-
աէ աւելցուր կրակը , մինչեւ որ մե-
տաղը լաւ մը վարժուի ջերմութեան :

12. Թ. Պ. — Կոյանոցներու, արտաքինոցներու գարշահոտութիւնը կը ջնջէ Սիւլֆաթ ար փէս — գարա պօյս — կոչուած աժան նիւթը, հողէ ամանի մէջ հալեցուր ջրով եւ լեցուր ջրէն գարշահոտ տեղերը, աախտակներն եւ պատերն ալ որբէ այս ջրով :

13. Ն. Ժ. — Հազի համար աժան դեղ, նաեւ ազդեցիկ . սոխը եփէ վրան մեղք աւելցուր կ'ըլլայ « մաճուն ». ասկէց օրը 3-4 գգալ կեր : Հազար «մառուլ» ալ լաւ դեղ է հազի . խաչէ ջրով մինչեւ ջուրին կէսն շողիանայ . հետը «լէօպէթ շէքէրի» խառնէ եւ օրը քանի մը գգալ խմէ :

14. Պատանի. — «Աշնան Տերեւներ » քեզ նման շատերն փրկած ազատած է կանուխ գերեզմանէ . ա՛ռ հատ մը եւ գործազրէ հոն ըսուածներն . դիմել Մատթէոսեան գրատուն :

15. Թ. Ե. Ակույի մաքրութեան համար ածուխի նուրբ փոշի եւ շաքարի նուրբ փոշի հաւասար չափով միմիւնաց խառնէ , վրան մի քանի կաթիլ հոտաւէտ ջուր սրսկէ եւ սոսով շփէ ակուաներդ վրձինով մը :

16. Տ. Մ. — Ամէն տեսակ միջատի խայթուածքի եւ խածուածքի գեղ է սոխը . շփէ սոսով վէրքը եւ վերքին շուրջը . բորբոքում , կարմրութիւն եւ ցաւ կանցնին շուտ :

17. Խոհարար . — Լեմոն կրնասերկար ատեն պահել կէս կէս ընելով եւ քացախով կէս լեցուած կարսափի մը մէջ շարելով :

18. Ն. Ն. — Կանկառ (Էնինառ), բակլա եւ ուրիշ կանանջեղէն սոտկած ատեն երբ ձեռքդ սեւնայ , լեմոնին վրայ աղ ցանէ եւ ձեռքդ շփէ , խոյն կը ձերմկնայ ձեռքդ :

19. Ա. Ս.— Անշուշտ, հարբու-
խէ չի պիտի ազատիս մինչեւ որ
սենեակիդ տաքութիւն 15 աստիճան,
Ռէօմիւր, չիշեցնես . տաքած սեն-
եակին պատռհաններն ալ ատենը
մէյմը բաց 5 վայրկեանի չափ :

20. Պարտիզանն. — Իշամեղու-
ներն ծառերէն հեռացնելու համար
գեղի շիշեր կիսով չափ ջրով լեցուր,
եւ շիշին բերանը ու վիզը մեղը քսէ
եւ ծառէն կախէ . իշամեղուները
ներս մտնելով կը խեղզուին :

21. Կուկակար. — Ներկիդ մէջ
քանի մը կաթիլ քարիւղ դիր . ասով
ներկուած կօշիկներ շուտ կը փայլին,
եւ գեղեցիկ, սեւ դոյն մը կստանան :

22. Դեռատի մայր. — Քու հար-
ցերուդ պատասխանելու համար օրա-
ցոյցին 10-20 երեսն պէտք է յատ-
կացնել պատասխաննին. այս չէ հնար.
«Մայրիկին Առաջնորդը» երկու զու-
րուշի կը ծախուի ամէն գրավածառի

քով. գնէ հատ մը եւ քու բոլոր
դժուարութեանցդ մէջ լու առաջ-
նորդ մը պիտի ունենաս : Այս գրր-
քոյլին հետեւելով բազում մանուկ-
ներ ստոյդ մահէ մը ազատուեր են:

23. Գ. Վ.— Թիթեղեայ անօթ-
ներն նախ մոխրաջրով մաքրէ ; ապա
բարակ, շատ բարակ ծեծուած աղ
առ եւ բուրթէ լաթով մը անօթը
չփէ մինչեւ որ արծաթի պէս փայլի

24. Ա. Ն.— Հաւկիթին ճերմա-
կը քսէ վէրքերուն վրայ, ասով օ-
գին աղգեցութիւն զազրելով վէրքը
շուտ կը բուժի :

25. Ն. Խ.— Գոյնը նետած սա-
թը (+Եհրէպար)իր նախկին փայլը կը ս-
տանայ եթէ 6 շաբաթ հողին մէջ
խորունկ թաղէք :

26. Վ. Ղ.— Սպունդ մը շաքար
ջրայ մէջ թաթիս եւ մըջիւններուն
եղած տեղը դիր, երբ լաւ մը վրան

հաւաքուին, սպոնքը տաք ջրոյ
մէջ դիր :

27. Յ. Յ.— Կօշիկներդ ջրոյ
անթափանց կրնաս ընել, առ ճարպ,
խոզի իւղ եւ մեղրամոմ. հալեցուր
եւ վրան քիչ մը բեւեկնիի իւղ ա-
ւելցուր. կօշիկիդ երեսին քսէ :

28. Ե. Ո.— Բոլոր զիշեր վա-
սող լո՞յս է ուզածդ. ո եւ է մամ
կրնայ այդ նպատակի ծառայել. կը
բաւէ պատրոյզին շուրջը, մինչեւ
սեւցած մասը, բարակ աղ դնել :

29. Դ. Ժ. — Կապոյտ հաղի աղ-
դու գեղ այս է. կէս քաշ ջրոյ մէջ
զիր 12 պճէղ սխառը եւ արցակ մը
զաթրին եռացուր եւ օրը 3 դգալ
խմցուր :



ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

Միջակ քալող մարդ մը մէկ	Մէքը
երկլարկեանի մէջ կերթայ	1
Հասարակ քալուածքով ձին	1.2
Շուտ քալող մարզը	2
Ընդուած ընթացող ձին	3.5
Թեթեւ հովլը	4
Քառասութբակ արշաւող ձին	4.5
Պարզ շոգենաւը	5
Առագաստանաւը	8
Մընթաց շոգենաւը	10
Զիկող մը սասին վրայ	12
Վաճառաբարձ կառախումբը	10
Փոթորիկը	17
Մարդատար կառախումբը	18
Թղթատար աղաւնին	18
Երկանիւ	20
Զին ձիարշաւի ատեն	25
Ճեպընթաց կառախումբը	26
Ծիծեռնակը	45
Զայնը	330

Նորահնար հրացանին գնդակը	430
Թնթանօթին գունաը	450
Աշխարհի շրջանին արագութ.	450
Լոյսը	300,000
Ելեքտրականութիւնը	400,000

Քրիստոնէութիւն, իր բոլոր ճիւղերով, 550 միլիոն դաւանող ունի. երկրիս բնակչաց 34 առ 100 քրիստոնեայ են :

Աշխարհիս ամենէն կարեւոր տարածուած եւ գործածական լեզուն է Անգլիարէնն . 150 միլիոն մարդիկ կը խօսին Անգլիարէն. Չիներէն թէեւ 40 միլիոն խօսողներ ունի. ո՛ եւ է կարեւորութիւն չունի, զի կղզիացեալ, չեզոքացեալ լեզուաց դասակարգին կը պատկանի, եւ եւրոպական ուրիշ լեզուաց չափ անգամ յարգ եւ արժէք չունի :

Աշխարհիս ամենէն աւելի հերկուած կամ մշակուած երկիրը Գրադկան է, որուն կէսէն աւելի կամ

53 առ 100 մշակուած է :

Զի, էշ եւ ջորի ամենէն աւելի Ռուսիա ունի, 22 միլիոն 200 հազար հատ, Միացեալ Նահանգ ունի 16 միլիոն 300 հազար այս կենդանիներէն. Տանիմարքա ունի 410 հազար. եւ իր ծաւալին հետ բազգատելով, Տանիմարքա աշխարհիս առաջին երկիրն է ձի, էշ եւ ջորի արտադրելու մասին :

Ամենէն աւելի արջառ ունի Միացեալ Նահանգ, 45 միլիոն չ50 հազար. ապա Ռուսիա 33 միլիոն 700 հազար. ծաւալի բազգատմամբ Հռլանտա ունի ամենէն շատ արջառ՝ 1 միլիոն 610 հազար հատ :

Էն շատ ոչխար եւ այծ ունի Ռուսիա, 60 միլիոն. ետքը կու գայ Միացեալ Նահանգ, 38 միլիոն : Էնդարձակութեան նայելով մեծն Բրիտանիս ամէնէն շատ ունի, 31 միլիոն :

Են շատ խոզ ունի Միացեալ Նահանգ՝ 40 միլիոն . ետքը կուզայ Գերմանիա , 14 $\frac{1}{2}$ միլիոն . ասրածութեան համեմատ Ռումանի , որ 1 միլիոն 100 հազար խոզ ունի :

Ամենէն աւելի ցորեն կ'արտազրէ Միացեալ Նահանգ , արեկան 230 միլիոն հարիւրալիզր . ապա Ռումանիա 220 միլիոն հարիւրալիզր , ի վերջոյ Թրանսա , 144 միլիոն :

Ռումանիա կարտազրէ 260 միլիոն հարիւրալիզր հաճար «Հայոց» , երկրորդն է Գերմանիա , 98 միլիոն : Վարսավ «Էստլան» կարտազրէ Ռումանիա 251 միլիոն հարիւրալիզր , երկրորդն է Միացեալ Նահանգ , 236 միլիոն , երրորդ տեղը կը բանէ Գերմանիա 113 միլիոն :

Եգիպտացորեն կարտազրէն էն շատ Միացեալ Նահանգ 645 միլիոն հարիւրալիզր , երկրորդն է Աւստրօ-Հունգարիա 53 միլիոն :

Աշխարհիս մէջ Գերմանիա ամենէն աւելի գետնախնձոր կարտազրէ 344 միլիոն հարիւրալիզր , յետոյ կուզայ Ռումանիա 260 միլիոն , եւ ապա Աւստրօ-Հունգարիա 160 միլիոն :

Մրանսա կարտազրէ էն շատ զինին 33 միլիոն հարիւրալիզր , ապա Իտալիա 31 միլիոն , յետոյ Սլանիա 24 միլիոն :

Հարկու Գերմանիա էն շատ գարշուր կը պատրաստէ , 67 միլիոն հարիւրալիզր , յետոյ Միացեալ Նահանգ , 60 միլիոն , ապա Մեծն Բրտանիա , 58 միլիոն :

Երկաթ (բայ) արաւազրող առաջնակարգ երկիրն է Միացեալ Նահանգ 97 միլիոն խորանարդ մէզր , ապա Մեծն Բրտանիա , 90 միլիոն , յետոյ Գերմանիա , 74 միլիոն :

Հանքածուխի արտազրման մէջ Միացեալ Նահանգ առաջին տեղ կը 8

բանէ, 2085 միլիոն խորանարդ մէջը,
երկրորդն է Մեծն Բրիտանիա, 2050
միլիոն, ապա Գերմանիա 1200 մի-
լիոն :

Ա. ԹԷՐՁԵԱՆ

Աշխարհի էն լայն փողոցն է
Ավրինիւ տը Բառի 100 մէջը լայն .
Ունիթը տէն Լինզը, Պէրլին, 65
մէջը . Իինկ Սթրասսէ, Վիէննա,
57 մէջը . Ուաշինգթընի մեծ փողոց-
ներն 50 մէջը, Անտրասի Սթրասսէ,
Պուտարէսթ, 43 մէջը, Լոնսոնի էն
լայն փողոցը 38 մէջը լայն է :

Աշխարհի խօզակի բերքն է 285
միլիոն քիլօ : Թուրքիա կարտաղրէ
12 միլիոն, Իտալիա 42, Ֆրանսա
9½, Սպանիա 1, Յունաստան 300,000
Փօրթուկալ 200,000, Զուիցերի
250,000, Պուլկարիա 500,000, Ռու-
սիա 2½ միլիոն, Զին 140 միլիոն,
Ճապոն 42 միլիոն, Հնդկաշխն 12
միլիոն, Հնդկաստան 10 միլիոն,
Միջին Ասիա 5½ միլիոն, Պարս-

կաստան 4½ միլիոն, Աֆրիկէ
100,000, Ամերիկա 3 միլիոն 600
հազար, Թօրէս 20,000, այլեւայլ
տեղեր եւ վայրի թիթեռնիկներէ 35
միլիոն քիլօ:

Աշխարհի բնակիչներն սա՛ ցեղե-
րէն կը բաղկանան, Գերման.ք 189 մ.,
Լիթանի 3 մ., Թէլթք 9 մ., Ալպա-
նէղ 1 մ. 800 հ., Իրանեան.ք 26 մ.,
Հինասու 240 մ., Աէմական.ք 26 մ.,
Քամեան.ք 20 մ., Մօնկուլ.ք 430 մ.,
Ֆիննեան.ք 12 մ., Ճապոն.ք 53 մ.,
Թիգէթացի.ք 10 մ., Մալայեան.ք
30 մ., Ամերիկեան բնիկներ 8-10 մ.,
Խափշիկ ցեղ 100 մ., Պաս.ք եւ Դրա-
վիա.ք 50 մ., Սինկալէզ.ք 2 մ., ի
վերջոյ Էսքիմօներ եւ հիւսիսային
ժողովուրդներ, Հօմէնթօթ.ք, Պուղ-
ման.ք եւ Քնչուներ :

Գլխաւոր կրօն.ք աշխարհի բնակ-
չաց :

Քաթոլի.ք, 245 մ., Բողոքական
150 մ., Յունադաւան 105 մ., Իս-

լամ 210 մ., Հրէայ 7 մ., Պրահ-
մինեանք, Պուտեսթեանք, Զիթօ-
եանք, Քօնֆուցիոսեանք, Լատեանք,
Ֆէթիշեանք եւ այլ կուապաշտք
800 մ. :

Գլխաւոր լեզուք աշխարհի բնակ-
չաց :

Զիներէն 370 մ., Անգլիարէն
150 մ., Գերմաներէն 70 մ., Ռու-
սերէն 84 մ., Հինառու 132 մ., Սրա-
ներէն 45 մ., Պէնկապերէն $44\frac{1}{2}$ մ.,
Ֆրանսերէն 44 մ., Մալայերէն 25,
Թրքերէն 30 մ. :

Եւրոպայի էն մեծ գետերն են.

Վոլկա 3570 հմ. երկայն, Դա-
նուք 2800, Տնիյէրէր 2150, Տօն
1860, Տվինա 1780, Բէզօրա 1580,
Ռւրալ 1500, Հոէնոս 1300, Վայք-
որլ 1125, Էլսա 1165, Լուտո 1002,
Տնիէսթէր 1100, Մնացեալք 1000
հմ. վար են :

Եւրոպայի էն մեծ լիճերն են.

Լազոկա 18 հ. □հմ. Օնէկա 10 հ.
Վէնէրն 6240, Բայրուդ 3500,
Վէթիշան 1920, Սէլառ 1170, Իւ-
մէն 920, Բլաթըն 661, Ժընէվ 576,
Պուլն 540. Մնացեալք 500էն վար :

Եւրոպայի էն բարձր լեռներն են.
Մօնալսն 4810 մ., Մօնմէ Ռօզա
4538, Մաթթըրհօրն 4432, Ֆինիս-
թէրարհօրն 4275, Եռնկֆրառ 4167,
Պէրնինա 4052, Կրուկոքնըր 3797,
Վէթթըրհօրն 3708, Կրոս Ֆէնէտիկըր
3659, Ատամէլլօ 3557, Բայնվալտ-
հօրն 3398 Մօն Բէլա 3053 :

Եւրոպայի մէջ խօսուած լեզու-
ներն .

Գերմաներէն 60 մ., Անգլիերէն
40 մ., Իտալերէն 33 մ., Ֆրանսե-
րէն 42 մ., Սրաներէն 17 մ.,
Բօրթուկէղերէն 5 մ., Շուէտերէն
 $5\frac{1}{2}$ մ., Բուլէներէն $9\frac{1}{2}$ մ., Նոր
Յունարէն 4 մ., Հոլանդերէն 6 մ.,
Ռուսերէն 88 մ., Բօլօներէն $16\frac{1}{2}$ մ.,
Զէխերէն 8 մ., Մանառերէն 8 մ.,

Թուրքերէն 12 մ. Ասոնցմէ զատ կը խօսուին նաև զանազան լեզուներ :

Մոսքվա գետին վրայ Գաղղիացիք իրենց Մոսքուայէ նահանջած միջոցին 30,000 մարդ կորսնցուցին : Լայփցիկի ճակատամարտին մէջ 1813 ին Գաղղիացոց կորուստն էր 65,000 մարդ երեք օրուան միջոցին : Աւաթէրլիցի մէջ Գաղղիացւոց կորուստն էր 28,850 մարդ : Փլէ՛մայի մէջ սպանուած եւ վիրաւորուած Ռուսերուն թիւն էր 18,000էն 20,000 մարդ : Կրավլութի մէջ Գերմանացւոց կորուստն եղաւ աւելի քան 20,000 եւ Գաղղիացւոցը՝ 19,000 : Ամերիկան քաղաքացին պատերազմին մէջ Սթոր գետի ճակատամարտին ատենը Հիւսացինները կորսնցուցին 13,249 մարդ, եւ Հարաւայինները՝ 10,266 :

ԵԵՐԱՄԻ ՀՈՒՆՏԵՐՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Օսմ. Հանրային Պարտուց Վարչութիւնն հրատարակած է հետեւ

եալ ցուցակը, որուն մէջ շահեկան տեղեկութիւններ կան բնիկ շերամահունտերու վրայ :

Բռնուած հունտ			
Երջանու	Բնիկ	Օրոր	Գումար
ՊՐՈՒՍԱ	—	—	—
1900ին	133.133,19	38,10	133.472,4
1899ին	107.021, 6	321,22	107.343,3
ՏՐԲ. 1900ին	26.112,13	283,12	25.829,4

Արտածուած			
ՊՐՈՒՍԱ	Օմ. Նահանգներ	Օրոր Երիտրեներ	Գումար
—	—	—	—
1900ին	33.570,20	392.241,10	
1899ին	27.825, 5	400.048,14	
ՏՐԲ. 1900ին	5.745,15	7.807, 4	

Բռնուած հունտ			
Ի Զ Մ Ի Ց	Բնիկ անիք	Օրոր անիք	Գումար
1900ին	62.247,13	68,10	62.315,23
1899ին	47.051, 5	1.648,20	48.700
ՏՐԲ. 1900ին	15.196, 8	1.580,10	13.615,23

Արտածուած			
Ի Զ Մ Ի Ց	Օմ. Նահանգներ	Օրոր Երիտրեներ	Գումար
1900ին	4.800,10	—	26.985
1899ին	14.575, 5	—	2.364
ՏՐԲ. 1900ին	9.774,20	—	24.621

Բնակչութեած նունատ			
ՊՐՈԽՍԱԼ ԵՒ	Բնէլ	Օրոք	Գումար
ԽԶՄԻՑ Գ-Ե-Ն-Ե-Լ	ս-ն-է-լ	ս-ն-է-լ	
1900/ն	195.381, 7	106.20	195.488, 2
1899/ն	154.072, 11	1.970, 17	156.243, 3
Տար. 1900/ն	41.308, 21	1.863, 22	39.444, 24

Արտածում

ՊՐՈԽՍԱԼ ԵՒ ԽԶՄԻՑ	Օ-Ն- Ն-Ն-Ն-Ք.	Օ-Ր-Ո-Ր Ե-Ը-Ը-	
Գ-Ե-Ն-Ե-Լ	ս-ն-է-լ	ս-ն-է-լ	
1900/ն	38.371, 5	419.226, 10	
1899/ն	42.400, 10	402.412, 14	
Տար. 1900/ն	4.024, 5	16.813, 21	

Այսպէս, Պրուսա եւ Իզմիտ 1900 ին արտադրած են 652.979 ունկի տեղական հունատ, Պաղտատի տեսակն 195.382 ունկի հունար բանուած է տեղւոյն վրայ, իսկ 457.597ն արտածուած են, 38.371ն Օսմ. միւս նահանգներն եւ մնացեալն օտար երկիր : 1900ի արտադրութիւնն 54.000 ունկի աւելի է 1899էն : Արտածու մն ալ 12.600 ունկի աւելցած է :

* * * Քննենք այս արտածման մանրամասնութիւնը, նախ սկսելով Թուրքիոյ միւս նահանգներն արտածուած հունակերէն :

Օ-Ն-	Օ-Ր-Ո-Ր-Յ-Կ-	Ի-Ն-Գ-Ր-Ե-	Գ-Ո-Մ-Յ-Ր-
Ն-Ն-Ն-Ն-Ն-Ե-Ր-	ս-ն-է-լ	ս-ն-է-լ	ս-ն-է-լ
Խտիրն	13.821, 15	390,—	14.211, 15
Չ-Ա-Թ-Ա-Յ-Թ-	34, 20	—	34, 20
Դ-Ա-Ր-Դ-Ա-Ն-Է-Լ	60,—	—	60,—
Մ-Ի-Մ-Ի-Լ-Ի-	31, 5	3, 45	34, 20
Ի-Ջ-Մ-Ի-Ր-	1.446	189, 15	1.635, 15
Մ-Ե-Լ-Ա-Ն-Ի-Կ-	11.755, 5	1.942, 20	13.698,—
Ե-Ա-Ն-Ե-Վ-	288,—	32, 40	322, 10
Ա-Ր-Բ-Ի-Վ-Ե-Ղ-	72,—	—	72,—
Հ-Ա-Ր-Ե-Վ [գոս]	690,—	720,—	1.410,—
Պ-Է-Ր-Ո-Թ-	327, 5	2, 10	329, 15
Ա-Մ-Ա-Ն-Ա-	384,—	—	384,—
Ս-Ո-Ր-Ի-Ա-	61, 5	—	61, 5
Գ-Ա-Ա-Մ-Ե-Մ-Ո-Ն-Ի-	14, 10	304, 20	319, 5
Է-Խ-Կ-Ի-Ր-Ի-	1.485, 15	848, 20	2.034, 10
Գ-Ո-Ն-Ի-Ֆ-	2.262,—	—	2.262,—
Տ-Ր-Ա-Վ-Գ-Ռ-	816,—	54,—	870,—
Տ-Ի-Մ-Ա-Վ-Ե-Ր-Ի-Ր-	60,—	312,—	372,—
Մ-Ը-Վ-Ա-Գ-	36,—	—	36,—
Թ-Ա-Ր-Բ-Ե-Ր-Ղ-	225, 15	—	225, 15
	33.570, 20	4.800, 10	38.371, 5

1900/ն, նախորդ տարիէն 4,029 ունկի պակաս արտածուած է այս նահանգները : Մելանիկ օտար երկրէ ալ մեծաքանակ շերամի հունա կ'զնէ : Սուրբիա միշտ հաւատարիմ կը մնայ քրանսական հունակրուն, զոր միւս ներէն գերագաս կը համարէ : Անց-

նի՞նք Օսմ. հունտերու արտածման՝
օտար երկիրներ :

	1900ին	1899ին
	մայիս	մայիս
Պարս. և Թուսիա	399.266.10	399.490. 4
Ֆրանսա	118. 5	100. —
Ցունաստան	8.988. 5	1.756.20
Պուլկարիա	8.074.10	595. 5
Սերպիա	36. —	—
Գումար	416.483.05	402.412.14

Կրնայ ըստով թէ Օսմ. հունտերու գլխաւոր, զրեթէ միակ գնորդներն են Պարսկաստան եւ Թուսիա Միւսներուն գնածը մեծ բան մը չէ : Ֆրանսա իբր նմոյշ միայն կը գնէ :

Ի մի բան, շերամի հունտերու ճարտարարուեար շատ զարդացեալ վիճակ մը ունի ի Պրուսա : Այս արդիւնքը մեծ մասամբ ձեռք բերուած է Օսմ. Հանրային Պարտուց Վարչութեան ջանքերով :

Ժ.



ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Վաճառական . — Ծո՛ աղ ի՞նչ է, այսօր հագուեր, սիւալէնմիշ ես եղեր. ի՞նչ կայ :

Մոռուցէն . — Է՛, ի՞նչ պիտի ըլլայ, այսօր մուրացկանութեան 25 ամեակն կը տօնեմ :

Պանդոկն էջ . — Ինձի գաւաթ մը օղի տուր, Ռե՛բեկա :

Ռէբէկա . — Սրբազան պատմութիւնը մոտցեր էք . Ռեբեկան ոչ թէ օղի, հապա ջուր տուաւ ուղարկուն :

Ռուսուցէն . — Տղա՛ք, երկակենցալ կըսուին ա՛յն անասուններ որ թէ ցամաքին վրայ եւ թէ ջուրին մէջ կապրին . կրնա՛ք օրինակ տալ, Աշէբէրդներ . — Նաւասարիները :

ԲԵՐՅԵՎԻՆ . — Տեսէ՞ք , այս չիւ
անդին ոտքին մէկը կարծ է եւ¹
ուստի կը կաղայ . ի՞նչ պիտի ընէիք
այսպիսի պարագայի մը մէջ :

ՈՒՍՏԱՆՉ . — Մենք ալ պիտի կա-
ղայինք :

Ա . — Նոր գիւտ մը . առանց կօ-
ճակի շապիկ հնարեր են :

Բ . — (Կնոջ երեսը նայելով)
ասիկայ նոր գիւտ մը չէ , ես շա-
տո՞նց ի վեր կոճակով շապիկ հագած
չեմ :

ՕՇԱՔ . — (Ծննդեան ծառի առ-
թիւ) Մայրիկը ըստաւ քի ծառը մէջիր-
նիս բաժնենք :

ՄԱՆՆՔ . — Զէ , ՕՇԱՔ , ես չեմ
ուզեր . ամբողջ ծառը քեզի ըլ-
լայ . ես մինակ վրայի բաները կ'առ-
նեմ :

Ա . — Օրիորդը զբամօժիտ ունի՞ :

Բ . — Այո՞ , 3000 հետք պիտի բերէ:

Ա . — Ուկի՞ թէ մէծիտ :

Բ . — Պատկերազարդ նամակա-
տումներ :

ՓՈՒՐԻԿ ՊԵՂԱ . — (Հիւրերուն առ-
ջին) Մայրիկ , հօրեղբայրը ինձի միք-
րոսքօփ մը բերաւ , շուտ ըրէ վրայէդ
լու մը տուր որ մեծցնեմ :

ՏԵԽԻՆ . — (Մուրացիկին կերակուր
տալէ յետոց) Ի՞նչպէս էր կերակուրը :

ՄԱՐԴԱՐԵՒՔԻ . — Շնորհակալ եմ , շատ
համով էր . վա՞զը ի՞նչ պիտի ուտենք :

ԿԻՆԸ . — Վեց ամիս է որ այս թու-
թակ գնեցի ձեզմէ եւ դեռ բառ մը
չարտասանեց :

ՎԱՀԱՆԱԿԱՆ . — Կերեւի թէ պատե-
հութիւն չառեիք որ քիչ մ'ալ տ'ան
խօսի :

ՀԵՆՆԵՐԸ . — Տօգմէօր , յիշողու-
թիւնս բոլորովին տկարացեր է :

ՏԵՇԻՆԵՐ . — Է՞ն , ուրեմն ինդրեմ
նախ վիզիթաս վճարեցէք , եաքը
գուցէ մոռնաք :

Նոր կեսան . — Զես զիտեր թէ ի՞նչ
կը քաշէի երբ իրիկունները միս մի-
նակ նստած կոճակներս կը կարէի :

Նոր հարսը . — Օ, ասկէ ետքը ան-
հոգ եղիր , սիրելիս , ես ասեղիդ
դերձանը կանցնեմ :

Հայր . — Ե՛ , Լէոնիկ , հաւան եցա՞ր
դպրոցիդ :

Լէոն . — Հիշ ալ չէ . վարժապետը
դիս ծեծեց :

Հայր . — Հոգ չէ , քեզ կըթելու
համար է :

Լէոն . — Ի՞նչ աղւոր բան . կրթու-
թիւնը ետեւէ՞ն կակսի :

Տէկն . — Թագուցէկ , գնաւ՝ նայէ ,
ջերմաշափը ինկե՞ր է թէ ելեր է :

Թագուցէ . — (Ետ գառնալով) Ո՞չ ,
ամիկն , ուր է նէ հոն է , պատին վրայ
կախուած է :

Վալթէր Սքօթ տուն մը մտաւ .
ծառան վաղեց եւ քաղաքավարու-
թեամբ դուռը բացաւ ու բարեւ

բոնեց . Վալթէր Սքօթի խօշը եկաւ
եւ հինգնոց մը տալով ըստ . 100
բարան քեզի , իսկ 100 փարան ինձ
պարտական ես :

Աստուած ձեր վսեմութեան եր-
կար կեանք շնորհէ մինչեւ որ այս
պարագս վճարեմ , ըստ ծառան :

Խումբ մը երիտասարդներ , լաւ
մը արբենալէ յետոյ , աթոսի մը եր-
կու սոաք կոտրեցին եւ Զ ժամ հե-
ռուն բնակող բժիշկին լուր զրկեցին ,
որ շուտով գայ , զի մէկուն երկու սոաք
կոտրեցաւ , Բժիշկը , առանց ծիւնի
եւ փոթորիկի կարեւորութիւն տա-
լու , ցատկեց անկողինէն եւ զինե-
տուն հասաւ . Երբ կոտրած աթոսն
իրեն առջեւ կը բերեն , առանց ո՞ւ եւ
է կիրք , յուղում կամ բարկութիւն
ցոյց տալու , աթոսին երկու սոաքերն
աելլը կը գնէ եւ զանով — «ԱՅ —
կը պատէ , ծիշդ ինչպէս վիրաբուժ-
ներն կընեն . յետոյ մի քանի անգամ
կայցելէ իր հիւանդ աթոռը . ի վեր-
ջոյ , զայն բուժեալ հրատարակելով ,

իր հայիւ — մեծկակ մի գումար
կը ներկայացնէ երիտասարդաց, որ
առանց ձայն հանելու կը վճարեն :

Ծխելու անձնատուր եղող մի
եկեղեցական օր մը տիկինէ մը այ-
ցելութիւն կընդունի. եկեղեցականը,
սիկարն ի բերան, գործով զբաղած
էր, երբ տիկին իր գրասենեակ կը
մտնէ :

Ա՛, կը գոչէ տիկին, գուք այդ
կուռքէն բնաւ հրաժարելիք չունիք:
Իրաւունք ունիք, կը գոչէ քա-
հանան ծիծաղելով, սակայն, ներե-
ցէք տիկին, ես իմ կուռքս ո՛չ թէ
կը պաշտեմ, այլ կայրեմ եւ մոխիր
կը դարձնեմ:

Զեր եկեղեցին շատ պազ ըլլալու
է ըստ պապական մի իշխան Աւեա.
քարոզիչի մը : Ինչո՞ւ ատանի կը
կարծես, հարցուց քարոզիչը Քանզի,
ըստ իշխանը, անցեալ օր դիտեցի
որ ներսը ջերմոց — ոչո՞ւ — վառած
էր հոն :

Զեր եկեղեցին շատ իշխանը ըլ-
լալու է, ըստ քարոզիչը, իր կար-
զին, իշխանին :

Ինչո՞ւ այդպէս կը կարծէք, հար-
ցուց իշխանը : Զի անցեալ օր դի-
տեցի որ ներսը շատ մը մոմեր էիք
վառած, մինչ արեգակ փառաւոր
կերպով կը ճառագայթէր, ըստ քա-
րոզիչ : Իշխանը լոեց :

Գիտնական մը Գօլօրատօի վրայ
ճառախօսած ատեն ըստա . «Աշխարհի
մէջ չկայ տեղ մը, ուր այնքան
այլազան բաներ ի միում վայրի զըտ-
նուին . մարմարինն, երկաթ, կաւ,
կաւիճ, կիր, պղինձ, կապար, քար,
պտուղներ, կանեփ, ցորեն, զորին
տաեմ եւ զորն իշխեմ . ըսէք, տեարք,
կայ մի ուրիշ տեղ ասոր նման :

Ունինզիրներէն մին զոչեց . իմ
որդւոյս գրանը եւ գրասեղանը լի-
են այդպիսի զանազան առարկանե-
րով :

Պրահամինը, քօքօի ընկոյզ մ' ի ձե-

ոին , կանգնած է խուռն բազմութեան մը մէջ եւ կուզէ իր կրօնի գերազանցութիւն գործնականապէս հաստատի : Տեսէք , կըսէ , այս ընկոյզին արտաքին կեղեւը , կանանչ եւ լեղի , հին հրէից կրօնքն է : Այս երկրորդ կարծր կեղեւը կը տեսնէք , կըսէ Պրահմինը , կանանչ պատեանը դանակով քակելով , ահա այս ալ քրիստոնէից կրօնքն է : Խոկ այս ընկոյզին միջուկը եւ քաղցրահամ կաթը մեր սրբազն կրօնքն է : Կըսէ եւ կը կոստրէ ընկոյզը : Բայց զարմանալիք . ընկոյզին միջուկ սեւ , փտած եւ կաթը գարշահոտ էր : Պրահմին զլուխը կը ծոէ եւ ունկընզիրներն երեսնին կը թթուեցնեն եւ անձայն , լոփկ կը ցրուին ի միմիանց :

Հետեւը . — Դեղդ բնաւ օգուտ չըրաւ , տօքթօր , կաղաչեմ , հիւանդութիւնս արմատէն բժշկէ :
Բժէշէւը . — Ատանէնկ կուզես . շատ լաւ . (այս ըսելով ջարդու բուրդ կընէ գաւազանովը օլիին շիշ , որ

հիւանդին սեղանին վրայ պատրաստ դրուած էր) :

Սէտառը հայրը . — (Բժիշկին) Դուք ըսիք թէ թոքախս կրնաք բուժել :
Բժէշէն . — Այո՛ , եթէ զեղս հրահանզիս համեմատ գործածէիք :
Սէտառը հայրը . — Բայց որպիս գեղդ գործածելէն ետեւ մեռաւ :
Բժէշէն . — Ես պատուիրած էի որ երկու տարի գործածէ :



բերն 12 սենեակի մէջ զատ զատ
անդաւորելու : Ի՞նչպէս ըրաւ :

1. Զորս 3 ներով 34 գրել :
2. Զորս 9երով 20 գրել :
3. Ինն 9երով 1000 գրել :
4. 12ին մէջ քանի՛ 13 կր գլու-
նուի . — 12ին մէջ 13 չի պարունա-
կիր . — Ո՛չ . 6 անգամ կր գտնուի .
ի՞նչպէս :
5. 9ին մէջ քանի՛ 15 կը գտնուի .
— չի գտնուիր . — ո՛չ . 3 կամ 8 ան-
գամ կր գտնուի , ի՞նչպէս :
6. Հարիւր քառասուն , հարիւր
քառասուն ալ քանի՛ կ'ընէ . — 280
կ'ընէ . — ո՛չ :
7. Ընդարձակ անտառի մը մէջ
յիսուն եւ մէկ հազար ծառ կար .
մէկը հանեցինք յիսուն հազար մնաց
ի՞նչպէս կարելի է այս :
8. Հազարին կէոր ի՞նչպէս վեց
հարիւր կ'ընէ :
9. 4 ստք 4 ստքի վրայ , 4 ստք
եկաւ , 4 ստքը փախաւ , 4 ստքը

ՄՐՅԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԽՆԴԻԲՆԵՐ

Ճաշարանին մէջ սեղան են նստած
21 երիտասարդներ . խոհարարն կու-
զայ սեղանին զլուխոը կր կանգնի .
վճարման ժամն գալով , վարպետր-
դի երիտասարդին մին կառաջարկէ
որ խոհարարէն սկսեալ համրուի եւ
ամէն 7երորդը ելնէ սեղանին եւ ի
վերջոյ ո՛վ որ մնայ նա վճարէ :
Վերջին 7երորդը խոհարարն ըլլալով
21 երիտասարդներն ձրի կը ճաշեն :
Ի՞նչպէս շարու եցան :

Պանդոկ եկան 13 հիւրեր ու
խորդեցին առանձին սենեակներ .
պանդոկապեան ըստաւ թէ 12 սենեակ
ունի . դուն գիտես , ըստն հիւրերը ու
պիտի երթային : Պանդոկապեաը
չուզելով այս իւզոտ պատառն կոր-
մնցնել հնարք մը խորհեցաւ 13 հիւ-

Խօսքը երկրորդ անգամ Պօղոս
առաքեալի ուղղելով նոյն բանը բառ,
այսինքն թէ, ունեցած զրամս կրկնէ
եւ ալ եկեղեցւոյն 6 զրչ կուտամ,
ուզածին պէս եղաւ : Վերջապէս նոյն
խնդիրքը Յովհաննէս առաքեալի ալ
ըրաւ . յետոյ երր եկեղեցիէն ելու
զրամսը բան չէր մնացած, ի սկզբան
քանի՞ զրչ ունէր :

14. Քրիստոսի 67 թուականին
Վեսպասիանոս երր Երուսաղէմ պա-
շարեց . քանդեց եւ մեծ աւեր գոր-
ծեց, Յովսեպոս պատմիչ 40 ընկեր-
ներու մէջ գտնուեցաւ . Վեսպասիա-
նոս ըստ . Յակոն համրելով ամէն
երրորդները պիտի սպաննեմ մինչեւ
որ այլեւս երեք հոգի չի գտնաւի .
Յովսեպոս հնարքով մը այն 40ին մէջ
տեղ մը կեցաւ եւ Վեսպասիանոսի
համրածներէն ազատեցաւ . քանի՞ ե-
րրորդ տեղը կեցաւ :

15. Զորս տակառներ կան . եթէ
Ա էն Բ ր լիցնենք տակաւին $\frac{4}{7}$ ը կը
մնայ, Բ էն եթէ Գ ր լիցնենք՝ $\frac{1}{4}$ ը
կը մնայ, Գ ը Դ ին $\frac{9}{16}$ ովք կը լինայ,

Ա ին պարունակութիւնը Գ ին եւ Դ
ին գումարէն 15 օխոա աւելի է . իւ-
րաքանչիւրին պարունակութիւնը ո՞ր-
շափ է :

16. Կարգ մը կոտորակներ որոց
համարիչները տարրերական յառա-
ջատութեան մը եղբերք կը կազմեն
1էն սկսեալ տարրերութիւնը 1 լինե-
լով, եւ յայտարարներն ալ քանոր-
դական յառաջատութեան մը եղբերք
կը կազմեն 1էն սկսեալ եւ 2 կշիռ
ոնինալով, այսինքն :

$\frac{1}{1}$, $\frac{2}{2}$, $\frac{3}{4}$, $\frac{4}{8}$, $\frac{5}{16}$, $\frac{6}{32}$, $\frac{7}{64}$, $\frac{8}{128}$, $\frac{9}{256}$,
 $\frac{10}{512}$, $\frac{11}{1024}$ ասոնք եթէ յանհունս եր-
կարին . Ի՞նչ կ'ըլլոյ գումար :

Տ. Պօջաձեան

Պողաճեանի խնդիրներ լուծողնե-
րէն առաջինին մէկ Ասսուածաշունչ
ոսկեղօծ, երկրորդին մէկ Աւետարան
ոսկեղօծ եւ երրորդին մէկ երդարան
ոսկեղօծ պիտի ալու մրցանակ :

Հանրագիտական Օրացոյցի 1902
տարւոյ եթիկով խնդիրներն լուծեցին
հետեւեալք .

1. Կէօլպազար, Պէլէտիկէի գրագիր Յարութիւն էֆ.
2. Եէնիճէ, Յովչաննէս էֆ. թ. Պատիկեան:
3. Տէնէք Մատէն, Յ. Տօգուղլեան էֆ.:
4. Տէնէք Մատէն, Յովչակիմ էֆ. Ա. Սիրուշեան:
5. Գահիրէ, Պ. Մ.:
6. Մէծ Նոր Գիւղ, Ա. Համայնքեան էֆ.
տնօրէն. Ո.զգ. Վարժարանի:
7. Թալլաս, Գ. Պ. Պօղոսեան էֆ. (Քաջալլաւ):
8. Թալլաս, Հայկազուն էֆ. Գ. Վաբրիէլեան:
9. Մէրսին, Վարդան էֆ. Ա. Սամանլեան:
10. Արզնի Մատէն, Յովչաննէս էֆ. Ա. Մէլտիկեան:
11. Արարկիր, Եդուարտ էֆ Պօղաճեան:

Այս 11 անուանց վրայ քուէ ձգելով՝ մրցանակին՝ «Ոսկեղջն Բանալի Անդը Իհպուի», շահեցաւ Եդուարտ էֆ Պօղաճեան. Արարկիր :

Միայն Մէկ խնդիր լուծած են
հետեւեալք .

1. Պրուսա, Մատթէոս էֆ. Զամաշրճեան:
2. » Օննիկ էֆ. Պաղտատէեան:
3. » Ո.զգ. Վարժ. Երդ Դասարանի
օրինրդք:

4. Եօղլատ, Սարգիս Էֆ. Ղ. Կէվչէրեան:
 5. Տիրապէքիր, Յովլէփ էֆ. Տապպաղեան:
 6. Սէրաստիա, Միսակ էֆ. Կ. Մէծատուր-
եան:
 7. Սէրաստիա, Յարութիւն էֆ. Մանուէլ-
եան:
 8. Կեսարիա, Ճիվան էֆ. Ն. Ա. Մասեալեան:
 9. Մալյաթիա, Մարտիրոս էֆ. Կ. Թիւթիւն-
ցեան:
 10. Պոլիս, Օր. Աղաւնի Մատթէսսեան:
 11. Գերմանիա, Ա. Ե. Մուրաստեան:
 12. Պուլկարիա, Մ. Պօղսեան:
- Այս 12 անուանց վրայ եւս քուէ
ձգելով, մրցանակին՝ «Փառակազմ»
Օրացոյց ոնդարձակ» շահեցաւ Սար-
դիս էֆ. Ղ. Կէվչէրեան, Եօղլատ :

— o —

ՅՈՒԱԲԱՆԱԿԱՆ

Մէկուն միտքը պահած թիւը
գտնել .

Ասոր համար շատ միջոցներ կան,
որոց մէկ քանին համառօտ թուա-
գիտութեանս նախորդ տպագրու-
թիւններուն մէջ ցուցուած են,
տղայոց զրոսանք ըլլալու համար,

հոս երկու կերպ եւս կը ցուցնեմք :
Ա. կերպ .

Միտքը պահած թիւէն 1 հանել տուր ,
մնացածը ինչ եւ իցէ Թուով մը բազմապատկել
տուր (օրինակի համար 3 ով), արտադրեալէն
Թող 1 հանէ, մնացածին վրայ Թող զումարէ
միտքը պահած թիւը եւ զումարը բեզ բսէ: Դռւ
ինչով որ բազմապատկել տուիր անկէ 1 աւելի
զումարէ բառձին վրայ (այս օրինակին մէջ 4),
եւ զումարն ով դարձեայ անով (4 ով) բաժնէ,
բանորդը պատասխանն է կամ միտքը պահած
թիւը :

Դիցուք թէ 17 է միտքը պահած թիւը,
յաշորդաբար կ'ըլլան :

$$17 - 1 = 16. \quad 16 \times 3 = 48. \quad 48 - 1 = 47$$

$$47 + 17 = 64. \quad \text{այս } 64 \text{ը բեզ կը յայտնէ:}$$

$$\text{Թու } ընելիքդ 64 + 4 = 68. \quad \frac{68}{4} = 17 \text{ որ է}$$

միտքը պահածը :

$$\begin{aligned} \text{Եթէ } \text{միտքը } \text{պահած } \text{ըլլար } 12 \text{ եւ } 7 \text{ով } \text{բազ-} \\ \text{մապատկել } \text{տուինք, } \text{պիտի } \text{ըլլար,} \\ 12 - 1 = 11. \quad 11 \times 7 = 77. \quad 77 - 1 = 76. \\ 76 + 12 = 88. \quad \text{այս } 88 \text{ըեզ } \text{պիտի } \text{յայտնէ, } \text{եւ} \end{aligned}$$

դռւ պիտի հաշուես :

$$88 + 8 = 96. \quad \frac{86}{8} = 12 \text{ պատասխան :}$$

Բ. կերպ .

Միտքը պահած թիւը եռապատկել տուր ,

արտադրեալէն Թող 1 պակսեցնէ, մնացածը
դարձեալ Թող եռապատկել եւ միտքը պահածն
ալ վրան աւելցնէ եւ զումարն բեզ յայտնէ: Դռւ
զումարին վրայ 3 աւելցուր, կունենան 0ով վեր-
ջանորեալ Թիւ մը, այդ զրն դուրս ձգելով մնա-
ցածն է պատասխանը :

Դիցուք թէ 11 է միտք պահածը, յաշորդա-
բար կ'ըլլան :

$$11 \times 3 = 33 \quad 33 - 1 = 32 \quad 32 \times 3 = 96$$

$$96 + 11 = 107. \quad \text{զոր } \text{բեզ } \text{կը } \text{յայտնէ:}$$

$$107 + 3 = 110. \quad \text{որոյ } \text{ծայրի } 0ն չէնք հաշուեր:$$

$$11 է միտք պահածը :$$

$$\text{Համարինը } \text{թէ } 25 \text{ պահեր } \text{է } \text{միտքը.}$$

$$25 \times 3 = 75. \quad 75 - 1 = 74. \quad 74 \times 3 = 222$$

$$222 + 25 = 247. \quad \text{զոր } \text{պիտի } \text{յանէն } \text{բեզի:}$$

$$247 + 3 = 250. \quad \text{ուրեմն } \text{չի } \text{հաշուելով } 0ն.$$

Պատ 25 է :

Հաստատել թէ 3 ով բաժանական չեղող Թուոյ
մը բառակուսիներն երբ 3ով բաժնենք միշտ 1
մնացորդ կ'ելնէ, ինչպէս,


$$4, \quad 7, \quad 8, \quad 10, \quad 13, \quad 20 \text{ եւ } \text{այլն :}$$

Որոց բառակուսիներն են ,

16, 49, 64, 100, 169, 400. ասոնք
երբ 3 ով բացնենք 1 մնացորդ կը Թողովն :

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

Հնդկաստանի մէջ յաճախաղէպ
են զայլերէ մեծցոււած տղաքներ որ
մինչեւ մահերնին անոնց հետ մէկտեղ
կ'ասպին : Այս տղաք բնաւ իմացա-
կանութիւն չունին, բայց երբ ուտե-
միք արուփ, նախ կը հոսութան զայն
եւ միայն հում միսն ախորժանօք
կ'ուտենի : «Այս տղաքներէն մին,
կ'ըսէ էճէրթըն, գայլի հոտ մունէր
զոր հակառակ շատ մը փորձերու չի
կրցինք ջնջել : Իր բանուելէն քանի
մ'օր ետքը երեք գայլեր եկան ա-յ
ցելութիւն սուբն իրեն : Իրենց երե-
ւոյթը նախ թշնամական զիտաւո-
սութիւն մը կը յայտնէր, բայց առա-
ջին քննութենէ մը ետքը աւելի սի-
րալիք զգացումներով տոգորուեցան
և սկսան անոր հետ խտղալ : Յա-
ջորդ իրիկունն անոնք նորէն եկան
ուրիշ երկու գայլերու հետ : Այս



ՊԱՏՈՒԵԼԻ ՍԻՄՈՆ ԴԱՒԻԹԵԱՆ

վերջինք ապահովագույս բանտարկեալին եղբայրներն էին զորս միւսները միասին բերած էին որպէս զի միսիթարեն զայն» — Ուրիշ զիառզութիւն : Բոլոր գայլ-տղաքները վերջին աստիճան վայրինի բնաւորութիւն մ'ունին, եւ գայլերու ընկերութիւնը մարդերու ընկերութիւնը նախամեծար կ'ուեպեն. յայնապէս : Կ'արժէ մտիկ ընել հետեւ եալ պատմութիւնը զոր ըրած է Մր. Պօլ, անդամ Հնդկաստանի երկրաբանական ընկերութեան : — «Մին այն երկու տղաքներէն, որոց այցելեցի, բանուած էր գայլի երկու կորիւններու հետ : 10 տարեկան մը կար : Երբ մեզմէ մէկն ու զեց դպիլ անոր, յանկարծ այս անխոնեմին վրայ յարձակեցաւ. եւ խածաւ : Բարեբախտաբար զեղերով անմիջապէս զարմանեցին այս խածատումն, որ կրնար վատնդաւոր հանդամանդ մը անել : Գիշեր մը երկու գայլեր եկան ա ցելցին զինքը . բայց ինք փոխանակ անոնցմէ վախնալու, ձեռքը զլուխ-

նուն վրայ դրաւ : Գայլերը, վատահութեան այս ցոյցէն զգածուած, սկսան անոր հետ խաղալ ու անոր դէմքը լզել իրեւ թէ իրենց կորիւններէն մին րլար :»

Սյու աղաքը վայրենութեան վիճակէն աղասելու եւ զանոնք խօսեցնելու համար եղած բոլոր ջանքերն ապարգիւն մնացած են : Ումանք սակայն կը յաջողին քանի մը նշաններ հասկնալ, բայց երբեք չեն շահագրգուսիր իրենց շուրջը գտնուաղներուն, եւ երբեք սէր կամ գորով ցոյց չեն տար զիրենք խնամող մարդոց : Սյու է ընդհ. կանոնն որ սակայն ունի իւր հազուագիւա բացառութիւնները : Բննուած գայլ-տղաքներն ընդհանրապէս քիչ կ'ապրին անպատճառ : Սոով հանդերձ Մր. Երարտ, Մէքունտրայի որբանոցին վերատեսուչը, ճանչցած է զայլ-տղայ մը որ Լիւքնուի յիմարանոցին մէջ երկար տարիներ ապրեցաւ : Ուրիշ մ'ալ ժանաւարմ եղաւ : Ասիկա չորս տարեկան հասակին մէջ զայլի մը որչէն բննուած

էր եւ խուլ մանչիւններ կ'արձկէր : Եփած կերակուրները սաստիկ կ'արհամարհներ եւ միայն հում միս կ'ուտէր : Սակայն յարատեւ խնամքներու շնորհւ իր խմացականութիւնը զարգացաւ եւ կրցան դպրոց՝ դնել զայն : Հան շուտով յառաջդիմեց եւ վերջապէս սատիկան գրուեցաւ :

Ի՞նչ կը խորհիք բոլոր այս պատմութիւններուն վրայ Եթէ մեր կարծիքը կ'աւգէք, առ այժմ զիտնականապէս բան մը չենք կրնար ըսել . միայն դիտել կուտանք որ խնդիրը նախապէս կարծուածին չափ անսովոր բան մը չէ . զի կրնայ ըլլալ որ մատակ գայլ մը տղայ մը գողցած եւ զայն հանգիտ կերպով լավիելու համար իր որջը բերած ըլլալով , հան աղատ թողու զայն : Տղան անօթենալով կը փնտոէ իր մօր ծիծն եւ կը պատահի սախնքին : Ծծումը տեղի կ'ունենայ , եւ զայլը հետպհետէ կը վարժուի տղան նկատել իրեւ իր կաթնկեր կորիւնը :

Ամէն պարագայի մէջ խնդիրը ար-

ժանի է քննութեան , եւ մենք անհամբեր կ'սպասենք Մր. Սթոքուէլի եղրակացութեանց, որոցմէ գեռ սովորելիք շատ բաներ ունինք անշուշտ ԺԻՐԱՅՐ ՇԻՐԱԿԱՑԻ

Նանսէն իր բալլիիրը ջուրին եւ զերքը բերած էր եւ կայնած կը բոնէր զայն որպէս զի սառին վրայէն զէպ ի ջուրը չահի : Իմ բալլիիրս եւ նաւակս քիչ մը ետին կը կենացին եւ զացի զանոնք բերելու : Ծոեցայ որ առնեմ բալլիիրը քաշելու չուանը , եւ ահա յանկարծ տեսայ կենդանի մը ճիշդ նաւակին ետեւը : Առաջին անգամ Սըկրնը (շուն) կարծեցի , բայց շուտ հասկցայ թէ ան չէր , այլ արջ մը որ կծկած՝ պատրաստուած էր վրաս յարձակելու : Դեռ իմ ծուած զիրքէս ելլելու ժամանակ չունեցած վրաս յարձակեցաւ , իր երկու որունքներով բանեց ետ քաշեց զիս զէպ ի անուշ ջուրի լճակի մը քիչ մը զառիվայր եղերքը : Արջը այնուհետեւ իր առջեւի զօրաւոր մէկ թաթով

ուժգին ապահով մը տուաւ աջ այս
ափս , եւ գլխուս մէջի ոսկորները
ցնցեց , բայց բարեբազգապէս չթըմ-
րեցուց զիս : Կոնակիս վրայ ինկայ
եւ հոն մնացի արջուն որունքներուն
մէջ : «Առ հրացանդ , պոռացի Նան-
սենի , որ հտեւս կը գտնուէր , մինչ
նոյն ժամանակ կը տեսնէի իմ լեց-
ուած հրացանիս կոթին ծայրը մօսս
նաւակին քովը , եւ կը բաղձայի
առնել զանիկա : Տեսայ արջուն
ծնօտները որ լայն բացուած էին զըլ-
խուս վրայ , եւ անոր անոելի ակոա-
ները կը փայլէին : Ինկած ասենս
մէկ ձեռքովս բանած էի գաղանին
կոկորդէն , եւ այնպէս կը մնայի
կեանքու սուզ գնով ծախելու համար :
Արջը ասոր վրայ քիչ մը գէպի ետեւ
քաշուած էր . Փոկ շէի կրնար ըլլալ
խորհած ըլլալու է , բայց աարօրինակ
կենդանի մը՝ որուն սովորած չէր :
Եւ անսարակոյս այս թեթեւ յապա-
ղումին կը պարտիմ իմ կեանքս :
Նանսենի հրացան պարպելուն կը
սպասէի եւ զիտեցի որ արջը անոր

կողմը կը նայէր , Խորհելով թէ Նան-
սին Ժամանակ կը կորսնցունէ , պո-
ռացի անոր , մինչ արջուն դիրկը կը
գտնուէի , շուտ ըրէ եթէ ոչ առիթը
կը կորսուի : » Արջը քիչ մը վերցուց
իր թաթերէն մէկը եւ իմ վրայէս
անցնելով հարուած մը տուաւ . Սը-
կընի որ իմ քովիկս կը կենար , կը
հաշէր եւ մեղ կը հսկէր : Հարուածը
ուաելէն ետքը թաւալելով եւ ոո-
հալով զնաց ինկաւ ստոին վրայ :
Կայիափայի (միւս շունը) ալ անպէս
ըրաւ արջը : Թող տուի ձեռքս ար-
ջուն կոկորդէն եւ անոր անմտագ-
րութենէն առիթ քաղելով , թաթե-
րուն մէջէն ելայ սաքերուս վրայ
կայնեցայ , ասի հրացանս , մինչ Նան-
սէն երկու անգամ պարպեց իր հրա-
ցանը , եւ արջը մեռած ինկաւ լճա-
կին քով : »

Երկու երեք տարի տուած Բեւե-
սային արջու ձագ մը նուիրուեցաւ
Լոնտոնի կենդանաբանական Պար-
տէզներուն : Նաւով բերուած միջո-
ցին ամէն օր լոգանք կը տրուէր ա-

նոր : Քիչ մը դժուարութեամբ կը կապուէր չուանով մը , եւ նաւին կուշտէն ծովը կ'իջուցուէր , եւ կը թողուէր որ ջուրին մէջ խաղար ժամանակ մը : Երբ լոգանքը լմնար , նորէն վեր քաշուելով նաւին մէջ կ'առնուէր :

Կառախումբը ըլուրներէն դուրս ելլելով պղտիկ դաշտ մը կը մանէր , երբ մեքենավարը , ուղղակի իր առջեւը երկաթուղւոյ գծին վրայ , ցուլերու երամակ մը տեսաւ : Ցուլերը Սպանիոյ մէջ շատ կարեւոր կենդանիներ են երկրագործութեան համար : Անօնց մէկ մասը ցլամարտի համար կ'որոշուէր : Երկաթուղւոյ գծէն հեռանալու նշան շէին ցուցներ ցուլերը : Մեքենավարը կամացցոց կառախումբին ընթացքը որչափ որ կարելի էր : Միեւնոյն ժամանակ կը սուլէր : Ասոր վրայ բոլոր ցուլերը փախան բաց ի մէկէն , խոշոր բան մը , ցլամարտի շատ յարմար : Ասիկա , իր եղջիւրները ցածցուցած եւ զոսալով

իր թէ ի պատամսանի մեքենային արհամարհուած ճիչերուն , յարձակեցաւ կառախումբին վրայ : Ժամանակ չկար ընդհարումը արգելելու : Կառախումբը եւ ցուլը իրարու հանդիպեցան : Ցուլը սպաննուեցաւ խկոյն , բայց անոր մարմինը ամբողջովին կեցաւ վայրաշարժին անիւներուն ներքեւը , այնպէս որ անկարելի եղաւ կառախումբին յառաջ խաղալ առանց ճամբան մաքրելու : Զանիկա մաքրել մեծ գործ եղաւ կառախումբի մարդոցը : Կառուղիվը արու ճամբորդները օգնութեան կանչեց , եւ անոնք խանուեցան վայրաշարժին շուրջը : Նոյն ժամանակ ցուլերու մեծ երամակը իրենց ջախջախուած պետին արիւնին հասը առնելով շրջապատեցին զանիկա , իրենց սովորով գետինը կը փորէին եւ կը սպաննային : Որչափ աւելի մօտ կուզային արնչափ աւելի կը կատղէին , եւ վերջապէս փոթորկի կամ թաթառի պէս յախոն յարձակեցան գործաւորներու փոքրիկ խումբին վրայ : Այն ատեն

բոլոր գործաւորները թողուցին ի-
րենց գործը, եւ կառքերն ապաստա-
նեցան : Յուլերը անոնց հետեւեցան
մինչեւ նոյն իսկ սանդուղները, բա-
ռաջելով եւ ուաքերով գետինը փո-
րելով: Բաւական ժամանակ այս տա-
րօրինակ տեսարանը տեսեց, այն է
յուլերու պաշարելը ուղեւորներով
Եցուն կառախումբ մը : Բայց կա-
ռախումբին մէջ զինուորներ կային,
որոնք շուտով դուրս ելլելով յարձա-
կելու պատրաստուեցան : Գտնելով
տեղ մը ուր յուլերը զօրաւոր չէին,
քարեր ժողուեցին եւ արիաբար տե-
ղացուցին կենդանիներուն վրայ :
Յուլերը ետքաշուեցան, նորէն յար-
ձակեցան, նորէն ետքաշուեցան, եւ
երկու ժամ կոփէր աեւեց անընդհատ
Յաղթութիւնը մէյմը այս մէյմը այն
կողմը կերեւէր : Ի վերջոյ, երբ դի-
շերը վրայ հասաւ, ցուլերը ետքա-
շուեցան եւ հեռաւոր տեղ մը հաւաք-
ուեցան : Այն ատեն գործաւորները
եւ ուղեւորները կարող եղան նորէն
գործի սկսելու : Ճամբան մաքրուե-

ցաւ, եւ կառախումբը շարունակեց
իր զնացքը :

Լրագրի թղթակից մը կը նկա-
րագրէ խրած նաւի մը զարմանալի
տեսարանը Սբ. Մարիամ կղզիին առ-
ջեւը Անգղիոյ ծավեղրին մօտ :

Այնպէս կը թուէր թէ նաւը յա-
ջողութեամբ դուրս պիտի ելլէր նա-
ւահանգիտաէն, բայց կեանքի նշան
չէր երեւնար մէջը : Հաղիւ ստք
զրինքնաւին տախտակամածին վրայ,
եւ ահա կատաղի յարձակում կրե-
ցինք առնէտներու բաղմութենէ մը :
Խոչոր, անօթի, վախտ առնէտներ,
որոնց շատին պոչերը փրցուած էին,
վեր խուժեցին նաւին վարի կողմէն,
հարիւրաւորներով եւ հազարաւոր-
ներով, ճշելով եւ մէկմէկու վրայէ
վաղելով ահապիսի կերպով որ տես-
նողին սոսկում կ'աղգէր : Մեղմէ
անընք որ տախտակամածին վրայ կը
քարէին, դէպի նաւին կայմերը վա-
զեցին, եւ ուրիշներ աճապարանօք
ետքաշուեցան մաքրուե-

Նաւին կայմերուն վրայ մեր դիրքը
յետին աստիճան վտանգաւոր էր :
Այդ դիրքին մէջ ոչ կրնայինք կը ո-
ուիլ այն կատաղի , սովատանիջ կը բ-
ծողներուն հետ , եւ ոչ մնալ հան
կայմերուն վրայ : Ի վերջոյ չուան-
ներէն քանի մը մաս կարեցինք , եւ
կապեցինք զանոնք յարմար երկայ-
նութիւններով , եւ այսպէս սպառա-
զինուած վար իշանք եւ կուտեցանք
ճշող խումբերուն հետ , եւ վերջա-
պէս յաջողեցանք անոնց զարնելով
ճամբայ բանալ դէպ ի նաւակը Այն-
պէս կը թուէր թէ առնէտները դի-
տէին նաւին մօտալուտ վտանգը ,
վասն զի հազիւ տեսան որ նաւին
մէկ կողմը գացինք , ահա սկսան
կայմի չուաններէն բազմութեամբ
վար վաղել եւ նաւակ մանելու աշ-
խատիլ : Դժուարութիւններով կա-
րող եղանք զանոնք փախցնել չու-
աններուն հարուածներովը , եւ առ-
նէտները ահանելի կերպով կը ճչէին
մինչ կը վանէինք զանոնք : Քանի մը
ժամ յետոյ նաւը կտոր կտոր եղաւ :

Վետահար կապիկ մը : Որսորդ-
ներու խումբի մը անդամներէն մէկը
էդ կապիկ մը սպաննեց եւ իր վրանը
տարաւ : Վրանը շուտով շրջապատ-
ուեցաւ քառասուն յիսուն կապիկ-
ներէ որոնք մեծ աղաղակներ կը
հանէին եւ կը թուէր թէ կ'ուզէին
յարձակիլ մարդուն վրայ : Ետ քաշ-
ուեցան երբ որսորդը իր հրացանը
ցուցուց , որուն սոսկալի գործը տե-
սած էին եւ բանը լաւ հասկցած
կը թուէին : Բայց կապիկներու խում-
բին պետք տեղէն չշարժեցաւ . ահ-
սելի կերպով կը կարկաչէր : Որ-
սորդը , թերեւս զզջալով կապիկնե-
րու այն ընտանիքին անդամներէն
մէկը սպաննած ըլլալուն համար ,
չուցեց հրաղէն պարպել անոր վրայ .
բայց կապիկը չէր հեռանար , ի վեր-
ջոյ կապիկը վրանին դուռը եկաւ ,
եւ տեմնելով որ սպառնալիքները
օգուտ չեն ընէր , սկսաւ սղբածայն
աղաղակներ արձակել , եւ ամենէն
ազգեցիկ շարժումներովը կը թուէր
թէ կ'աղաչէր որ սպաննուած կեն-

դանին իրեն յանձնուէր : Ուստի անհկենգան մարմինը անոր պոտեցաւ : Կապիկը վշտաբել իր բազուկներուն վրայ առաւ զայն եւ տարաւ իր ընկերներուն որսնք կը սպասէին : Անոնք որ հանգիստես եղան այն արտասովոր տեսարանին , որոշեցին այնուհետեւ երբեք հրազէն չարձակել կապիկներու վրայ :

Անգլիերէն զիտական թերթ մը կապիկներու այս բնագրին վրայ շատ օրինակներ տուած , բայց մոռցած էր պատմել այս կարգի ամէնէն ծիծաղարժ եւ վաւերական պատմութիւններէն մին : Հայր Լապա , հեղինակ «Նոր ճամբորդութիւն Ամերիկայի ֆրանսական կղզիները» անուն գործին , եւ Հայր Քապասն , Մարզինիքի Ժաղողէններու մեծաւորը , Աէն Քրիստոփ կղզին (Անդիեանց մէջ) դաշտած էին : Մ . Լամպէո , իրենց նաւապեան ու բարեկամը , կապիկներու որաորդութեան մը հրաշիրեց զիրենք այն հողերէն միոյն

մէջ ուր այս անասունները սովորութիւն ունին հաւաքուիլ իրիկունները Երբ այդ հողերու մէջ շաքարեղէդ կամ գեանախնձոր անկուփ , պէտք է զիշեր ցերեկ հսկողութիւն կատարել որովհետեւ կապիկներ կուզան կը զաղնան ամէն բան : Որսորդները մութը կոմիւէն առաջ զարանակալ եղան եւ հազիւ ժամ մը անցեր էր երբ տեսան խոշոր կապիկ մը որ մացառներէն գուրս ելաւ , չորս կողմը զննեց , ծափի մը վրայ ելաւ եւ անոր գագաթէն ալ շրջականները զիտեց : Ի վերջոյ , աղաղակ մը արձակեց որուն միեւնոյն ատեն պատասխանեցին հարիւր ձայններ : Պահ մը ետք կապիկներու խումբ մը հաւաքուեցաւ հոն եղէզները խլելու եւ տանելու համար : Ոմանք 4-5 կառը մէկէն ուսերնին կ'առնէին ու կը հեռանային ետեւի ուաքերնուն վրայ ցատկելով : Ուրիշներ ալ հատ մը բերաննին կ'առնէին ու կ'երթային ցատկառութներով : Հայր Լապա եւ իր բարեկամները այս ուշիւ կենդա-

նիներուն հնարքները դիտելէ ետք ,
քանի մը հասն սպաննեցին , Սպան-
նուածներուն մէջ էզ մը կար որ իր
ուսին վրայ առած էր ձագուկը : Այս
պղափկ կապիկն առին , մեծցուցին :
Եստ սիրուն կենդանի մը եղաւ :
Հայր Քապասօն , Մարդինիք դառ-
նալով , քովս առաւ կապիկն եւ շատ
սէր առւաւ անոր : Երբ եկեղեցի եր-
թար , կը պարտաւորուէր կապիկը
սենեկի մը մէջ փակել , վասն զի
կենդանին չէր ուզեր բաժնուէլ իրմէ :
Օր մը սակայն կապիկը փախաւ եւ
գնաց պահուըտեցաւ քարոզչին բե-
մին տակ : Երբ տէրը քարոզի սկսաւ ,
կապիկն երեւան ելաւ եւ քարոզչին
ետեւն անցնելով անոր ձեւերն ու
շարժումները նմանցուց այնպիսի ծա-
մածութիւններով որ բոլոր հաւա-
տացեալները քահ քահ խնդացին :
Հայր Քապասօն , այնպիսի անպար-
կեշտ ընթացքի մը պատճառը չգիտ-
նալով , նախ սկսաւ քաղցրութեամբ
յանդիմանել իր ունկնդիրները : Բայց
տեսնելով որ քրքիջները կը շատնա-

յին փոխանակ նուազելու , սուրբ
բարկութեամբ մը բորբոքեցաւ եւ
խստօրէն յանդիմանեց իր թեմական-
ները որ այսպէս յարգանքի պակտու-
թեան մէջ կը գտնուէին Աստուծոյ
խօսքերուն հանդէպ : Իր շարժում-
ները , որք սովորականէն աւելի
բռուն էին , աւելցուցին կապիկին
ծամածութիւններն ու շարժում-
ներն եւ հետեւապէս ժողովրդեան
քրքիջը : Ի վերջոյ , հաւատացեալ-
ներէն մին խնդրեց քարոզչին որ
անգամ մը ետեւը նայի : Հազիւ թէ
տեսած էր կապիկին շարժումները ,
ինքն ալ սկսաւ միւսներուն պէս
խնդրալ : Եւ սրովչեաեւ կարելի չէր
կենդանին բանել , Հայր Քապասօն
վշալ անցաւ իր քարոզչին զոր արգէն
շարունակելու վիճակի մէջ չէր ,
ինչպէս որ ժողովուրդն ալ մտիկ
ընելու վիճակին մէջ չէր :

(Տեղու)

ՊՈԽՎԱՐ ՄԱՍԱԼԱԱՐԵ
Գաղլըդունըն մէնը է պահուրէ
Վագթըլա զապլըպաղա պիր կէ-
լին իտի : Մէզպուրէնին եիւրիւ-
տախմա նիփտապլը օլարդը հալոէ ,
զայնաթա վէ գայնանասընա խըզմէթ
էտէր իտի : Մէզպուրէ պիր կիւն
էքմէք փիշիրիր իքէն , անէրին հու-
զուրընտա խամուր թէքնէսինի աէ-
վիրտի : Զէվալլը կէլին պունտան
տօլայը օ տէրէնէ ութանըպ մահճուպ
տիւշտիւ քի , կէօղլէրինի եօդարը
գալարյամազ օլառ . իմափ սու տէս-
թիսինի տիւշիւրիւպ քէնափիսինի տ-
նըն իւզէրինէ աթաը . Սօնրա խամուր
թէքնէսինին ալթընա կիրիպ , քէն-
տիսինի պիր նէվ եւրէ սիւրթիւ-
լին հայլան հալինէ թահվիլ էթ-
մէսի իչիւն Ալլահա նուռ էթտի :
Ալլահ տախի քէնտիսինի գապլըպա-
ղայա չէվիրտի : Սու տէսթիսին ալ-
թընտա վէ խամըր թէքնէսին իւս-
թիսնաէ օլարագ պունդար անըն ի-
շիւն պիր չիփթ գապուգ օլարդար ,

վէ մէզպուրէ պունըն իչինտէ սիւ-
րիւնէրէք եիւրիւմէյէ պաշլատր :
Պէօյէնէ եիւրիւյէ եիւրիւյէ էվտէն
չըպըպ օրմանա կիթտի : Հաթթա
պու կիւնէ գատար պիրինի կէօրիւր
կէօրմէզ գաֆասընը գապուզընըն
իչինէ կիզէր , վէ անլէր կէչմէտիքձէ
պիր սէս չըգարմագ :

Շէֆտէտր օնւընըն մէնը :

Տեստօ Կոսփօտ (Ալլահ տէտէ)
ալչըտան պիր ինտան վիւճուտը խալզ
էթակիյնտէ , կէնէ վագթը պրագտը
քի գուրտւաըն : Նիյէթի սապահ օլ-
տրզընտա անըն պուրնունա նէֆէս
իւֆիւրմէք իտի : Կէնէլէին Շէյթան
պիր տէյնէք իլէ կէլիպ , օլ վիւճու-
տը տէլիք տէլիք էտէրէք խալզուր
հալինէ կէթիրտի : Սապահ օլունձա ,
Տեստօ Կոսփօտ կէլիսլ պագտը քի
ետիտըզը վիւճուտ պիւսպիւթիւն
տէլիք տէշիք օլմուշ : Պունու կէօ-
րիւննէ , քէնտի քէնտինէ , «Հըմ ,
Շէյթան կէլիպ սէօյէ էթմիշ տիր

քի , պաշտա պիր վիւճուտ եափմազա մէճպուր օլայըմ : Շիմտի պէն տէ նէ ետփաճաղըմը պիլիրիմ , » տէտի : Սօնրա անըն եանընտա պիթմիշ օլան օթլարը թօփլամաղա պաշլատը : Օ շուրատան պուրատան պիր թագրմ օթլար թօփլայըպ պունլար վասրթասըլէ տէլլիքլէրի թրգաար : Պէօլէճէ հէփ տէլլիքլէրի դափատըգտան սօնրա իւզէրլէրինէ տէ ալը սիւրախւ վէ պիւթիւն վիւճուտպին իւզէրինտէքի փիւրիւգիխ եէրլէրի տէ տիւմ ափւզ էթտի : Պատէնու ինսանա ճան վէրտի , վէ ինսան եաշամաղա պաշլատը : Սօնրա Տեատօ Կոսփօտ օնա տէտի քի , «Նէ վազթպիր եէրին աղրըյաճագ օլուրտա , պու օթլարը տէվչիրիպ քէնաինի էլի եափ . շու օթլարըն սույընը իչմէլի , շունլարըն սույու իլէ երգանմալը , շունլար իլէ քէնաինի թիւթսիւլէմէլի , վէ շունլար իլէ տէ եարէլէրինի պաղլամալըըն : » Իլք ինսան հէփ պու շէլլէրէ ակեան իտի . քէզա անըն էլլատլարը , թօրունլարը վէ

թօրունլարընըն չօճուղլարը տախի պիլիրէր իտի : Լաքին պունտան սօնրա ինսան ազար ազար անլէրի ունութմաղա պաշլատը : Շիփա վէրէն օթլար չօդ ալր . ֆագաթ ինսան անլէրի թանըմազ : «Ճէրտի վէրէն Ալլահ տէրմանը տա պիրլիքուէ վէրմիշ » մէալինաէքի տարպ ը մէսէլիշէ պունա պինաէն աղըզտան աղըզա եաելմըշ ալր :

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Շ Ա Ն Թ

Մինակ ի Ֆրանսա տարին միջին հաշուով 100 այր և 30 կին կը մեռնին «Արամազդին կրակովը» , շանթով :

Մարդ չի գիտեր թէ ի՞նչ է շանթը : Անշուշտ ելեկտրական հոսանքո՞չ , Բայց ի՞նչ է ելեկտրական հո-

սանքը : Ի՞նչ է նոյն ինքն ելեկտրականութիւնը : Գաղանիք :

Օգոստոս 17ին 23 տարու ֆրանսացի մը , Օտ գաւառին մէջ , շանթէն բանուելով 50 մէդր հեռու նեռուեցաւ , սոք ելաւ և ճամբան շարունակեց : Գիտնական մը , որ լրագրերու մէջ կարդացած էր այս գէպքը , նամակ գրեց դիւցազնին , հասկնալու թէ պատմուածն ստո՞յգ էր և ի՞նչպէս տեղի ունեցած էր : Երիտասարդն այսպէս պատասխանեց . «—Իրողութիւնը ճի՛շտ է : Արձակուրդով՝ Պրուս գացած էի : Օգոստոս 17ին , բուռն փոթորկէ մը վերջ , անձրեւը քիչ մը դադրած ըլլալով , հօրեղբօրս առնէն մեկնեցայ : Մեր տունն 200 մէդր հեռու էր : Օդը մթնցաւ : Տեսնելով որ անձրեւը պիտի վերսկսի , սկսայ վազել : Յանկարծ ինծի անանկ եկաւ թէ մէկն օձիքէս բռնեց : Տակաւին ի՞նչ ըլլալը չհառկցած , ինքինքս 50 մէդր հեռուն գտայ , գետին փռուած : Բան մը չզգացի , չտե-

սայ , չլսեցի : Ոտք ելայ և տունս դացի : Այ ծունդս կը ցաւէր : Տաբատս պատուած էր : Երկու մարդիկ , որ մերձակայ առնէն մը կ'ելսէին , վկայ են այս իրավութեան : Նոյն պահուն շանթը , իմ գանուած տեղէս 200 մէդր անդին , առւն մը մտնելով 2 կով սպաննած , երրորդի մը սրունքը կոտրած , աթոռ մը տապալած և 7—8 շիշ գետին ձգած էր» ։ Շանթահարներէն շատեր ընդհանրապէս իրենց կեցած գերքին մէջ կ'ածխանան : Մարդ մը որ շունին հաց կուտար , այդ վիճակին մէջ գտնուեցաւ շանթահար : Փոթորիկէ մը ազատող անձեր ուսենիի մը տակ կը տեսնեն ոտքի վրայ կեցող մարդ մը , որ մլիկ մլիկ կ'այրէր . — Բարեկամ , չե՞ս տեսներ , կ'այրիս . . . , պուացին : Պատախան չկար : Մօտեցան , ու սարսափով տեսան որ մարդը դիմակ մէ : Երեք զինուորներ , փոթորկի մը տաեն , ծառի մը տակ ապաստանած էին : Շանթահար եղան ոտքի վրայ:

Անցորդներն անոնց անշարժ դիրքը
տեսնելով, պոռացին . — «Մարդիկ
Աստուծոյ, ի՞նչ կեցեր էք հոդ : »
Զինուորներուն լուսթիւնը տեսնելով
անցորդներէն մին մօտեցաւ ու մըշ-
տեց : Փոշիի կոյափ մը պէս գետին
ցանուեցան զինուորները :

Շանթահարութեան հետեւանք-
ները միշտ աղետալի չեն ըլլար :
Վալբուայի մօտ (Ֆրանսա) մարդ մը
ճամբան դացած ատեն շանթահար
եղաւ : Շանթը բոլորովին մերկացուց
զայն իր զգեստներէն : Մինակ չհա-
ճեցաւ ոտքի ամաններն հանել : Սո-
լիէ-Բօնի մէջ երկու մշակներ փո-
թորկի մը ատեն խրճիթ մը ապաս-
տանեցան, և կը պատրաստուէին ցե-
րեկուան հացերնին ուտել : Սեղանը
դրին, Յանկարծ շանթն եկաւ, հացը,
պանիրն ու պտուղները վերցուց,
գինիին շիշը տապալեց և — փախաւ :
Երբեմն շանթն անվաս է և կարծես
իր զոհերուն հետ կատակ կ'ընէ :
Օր մը Նանդի մէջ քարափիէն անց-
նող մարդ մը յանկարծ փայլուն լոյ-

ոով մը շրջապատուեցաւ : Գրպանի
դրամապանակին մէկ կողմն երկու
արծաթ դրամ ունէր և միւս կողմը
կէս զաղղիական ոսկի մը : Տուն
գացած ատեն զարմանքով տեսաւ որ
Նաբոլէնի պատկերին պիխերուն
կողմէն արծաթի խաւ մը դրամա-
պանակին միւս կողմն անցնելով ,
10 ֆրանոց ոսկիին վրայ փակած էր:
1883 յուլիս 5ին կոոջ մը օղն հալե-
ցաւ շանթէն : Ուսկին հալեցնելու հա-
մար 1030 աստիճան, արծաթին հա-
մար 954° և պղնձին համար 940°
տաքութիւն պէտք է : (Խնչպէս գի-
տէք, եռացող ջուրն հարէ-ր աստի-
ճան է տակաւին :) Կինը չվասուե-
ցաւ , մինչ իրմէ քիչ հեռու երկու-
ցաւ : Շանթն օր մ'ալ 15
կոլեր մեռան : Շանթն առ հ'ալ 15
տարեկան զեղջկուհի մը հետ ին-
կաւ : Մերկ ոտքերը գգուեց, սպըր-
դեցաւ անոր զգեստներուն տակ որք
հովանոցի պէս բացուեցան , մինչև
պարանոցնելաւ և անկէ խոյս տուաւ,
չփակին վրայ պղտիկ ծակ մը բա-
չալով : Զարհուրած զեղջկուհիին

մարմնոյն վրայ գտնուեցաւ պղտիկ
կարմիր զիծ մը , որ աջ սրունքէն
սկսելով մինչև կուրծքը կ'ենէր՝
ստինքներուն մէջտեղ : Ահա աղջիկ
մը որ շանթին համբոյրը վայելած
էր : Զարմանալի է նաև հետեւեալ
դէպքը . — Տանսէի (Ֆրանսա) եկե-
ղեցին մէջ իրիկուան ժամերգու-
թեան ատեն , շանթը սեղանին վրայ
դրուած Սկիհը տապալեց և Նշխը
Էրզաւու : 1896 յուլիսին շանթը տուն
մը մտնելով կարի մեքենային առջև
նստող աղջկան մը ձեռքէն մկրատը
խլեց : Հարպուրիկի մէջ պարահան-
դէսի մը ատեն բոլոր լոյսերը մա-
րեց , իսկ 1898 սեպտեմբեր 4ին Լի-
օնի բոլոր ելեկտրական լոյսերը վա-
սեցան շանթին աղջեցութեան տակ :
Տքի . Պուտէն , որ մասնաւոր ուսում-
նասիրութիւն մը կատարած է , կ'ըսէ
թէ շանթը քայլեներ . . . ունի : Ժի-
էնի մէջ կին մը օրնեալ ջուր կը
սրսկէր շանթն հետացնելու համար :
Քայլ շանթն հասաւ և կնոջ ձեռքի
շեշ կտոր կտոր ըրաւ : Ասոնք ան-

շուշտ զուգագիպութիւններ են և ...
մասնաւոր նպատակի մը չեն կրնար
վերագրութիւն , բայց ադով հանդերձ
զարմանալի ու անհասկնալի ըլլալէ
չեն դադրիր , և Բնութեան մեծ
գրքին ամէնէն հետաքրքրական
գլուխներէն մին կը կազմեն :
Ճիրալլ Շիրակացի

ԵՐԿՐԱՆ Ա. Բ. Ժ

Երկրաշարժի պատմութիւնները
կը ցուցնեն թէ քրիստոնէական թուա-
կանին նախընթաց 1700 տարիներու
շրջանին մէջ պատահեցան 58 երկ-
րաշարժեր , որոց միայն չորսն աղե-
տալի եղաւ :

Քրիստոնէական թուականնեն ետ-
քը , առաջին ինն հարիւր տարինե-
քուն մէջ , այսինքն մինչև թ. դա-
րուն վերջը , 187 երկրաշարժ պա-
տահեցաւ որոց միայն 15ն աղետալի
էին : Իսկ թ. դարէն մինչև Ժե. դա-
րուն վախճանն եղող 600 տարիներու
մէջ պատահեցան 532 երկրաշարժեր ,

որոց 44ն աղետալի եղան : Սակայն յաջորդ 300 տարիներու մէջ , այն է մինչև Ժ. դարու վախճանը , 2804 երկրաշարժեր պատահեցան որոց հազարն աղետալի եղաւ : Վերջանալու վրայ եղող ներկայ Ժ. դարու առաջին 50 տարիներուն մէջ , այսինքն մինչև 1850 թուականը , 3240 երկրաշարժեր պատահեցան , որոց 53ն աղետալի եղաւ : Ուշադրութեան արժանի է տասնեւիններորդ դարու առաջին կիսուն մէջ , այսքան շատ — 3240 — երկրաշարժեր պատահիլլունունաս անձերու և հմուտ վիճակագիրներու կատարելիք մանրազնին քննութիւններէն պիտի կարենանք տեղեկանալ թէ Ժ. դարու երկրորդ կիսուն , այսինքն 1850—1900 թուականը , քանի երկրաշարժեր պատահեցան և ասոնցմէ քանին աղետալի եղան : տարակոյս չունինք սակայն թէ այս թիւ ահոելի համեմատութեան մը յանդած պիտի տեսնանք , վասնզի 1850—1866 , առաւել քան 1000 երկրաշարժ պատա-

հեցան , իսկ 1867 և 1868 տարիներու մէջ , մեծ ու փոքր երկրաշարժներու թիւը կը կարծուի թէ իբր 4000 ըլլայ : 1867 ապրիլ 4ին Միավինէ երկրաշարժէն աւերակ ըլլալով իբր 1000 հոգի մեռաւ : Միայն 1868ին 100,000էն աւելի անձինք մեռած ըլլալ կը կարծուի այս արկածէն : 1846ին , միմիայն սեպտեմբեր ամսոյ մէջ , երկրագունտիս վրայ 20 , իսկ 1869ին միմիայն յունուար ամսոյ մէջ 11 երկրաշարժներ պատահեցան : Գալիֆորնիոյ մէջ 1812էն մինչև 1850 երբեք երկրաշարժ չէ պատահած , սակայն 1850էն մինչև 1868 կը հաշուուի թէ պատահեցաւ իբր 200 երկրութ , այսինքն ամիսն անգամ մը : Կ Պոլսոյ Այոլնի և ուրիշ զանազան երկիրներու և վերջերս ալկովկասի մէջ պատահած երկրաշարժները դեռ ընթերցողներու մտքերու մէջ թարմ են : Երկրաշարժերու սոսկալի աւերումները տեսնուած են շատ երկիրներու մէջ . ամէնէն սոսկալին էր

սակայն 1755 նոյեմբերին Լիգպոնայի մէջ պատահածը , երբ 60,000 անձինք միայն քանի մը բոպէի մէջ կորսնցուցին իրենց կեանքը : Նոյն օր առաւօտուն օդը հանդարտ ու պարզ էր , և սրբոց տօնախմբութեան յատուկ օր ըլլալով , մայր եկեղեցին լիցուն էր բաղմութեամբ և կանթեղները կը վառէին շքեղապէս : Յանկարծ եկաւ երկրաշարժը : Ժողովուրդը դէպ ի նաւամատոյցը դիմեց և բազմութեամբ նաւերն ապաստանեցան . մէկ վայրկենի մէջ սակայն բոլորն ալ բացուած անդունդներուն մէջ ընկղմելով աներեւութացան : Ցամաքին վրայ շէնքերը բռնկեցան ու չառերն այրեցան :

Գ Ն Դ Ա Ս Ե Դ .

Կ'ըսուի թէ օրը 22,000,000 հատ գնդասեղ կ'երթան կ'անյայտանան . կրնայ հարցուիլ , «Ուրկէ՞ կուգան բոլոր գնդասեղները , այն 20 միլիոնը որ անոնց տեղը կը դրաւեն ։» Դըժ-

ուար է զնդասեղէն աւելի պարզ ուեէ բան մը երեւակայել , բայց գնդասեղ մը շինուելու համար տասը տասներկու տարրեր գործողութիւններու ենթարկուելու է շատ մը ինքնաշարժ մեքենաներու միջոցով :

Գնդասեղը գործարանին մէջ առաջին անգամ կ'երթենայ տակառներով լիցուն գալարուած պղինձ թելի ձեւով : Առաջին գործողութիւնն է այս թելը ուղղել : Գալարուն թելերը թաւալով պրկիչ գործիքներու վրայ կը դրուին , և անսցմէ ալ կը փոխադրուին պղտիկ մեքենաներու մէջ , որոնց պրկիչ մամուլի ձեւ ունեցող խողովակէն կատարելապէս ուղղուած դուրս կուգան : Այնուհետև թելը գնդասեղ շինող մեքենային մէջ կը դըժուի , որ գրեթէ տպագրական մամուլի մը չափ բազմամասն և կնձռուտ է : Սուր դանակ մը թելը կը կտրէ ուղղուած և միաչափ երկայնութեամբ : Կտրուած ամէն մէկ փոքրիկ կտոր կ'իյնայ պղտիկ անիւփ

մը վրայ, որուն եղերքը խոռոչ բացուած է ճիշդ թելին կտորները պարունակելու չափ : Ամէն մէկ կտոր կը տարուի անիւին միջոցով մինչև որ երկաթ ցուցամատ մը և բթամատ մը զանիկա կը բռնեն ամուր մը, և նոյն ժամանակ ինքնաշարժ մուրճ մը արագ մէկ հարուածով գլուխ մը կը ձեւացնէ թելին մէկ ծայրը : Յետոյ անկատար գնդասեղները ուրիշ խոռոչաւոր անիւի մը վրայ կ'իյնան որ հորիզոնական ուղղութեամբ կը թաւալի : Մինչ անոնք այս երկրորդ անիւին հետ կը դառնան, անոնց ցցուած ծայրերը կարգ մը բոլորակ պողպատեայ խարտոցներու վրայէ կ'անցնին, որոնք խարտելով զանոնք սրածայր կ'ընեն : Այնուհետեւ գնդասեղները չեչաքարի (սիւնկէր թաշը) մը կը հանդիպին որ կը հարթէ խարտուած ծայրերը, յետոյ կ'իյնան փայտէ սնտուկի մը մէջ : Ճարդ գործաւորի մը ձեռք չդպաւ գնդասեղներուն, կարժառէն ելլելնէն ի վեր : Կարելու, գլուխ ձեւա-

ցնելու, ծայրերը սուրցնելու և հարթելու գործողութիւնները կատարուեցան զարմանալի ինքնաշարժ մեքենաներով : Գնդասեղները փայտէ սնտուկներէն կը փոխադրուին «Ճերմը կցնող» սենեակը, ուր կը մաքրուին սղոցի փոշիով լեցուն թաւալուն տակառներու մէջ և նիքելով կը պատուին խոչոր տաշտերու մէջ : Այնուհետեւ կը չորցուին սղոցի փոշիով լեցուն տակառներու մէջ և կ'անցնին «յարդարիչ» մեքենայէ մը : Սնկէ ետքը կը համրուին և թուզեերու մէջ կը ծրարուին մեքենայի միջոցով :

Խոչոր վաճառատունները և մեծաքանակ գնողները ծրարներով կը գնեն : Մէկ ծրարը կը պարունակէ 108 երկոտասնեակ թուղթ, որոնց խրաքանչիւրին մէջ կը գտնուի 360 գնդասեղ : Մեծագոյն վաճառատուններ մէկ անդամուն կ'ապսպրեն սովորաբար 100 ծրար, այսինքն՝ գրեթէ 50,000,000 գնդասեղ :

Ամերիկայի Ռւէսթ Վըրձինիա
նահանգին մէկ գիւղին մէջ Տիկին
Սոփիա Քլարք մեռաւ 106 տարեւ-
կան, թողլով երկու դուսար, մին
80 տարեկան։ Երեք տարի առաջ
այս տիկնոջ ամուսինը մեռաւ 103
տարեկան՝ 83 տարւոյ կենակցու-
թենէ մը ետև։ Անոնց «ոսկեայ հար-
սանիքը», այսինքն ամուսնութեան
յիսներորդ տարեդարձը տեղիունեցաւ
աւելի քան մէկ երրորդ դար առաջ։

Տր. Հէյսթինիս կ'ըսէ թէ մա-
նուկներու կանոնաւոր աճումը կը
շարունակէ 2է մինչև 16 տարեկան
եղած միջոցին։ 16է 17՝ սովորաբար
կամաց կ'ամի։ Մարդ իր լիակատար
աճման չհամնիր մինչև որ տարիքը
25ը չանցնի։ Եւ մարմնամարզը աճ-
ման ժամանակամիջոցը կ'երկնցնէ
մինչև 30 տարիքը։ 50ի և 60ի մէջ-
տեղերը մարդկային մարմնին հա-
սակը կը կարձնայ։ Ուտեսաէ զըր-
կումը և ծանր աշխատութիւնն ալ
կ'արգելեն մարմնոյն աճումը։

Ուր որ ջուրերը սոկիի հանքերէ
կ'անցնին, ծառերը կ'առնեն սոկին
և կը պահեն իրենց բուներուն մէջ։
Տր. Լունկէվից խել մը ծառերու մո-
խիրները տարրալու ծելով գտաւ որ
ծառի մէկ տակառաշափին մէջ մին-
չեւ 28 դահեկանի սոկի կը պարու-
նակուէր։ Շատ ծառեր կը ցուցնէին
թէ կը պարունակեն սոկի, բայց ա'յն-
չափ քիչ քանակութեամբ՝ որ չափ-
ուելու չէր դար, Նախ ծառերուն
արմատներուն փոշին միայն տարրա-
լուծուեցաւ, բայց տեսնուեցաւ որ
վերի ճիւղերն աւելի սոկի կը պա-
րունակէին։

Անուանի Մէրկընթհէյլը իր մեռ-
նելէն քիչ առաջ լմիցուց զարմանալի
մեքենայ մը աժան կողովներ շինե-
լու համար, որոնց մէջ հասարակօ-
լէն խաղով կը զետեղուի։ Մինչ ա-
ռաջ ճարտար աշխատաւոր մը մէկ
օրը խաղովի 300 կողով կը շինէր
ձեռքով, նոյն անձը յիշեալ մեքե-
նայով հիմա կընայ օրը 4,000 կողով
10

շինել և աւելի դիւրութեամբ : Եւ
կ'ըսուի թէ այս կողովները ըստ ա-
մենային գերազանց են ձեռքով շին-
ուածներէն :

Երբ Նիքարակուայի ներսի կող-
մերը առջորիչ տաքութիւնով խան-
ձող փոքր գեղերէն մէկուն բնիկ
կիներէն մէկը ուղէ ջուր զովացնել,
հողէ սափորի մը իբր երկու երրորդը
ջուրով կը լեցնէ : Սափորը թրծուն
կաւէ շինուած է, ապիկուած (սըրլը)
չէ, և մասամբ ծակոտկէն է . ուստի
շուտով կը խոնաւնայ դրսի կողմը :
Սափորին պարանոցը երկու կաշեղէն
փոկերով (գայիշ) հաստատուն կեր-
պով կապուած է : Կինը բռնելով
անոնցմէ, կը սկսի սափորը արագ
արագ դարձնել օդին մէջ : Սափո-
րին բերանը բաց կը թողուի, բայց
կեդրոնախոյս զօրութիւնը ջուրը
կ'արգելէ դուրս թափուելէ : Ինիկ
կիները սովորաբար նիհար և տկար
են երեւոյթով, բայց այս տեսակ
մարզանքի մէջ անոնց տոկունու-

թիւնը հիանալի է : Երբ կինը կը
խորհի թէ ջուրը բաւական պաղած
է, կը գագրեցնէ շարժումը իր դաս-
տակը ճարտարութեամբ դարձնելով
և սափորը էրկանը կուտայ . Սովորա-
բար մարդը ումագ մը բերանը կ'առնէ,
«Օ՛, շատ տաք է», կը մրմրայ, և
կինը նորէն կը սկսի և կը շարու-
նակէ համբերութեամբ : Կ'ըսուի թէ
այս կերպով գաղջ ջուրը լեռնային
շատ պաղ ջուրի աստիճան կը պաղի:

~~Զարլսթընէ Ֆիլատէլֆիա գացող~~
~~շոգենաւին ուղեւորները և նաւազ-~~
~~ները յանկարծական ցնցում մը զգա-~~
~~ցին և նաւին արագութիւնը պակ-~~
~~սեցաւ : Բայց բան մը տեսնել չեղաւ~~
~~կարելի, մինչեւ որ յետոյ վիթխարի~~
~~կարելի, մը տեսնուեցաւ նաւին առ-~~
~~կրիա մը տեսնուեցաւ նաւին սուր-~~
~~ջեւը : Նաւին առաջակողմեան սուր-~~
~~եզրը կտրեր էր նրէշին մարմինին~~
~~մինչեւ կէար : Երբ կրիան շոգենաւին~~
~~տախտակամածին վրայ հանուեցաւ,~~
~~կը ուելով տեսնուեցաւ որ 380—400~~
~~քաշ ծանրութիւն ունէր :~~

Աղէկ վաւերացեալ պատմութիւններ կան թէ օձաձուկ-շանաձուկ կոչուած արարած մը իրօք տեսնուած է, որ կը թուի ծովային օձ մը ըլլալ իրը 40 ոտք երկայնութեամբ։ Ուրիշ քաջածանոթ բայց հազուագիւտ ծովային ճիւաղ մըն է ժապաւինաձուկ կոչուածը, իրը նոյնքան երկայնութիւն ունեցող և ճոխ կարմըրագոյն թեւերով գեղեցիկ արարած մը։

Կէտ (պալէնա) մը գտնուած է մարմնին մէջ կեռով մը, որուն նշանէն կը հասկցուի թէ կէտին վրայ արձակուած է գէթ 36 տարի առաջ։

Լեհաստանի Վարշաւիա քաղաքի վաճառանոցը սագեր հեռու տեղերէ կը տարուին, որոնց ոտքերը կը պաշտպանուին այդ ճամբորդութեան համար իրը թէ պայտուելով, վասն զի անոնց քալել կը տրուի նախ կպրածիւթի և յետոյ աւաղի մէջէ։

Երածշտորթեան ազդեցութիւնն անասնոց վրայ. — Ամերիկացի ջութակահար մը կը գրէ թէ սարդի ոստայնները զարմանալի կերպով կ'ախորժին երաժշտութենէն։ Ի Միսուրի նուագահանդէսի մը որահին մէջ յանկարծ արշաւեցին սարդի ոստայնները, որք իր ջութակին ձայնէն հաւաքուեցան հին չէնքին ճեղքերէն և ծակիերէն սկսան պարտիլ տախտակամածին վրայ։ Գրով կ'աւելցընէ թէ կը ճանչնայ պարտէզի փոքրիկ օձ մը, որ կը յուզուի դաշնակին ձայնէն, կը ճանչնայ հորթ մը որ պոչը կ'երերցնէ և ուրախ զուարթ կը ցատկուտէ ջութակին առաջին ձայնն առնելուն պէս։ Վիզը կը գալարէ հպարտութեամբ, ոտքերը գետինը կը զարնէ թեթեւակի, և ականջնները կ'երերան, և չի հանդարտիր մինչև որ նուագը չդադրի։



ԲԺՇԿԱԿԱՆ

ԵՐԱԾՏԸՆԻԹԻՒՆՆ ԻՐԻՒԽ ԴԵՂ

Երաժշտական խումբը, որ կը պարունակէ երեք ճայնաւոր երգիչներ, սովորանո, քողթրալթօ և պարիթոն, եւ երեք նուագածուներ, առաջինը եւ երկրորդը ջութակներ եւ երրորդը քնար ունենալով, հիւանդանոցն այցելեցին : Հիւանդներէն ումանք կը թուէր թէ շատ կը տառապէին, մանաւանդ անոնցմէ մին որուն մէկ որունքը ճմլուեր էր երկաթուղին վրայ . ուրիշ մը ջըրգողութեամբ կը տառապէր եւ արցունքներ կը թափէր ջղային մեծ ընկնման ներքեւ : Երաժշտութիւնը կէս ժամ տեւեց . եւ երբ աւարտեցաւ, հարցափորձ եղաւ հիւանդներուն : Ամէնքն ալ ըսին թէ երաժշտութիւնը մեղմացուցած էր իրենց

ցաւերը : Զրգողութենէ չարչարուող հիւանդ մը ըսաւ թէ երաժշտութեան միջոցին իր ցաւերը գացին, բայց նորէն ետ զարձան երբ զազրեցաւ երաժշտութիւնը : Սր. Փանքրասի Հիւանդանոցին մէջ կին մը կար որ մելամաղձութենէ կը տառապէր, որուն օրօրի երգ մը երգուեցաւ : Երգէն հատքը կինը հիւանդապահին ըսաւ թէ շատ սիրեց երգը : «Ասոր վրայ վերատեսուչը ինձի գալովլ ըսաւ թէ, Այս առաջին անգամն է որ հիւանդը խօսեցաւ տասնըհինգ օրէ ի վեր : Քիչ յետոյ գողգոջական ցնորանքէ տառապող այր մարդ մը հիւանդանոց բերուեցաւ : Երբ առաջին անգամ լսեց երաժշտութիւնը, բոլորովին հանդարտեցաւ եւ ուշադիրութիւն տուաւ, թէպէտ անոր հոգ տանող անձը վախցաւ թէ հոն ալ իր բարձրաձայն աղմուկները պիտի շարունակէր» Հետեւեալ օրը Կառնոնիկոս Հարֆորտ հիւանդանոց վերագարձաւ եւ տեսաւ որ ամենէն գէշ վիճակի մէջ գտնուող երեք հիւ-

ւանդները շատ մը աղէկ էին, եւ եւ բախտագիտութեամբ եւ շատ եռանդով կը խօսէին այն մեզմ երաժշտութեան յառաջ բերած բարիքին վրայ:

ՆՈՐ ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Գերման լրագրաց ըստածին նայելով, եւրոպիոյ եւ ոչ մէկ կողմը տեսնուած կամ լսուած հիւանդութիւն մը կ'տիրէ այս միջոցին ձարոնի մէջ, որուն հուկէ իսծուած+անունը կուտան: Ճաբոնի բժիշկներէն Տքդ. Մայաքաի տուած տեղեկութեան նայելով, մուկին խածնելէն յառաջ եկած այս հիւանդութեան ենթակաները սոսկալի կերպով սաստիկ ահնդ կ'ունենան, կարմիր ու կապոյտ մաղաս (պալզամ) կը թըքնեն, եւ մուկին խածած ահզը կը գեղնի. հիւանդութիւնը հաւըքի ջերմին կը նմանի եւ մինչեւ իսկ մեռնողներ կ'ըլլան: Ճաբոնի բժիշկներն այս հիւանդութեան պատճառները դեռ չեն գտած. կը կարծուի

թէ մուկին խածած ատեն, լորձունքներուն մէջ կայ տեսակ մը միքրոպ. ուրկէ կը վարակուին խածնուողները. կը կարծուի նաեւ թէ այս մուկիր կատղած ըլլան: Ճարոնի տուներն ընդհանրապէս փայտաշէն եւ ձեղուններն ու պատերը բարակ ըլլալով, մուկերը կարող են շուտով ծակելով ննջարանները մանել եւ քնացողները խածնել: Ճաբոնցիք այնքան երկիւղ կ'զգան մուկին խածնելէն որ անմիջապէս բժիշկին կը զիմնն, եւ զուարճալին այն է որ՝ բժիշկները, իսր դարման, կ'առաջարկեն խածնուած տեղին վրայ վասոգ գնել քիչ մը եւ բռնկցնել պայն: Ի՞նչ կ'ըսէք այս դարմանին:

Յ. Ռ.

«Տեսած եմ, » կ'ըսէ Տր. Լարուրսէ, «երկու կիներու մեռնիլը սաստիկ բարկութեան պատճառով. մէկը մեռաւ վեց ժամու ջղաձգութենէ ետքը, եւ միւսը հեղձամահ եղաւ. — «Տեսած եմ, » կ'ըսէ Տր. Լարեկու օր տանջուելով: » Եթէ բարեկու

կութեան ո եւ է աստիճան բորբոքումը մահ չբերէ , գէթ առ հասարակ կը խանդարէ կազմութիւնը : Ախորժակին վրայ անոր ներդործութիւնը աղէկ ծանօթ է :

Ըսդհանուր կարծիք մը կայ թէ օդին կը տաքցնէ մարդը, տաքութիւն յառաջ կը բերէ : Շատեր գոնեակներ կը գործածեն երր ճամբորգութիւններ կ'ընեն ցուրտ եղանակներու ժամանակ, ձմեռուան մէջ : Բայց բոլորովին անհիմն բան է այդ կարծիքը . հակառակը ճշմարիտ է մանաւանդ : Այսինքն, երր օդին խմուի, մարդը կը մսեցնէ , տաքութիւնը կ'իջեցնէ : Մինչեւ իսկ ամենէն զօրաւոր եւ սաստիկ ջերմի առեն անգամ երր կը գողայ մարդ, եւ տաքնալու համար վերմակներով եւ ասուեակներով կը փաթթուի , ջերմաչափը կը ցուցնէ թէ նոյն իսկ այս գողումին ժամանակ բարձրացած է եւ տաքութիւնն աւելցած է : Այս մսելուն պատճառն է արիւնին մարմ-

նին մակերեսէն գէպի ներս խուժելը: Երբ օդի խըմուի, արիւնը մարմնին ներքին կողմէն գէպ ի մակերեսը կը խուժէ, այդ պատճառու մարդ կը կարծէ թէ քիչ մը տաքնալ կը սկսի Բայց 50 արամ օդի խմուած ժամանակ, ջերմաչափը ցուցած է թէ մարդուս բնական տաքութիւնը 8 առտիճան կ'իջնէ : Բարեկամներ, սոսկալի բան է այս : Բոլոր հիւանդութիւններու ժամանակ տաքութիւններու աստիճանը կը բարձրանայ: Կան հիւանդանութիւններ որոնց մէջ տաքութեան աստիճանը կ'իջնէ : Վասնգաւոր բան է այս, վասն զի կեանքն այն հիւանդներուն որոնց տաքութիւնը բնական աստիճանէն վարժիւնը բնական կեանքէն վար է , կ'իջնէ , բնական կեանքէն վար է , ըսկէ է կը մեռնի :

Փրոֆ. Վիրիխով բանախօսած է Պէրլինի մէջ ողջ քարացած հիւանդին մը վրայ , որ իր բոլոր մարմնին յամբապէս եւ ամբողջովին ուկրացումէն կը տառապի : Մարդը քարի ցումէն կը տառապի :

կարծրութիւնն ունեցող մարմինի մա-
կերեսով մը ծածկուած է : Այլ եւս
կարող չէ շարժել իր ծնօաները ,
ուստի սախառուած է ընդունիլ իր
կերակուրը հեղուկ վիճակի մէջ խո-
ղովակի մը միջոցով : Ակուաներէն
քանի մը հատը կոստուած են խողո-
վակին տեղ բացուելու համար :

Ուստիոյ Զարր երեք փոքրիկ
գուսարեր ունի , որոնց զիսաւոր կե-
րակուրը կաթ է : Եւ որովհեաւ
մանուկներ սնուցանելու մանագէտ
ահճինք յանձնաբարած են միեւնոյն
կողուն կաթը դործածել , փոքրիկ
իշխանուհիները խրաքանչիւրն իր
յասուկ կովը իրեն հետ կ'ունենայ
երբ կը ճամբորգեն : Երբ մօտերս
Գերմանիոյ Կայսեր այցելութեան
տարուեցան , պալատական ախոսի
կառք մըն ալ կցուեցաւ կայսերական
կառախումբին , եւ այս կառքին մէջ
երկու գեղեցիկ Հոլշթայնի կովեր
կը գանուեին , որոնք մանուկներուն
պէտքին համամատ թարմ , սաք եւ

միօրինակ յասկոթիւն ունեցող կաթ
կը մատակարարէին :

Տր. Շափօ Փրէվոսթ , ներկայա-
ցուց եօթը ասրեկան փոքրիկ աղջիկ
մը , որ երկու պրազիլիացի մանուկ-
ներէն ողջ մնացողն է , որոնք միա-
սին ծնած էին Սիամցի երկուորեակ-
ներուն նման : Յիշեալ բժիշկը դոր-
ծողութիւն կատարեց Պրազիլիացի
երկուորեակներուն վրայ եւ կտրեց
զանոնք իրար կցող մուղէն կամուրջը :
Մանուկներէն մէկը մնուաւ զործողու-
թինէն քանի մը օր ետքը , բայց միւսը
ապաքինեցաւ եւ կատարեկլապէս ա-
ռողջ եւ աշխոյժ վիճակի մէջ : Բժիշկը
երկարորդէն նկարազրեց գործաղու-
թինը , եւ յարեց թէ վէրքին բուժ-
ման համար քանի մը շաբաթներ մի-
ման համար քանի մը շաբաթներ մի-
ման բաւական եղան : Բժիշկը ապա-
այն բաւական եղան : Բժիշկը ապա-
ցուցուց ճառագայթագէտի (Ծէօնթ-
կէնեան գործիք) միջոցով թէ ման-
կէտքին համամատ թարմ , սաք եւ

Գերմանացի վիրաբոյժներ գտած

են թէ հաւկթին կեղեւին ներսի կողմը պատող փափուկ թաղանդը կը պատասխանէ մարդկային մորթի կը-
տորներու որ կը դրուին բաց վէր-
քերու վրայ, որոնք ուրիշ կերպով
չեն բուժուիր : Դիւաը առաջին ան-
գամ ամերիկա գործածուեցաւ եւ
փորձը շատ յաջող արդիւնք տուաւ :
Վիրաբոյժները շատ ժամանակէ հե-
տէ զիտէին թէ խոռոչացած վէրքին
մէջ ողջ միս գալով, բուժում կ'ըլլայ:
Այս նպատակին համար մարդկային
մորդին կը զիտէին, զոր կ'առնէին
մարդէ մը որ յանձն կ'առնէր այս
կտորները իր մարմնէն կարուած ժա-
մանակ զգացուած ցաւը կրել : Վե-
րոյիշեալ գործողութեան առթիւ վի-
րաբոյժները միտք բերին Գերմանա-
կան գիւտը, եւ քանի մը թարմ
հաւկթ ձեռք բերելով, փորձեցին
կեղեւը պատող թաղանդը, որ կա-
տարելապէս ծառայեց մարդկային
մորթին տեղը :

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

ԶԻՒՆԻՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Զիւնը երկրագործին համար խիստ
օգտաւէտ է, զի անկից ստացուած
օգուտները բազմազան են :
Աշնան արտերը արդէն ցանուած
ըլլալով ձիւնը ցորենի, գարիի, հա-
ճարի և վարսակի նորածիլ բողբոջ-
ները քողարկելով ձմեռնային դառ-
նաշունչ քամիներու վնասէն զերծ
և տաքուկ կը պահէ, գողցես նա-
խախնամական գիտութեան մի ցողն
եղած լինէր :

Ու յետոյ ձիւնը հալելով իւր բա-
ղադրութեան մէջ գտնուած ամեւ-
նաօգտակար նիւթերը՝ ողյն բուժոց
մնադեան կը չնորհէ . բաց աստի օ-
դին մէջ թռչելու պատրաստակամ
եղող աճնեած և աշնի նման մար-
ելող, հողին մէջ կը պահէ, կը բան-
մինները :

տարկէ որպէս զի բոււոց կողմէ
ծծուին ու անոնցմով աճումնին նոր
զարկ մը ստանայ . այս խիտ տողե-
րէն կարծեմ կրցաք ձիւնի օգտա-
կարութեան մասին գաղափար մը
առնել :

Պտղատու ծառերու վրայ ունե-
ցած բարւոք ազդեցութիւնը բացա-
տրելու համար միայն ձիթենեաց
վրայ եթէ քանի մը տող գրենք՝
բաւ է :

Քանի մը տարիներէ ի վեր Պրու-
սայի և շրջակայ գիւղօրէից ձիթեն-
եաց վրայ խիստ վնասաբեր որդ մը
կայ , որ ամբողջ պտուղը ուտելով
անհուն վնասներ կը հասցնէ , թէ
տերեւը կ'ուտէ և թէ յետոյ պտուղը
կը փնացնէ , որ իւղ հանելէ զատ
բանի մը չի ծառայեր և իւղն ալ
լեղի համ մը կ'ունենայ :

Եթէ սաստկապէս ձիւնէ , և խիստ
ձմեռ մը ըլլայ , այն ատեն միայն
այս չարածճին պիտի ոչնչանայ :

ՅՈՐԵՆԸ ՀՆՉԵԼԻ ԱՌՋՁ ՈՐՉԱՓ ԸՎԱԱԾ
ԳԻՏՆԱԼ,

Անշուշտ փափագելի է ամէն եր-
կրագործի համար գիտնալ թէ այս
տարի ցանածէն՝ կալէն առաջ որ-
չափ արդիւնք պիտի առնէ : Առ այս
հարկ է արդէն մեղի հունձքի երեք
տեսակէն ալ այսինքն ամենէն լաւ ,
ամենէն գէշ և միջին աստիճան
հունձքէն մէյմէկ քառակուսի մէթրօ
տեղ հնձել , զայն կամնել և կշողիլ .
արդ՝ քանի քաշ հունձք որ ելաւ ,
բազմապատկել զայն 919 թուով ,
ելածը աէնձէ՞մ մը արտէն ելլելիք
հունձքի չափը կը ցուցնէ :

Փորձեցէք և պիտի տեսնէք թէ
ըսածս իրողութիւն մըն է և ոչ թէ
կերացական հաշիւ մը :

ԿՈՐԵԿՆԵՐԸ ՀԵՒԱՆԴՈՒԹԵՆԷ ԶԵՐԾ ՊԱՀԵԼ

Գիտէք որ կորեկին թշնամիները
շատ են , որոց հասուցած վնասներն
ալ բազում : Արդ , փոխանակ թշ-

Նամեռոյն յարձակման ժամանակ մեծամեծ ծախքեր ընելու՝ խոհեմութեամբ վարուելով կորեկները հողին յանձնելէ առաջ զանոնք զինաւորի և աւելի լաւ է . ուստի հետեւեալ միջոցը ձեր գործադրութեան կը յանձնեմ : 600 տրամ հանդէս, 300 տրամ հաւ, 100 տրամ առջտ ֆէնչէ բաղադրեալ խառնուրդէն միայն 10 տիրէմը 100 տրամ ջուրի հետ խառնելով կորեկները սակառով մը այս հեղուկին մէջ թաթիսել և անմիջապէս հանել , ու անկից վերջը ցանել . եթէ այս հեղուկին մէջ քանի մը վայրկեան մնայ՝ այլ եւս չի բունիր : Առով կորեկները ապագային ենթարկուելիք հիւանդութիւններէն, միջատներու յարձակումէն և ադուաներու կեր ըլլալէ զերծ մնացած կ'ըլլայ :

Սոյն թիւերը համեմատութեամբ գործածելու է, այսինքն 600 տրամի տեղ եթէ 6 քաշ առնուի այն ատեն 300 տրամ կազի տեղ ալ 3 քաշ առնելու է :

ԵԽԱՆԻ ՄՈՒՐԸ

Եխանի մուրը (Պահանջուրաց) պարտիզպանութեան մէջ խիստ յարդի է . իբր ազր օգուտ ընելէ զատ, շատ մը որդերու, միջատներու ոչնչացման համար ազդեցիկ դեր կը կատարէ :

Երբեմն խիստ տաք ժամանակ լուիճակները (Քէրտն պէտէ) բազմանալով պարտիզպանական կանանչեղինաց խիստ մեծ վնասներ կը հասցունեն , որոց ի զարման հարկ անհրաժեշտ է . ջուրի հետ լաւ մը խառնել և կանանչեղինները լաւ մը ջրել , որով ամէնքն ալ կ'ոչնչանան :

ՄՈՒԹԻՐԻ ՕԴՈՒՏԸԼ

Մոխիրի գործածումը շատ հին է, զի օգուտը բացայայտ է :

Աղբէ չախորժող ընդեղէններու համար խիստ նպաստաւոր է . ինչպէս սիսեռ , լուրիս , բակլա, ոլոռն և այլն :

Քանակը հողին տեսակին համե-

մատ կը տարբերի . առհասարակ մէկ արտավար հողի համար 75-80 օիսա բաւական է . ասոր օգտակարութեան պատճառը՝ մէջը բօթաս կոչուած նիւթի մը ներկայութիւնն է , որ ընդեղէններու ինչպէս նաև ուրիշ բուաց աձման , զարդացման համար հզօր ազդակ մ'է կրնամըսել :

Եթէ մոխիրը լուացուած է՝ չափը աւելի շատ ըլլալու է . ասիկայ հողը փորուած ատեն իր աղբ լեցնելու է :

Հին ԿԱՐԱԴՅՈՒՆՈՐԵԼ

Կարագը երկար ժամանակ մնալով բնական է որ թարմութիւնը կը կորսնցնէ , ուստի զայն նորելու համար պէտք է կարագը նախ պաղ ջրով մաքուր մը լուալ , յետոյ կարագին չափին տասը անգամը քիչ՝ կաթով լաւ մը խնոցի մէջ հարել և ապա նմոել ու վերստին ջրով լուալ : Այսինքն թէ եթէ կարագը 10 քաշ է՝ ասոր համար քաշ մը կաթ բաւական է :

ԽԱՌՆՈՒԻՐԻ ԿԱՐԱԴՅՈՒՆՈՐԵԼ ԳԻՏՆԱԼ

Ընդհանրապէս վաճառականները անարատ կարագ իւղ առնելով զայն շահագործելու նպատակաւ ճարպ , բաթաթէս , գդում ևլն . կը խառնեն կարագին բնական կակուղութիւնը պահելու համար ընտիր բամբակի իւղ կը խառնեն : Ճրագու և բակի իւղ՝ հոտէն կը ճանչցուի , դմակ իւղը՝ հոտէն կը ճանչցուի , սակայն բաթաթէսը և գդումը չի հասկցուիր , ուստի պէտք է քիչ մը կարագ շիշի մը մէջ լեցնելով բերանը գոցել , և 55⁰ աստիճան տաք ջուրի մէջ գնել շիշը որով կարագը կը հալի և եթէ մէջը բաթաթէս և կը հալի և եթէ մէջը բաթաթէս և կամ գդում կայ՝ ջուրին հետ՝ տակը կամ մնայ , իսկ կարագը թեթեւուկը մնայ , կը մնայ :

Անդրանիկ Մ. Էսայեան
Պրուսա 1902 Անդրանիկ Վ. Էսայեան
Աշակերտ Պրուսայի Երկրագործ
ական կայս . զարժարանի

ՀԱԽԱԲՈՒԺՈՒԹԻՒՆ

1. Հնդկահաւ — Սրուն կռուասէր է. 12-15 էգի կը բաւէ մէկ արու, էգը 10-30 հաւկիթ կածէ, զանազան տեղեր, ուստի հսկելու է. ամէն տեսակ հաւկիթի վրայ կը թիսէ, իր ձագեր 28-30 օրէն կը հանէ :

Զագերը 2-3 օր պէտք է ձեռքով կերակրել. ու ցուրտէն, անձրեւէն պաշտպանել. 10-12 օր կաթի մէջ թաթխուած հացի միջուկ է կարծր հաւկիթ. յետոյ կանեփի հունտ և 12 օրէն ետեւ ուրիշ ո՛ւր է հունտ, եղիպտացորէն, ալիւրի խմոր. բարակ ջարդուած եղիճ (ըսլըշն). երեք ամիսէն կրնան ինքնազլուխ ըլլալ : Բաւ է միայն երեկոյները կերտալ, ամէն բան կուտէ պտըտած ատեն : Հոդ տար որ թառերը հաւասար բարձրութիւն ունենան հաւնոցին մէջ :

2. Բադ. — Են գիւրինն է բադ

պահել. ամէն բան կուտէ . միայն առաս ջուր կուզէ լուացուելու համար. Մէկ արու բադ կը բաւէ 8-10 էգերու համար. 1-2 տարեկան և ուժեղ ըլլալու է արուն և ամէն տարի փոխելու է : Էգը 30-35 հաւկիթ կածէ գարնան, անմատչելի և գաղտնի տեղեր կածէ. ուշադիր եղիր, թըլս-սումը 30 օր կը տեւէ . սակայն բադը լաւ թիսող չըլլալուն համար աւելի հաւին յանձնելու է այս պաշտօն : Նորածին բադերը 8-10 օր ձգելու չէ որ ջուրը մտնեն, պաղ կ'առնեն եւ կը հիւանդանան : Առաջին 10 օրերուն մէջ թրջած թէփ, ջարդուած խոտ, եղիճ եալյն տուր . ուրիշ մնունդի կամաց կամաց վարժեցուր : Բադը չկրնար բարձր թառիլ ուստի հաւնոցին մէջ անոնց մասնաւոր տեղ մը յատկացուր որպէս զի հաւերն վրամին չաղտեղեն :

3. Սագ. — Են արդիւնաւորն է. մէկ արու 3-4 էգի կը բաւէ . արուն կը հսկէ էգին և ձագերուն, միշտ անոնց շորջ դառնալով : Էգը 12-15

հաւկիթ կածէ, 30 օր կը թխսէ . 1-2
ձագ ելլելուն էզը կը ձգէ միւս հաւ-
կիթները , ուստի զատելու է ելած
ձագերը և բրդալից սակառի մը մէջ
պահելու է : Առաջին շաբաթը հաւ-
նոցին դուրս մի հաներ , զի անմի-
ջապէս ջուրին մէջ կերթան և կը
խեղդուին : Զագերուն տուր ջար-
դուած կարծր հաւկիթ եւ ջարդուած
եղիճ . ալիւրով և թէփով խառ-
նուած խմոր : Երբ 15-20 օրուան ըլ-
լան ինքնիրենց կրնան ուտել ամէն
բան : Սագը շունէն աւելի արթուն
է վտանգ ծանուցանելու համար .
շուն կը լոէ բայց ոչ սագ . լաւ է
քանի մը սագ աւելի ունենալ իրը
հսկող ,

4. Աղաւնի . — Զոյգով ապրելու
համար իւրաքանչիւր զոյգի մէկ
բոյն պէտք է . բոյնը գետնէն քանի
մը կանգուն բարձր զետեղելու է :
Էզը տարին 6-7 անգամ կը թխսէ ,
7-8 ամսուան ձագերը կուտուին .
Կերը ընդեղէն է ու ինք կը ճարէ
հոս հոն թռչելով . միայն երեկոյին

կեր տալու է մանաւանդ թխսողնե-
րուն համար :

Աղաւնիին ինչպէս նուև ամէն հա-
ւեղէններուն բոյնը տարին քսան
անգամ մաքրելու է . պատերն նոր
ծեփ զարնել եւ ծխել . երբեմն ա-
սիտ ֆէնիքի ջուր սրսկել , ասով
հիւանդութիւնք կ'արգիւուին : Երբ
սակայն ասոնք կատարելէ ետև հի-
ւանդութիւն ծագի ամենէն ապա-
հովն է , առանց ժամանակ կորսնցը-
նելու հաւնոցին դուրս հանել եւ
մորթել , հաւնոցն ալ մաքրել և հա-
կանեխել :

Ցուտիկ Ծ. Վ. կամերիան

Թթենիի ՏՈՒՆԿ ՀԱՍՑՅԵԼ

Հոդ . — Թթենին աւազախառն
կաւային հողերը կը սիրէ . հողը կա-
ւային եղած ատեն , աւազ խառնե-
լով ազնուացնելու է :

Բազմացումը . — Գլխաւորաբար
սերմով կը շատցուի . սակէ զատ
աղուրայով և տաշտաթաղով ալ կը
շատցնեն :

Սերմով բազմացումը . — Տեղական և եւրոպական անունով երկուքի կը բաժնուի :

Տեղական տեսակ . — Արտը՝ ձմեռուցնէ առաջ +էրէշէ ընելու , վեասակար խոսերը մաքրելու և փոտած աղբով աղբելու է . մէկ արտավարին 15 եզի կառք աղբ կը բաւէ . աղբը հողին հետ լաւապէս խառնելու է :

Այս գործողութիւնները մինչեւ յունուար վերջանալու են . այս ամսոյ մէջ արտը բահով +էրէշէ ընելու է , յետոյ հողը անգամ մ'ալ մակերեւոյթապէս հերկելով տախտակներու բաժնելու և վրանին չորսական մատ բարակ աւազով ծածկելու և թեթեւօրէն խառնելու է :

Այս գործողութիւններն ալ մինչեւ մարտ վերջանալու են . այս ամսոյ մէջ սերմը սրսկումով («Երէ՛՛) ցանելու և ջրելու է . մէկ արտավարին համար 2 քաշ սերմ պէտք է :

Եւրոպական տեսակ . — Հողը վերոյիշեալ կերպով լաւապէս պատ-

րաստելէ յետոյ 4-5 սանթիմ խորութեամբ և իրարմէ 30-40 սանթիմ անջրապետով գիծեր կը բացուին այս գիծերուն մէջ սերմը նետուելէ յետոյ , վրան ընտիր հողով մը կը ծածկուի և թեթեւօրէն կոխուելով կը ջրուի : Այս սերմները ծլելէ յետոյ հինգական սանթիմ անջրապետով անօրացնել պէտք է :

Ամրան հողը խառնել , ջրել , վնասակար խոտերը մաքրել անհրաժեշտ են : Զմեռը վրայ հասած ժամանակ , 50-60 սանթիմ բարձրութիւն ունեցողները ընտրուելով ուրիշ տեղ կը տնկուին . ասոնք գարնան հողին երեսին հաւասարութեամբ կը կարուին և գոյացած ճիւղերէն 15-20 սանթիմ բարձրութիւն ունեցող էն զօրաւորներէն մին ձգուելով , մնացեալները կը կարուին . այս ձգուած ճիւղը ծառին բունը կը կազմէ : Այս գործողութիւնը միւս տունկերուն վրայ ալ ընելու է :

Առաջին տարուան համար ինչ խնամք որ ցուցուցինք , այս տարի

ալ անթերի կերպով ի գործ դնելու
է : Այս տունկերը վայրէնի կ'ան-
ուանուին . երկրորդ կամ երրորդ
տարին պատուաստել պէտք է . պա-
տուաստը մարտի մէջ կ'ըլլայ հե-
տեւեալ կերպով .

Այս վայրենի ծառը հողին հաւա-
սարութեամբ կը կտրուի և պա-
տուաստուելէ յետոյ վրան աւազով
կը գոցուի, որպէս զի ուշ ծլի . ծլելէ
յետոյ ճիւղ մը ձգելու և մեծցնելու
և 2-3 տարի յետոյ փոփոխուած
աեղը, իրարժէ 2-3ական մէթր ան-
ջրապետով տնկելու և թթաստան
կաղմելու է . եթէ ցանկ պիտի շին-
ուի, թթենիներուն մէջի բացու-
թիւնը 50 սանթիմ ըլլալու է :

Մինչդեռ տեղական տեսակին մէջ
թթենիի տունկերը նոյն տարւոյ
ձմրան մէջ քակելով, գարնան
թթաստանի կը վերածեն և մեծցնելէ
յետոյ կը պատուաստեն :

Թթենիին ձեւ տալ . — Թթենիի
ծառերուն բաժակի ձեւ կուտան .
այս գործողութիւնն ալ սապէս կ'ըլ-

լայ . Բունը՝ հողէն մէկ մէթր բարձ-
րութիւն ունենալէն յետոյ, առաջին
տարին դէմ առ դէմ երկու հատ ճիւղ
կը ձգեն . երկրորդ տարին այս ճիւ-
ղերը խարիսխէն . 10 սանթիմ բարձ-
րութեամբ կը կարեն . ասոնցմէ առաջ
եկած ճիւղերէն, երկուքին վրայ ալ
քովէ քովէ երկերիու հատ ճիւղ կը
ձգեն, որով ծառին վրայ չորս ճիւղ
եղած կ'ըլլայ . երրորդ տարին վե-
րինին նման ասոնց ծայրերը կը կըտ-
րուին և ամենուն վրայ ալ երկերկու
հատ ճիւղ կը ձգուի . այսպէս ծառին
վրայ 8 ճիւղ եղած կ'ըլլայ . ճիշդ
այս կերպով չորրորդ տարին ալ շա-
րունակուելով 16 ճիւղի կը վերած-
ուի և ծառը բաժակածե եղած կ'ըլլայ .
Եթէ թթենին աղուրայով բազ-
մացնելով, պատուաստի գործողու-
թիւնը շահիլ փափաքուի, փետըր-
ուարի մէջ զօրաւոր թթենիի մը
տարեկան ճիւղերէն 50 սանթիմ
բարձրութիւն ունեցողներ կարուե-
լով, հողին մէջ կը տնկուին . Ասոր
պէտք եղած խնամքը, սերմի մա-

սին մէջ գրուածին նման է :

Յօտաւ (պուտանա).— Թթենիները
յունիսի մէջ տերեւները առնելէ յե-
տոյ կը յօտեն։ Այս գործութիւնն ալ
երեք տարին անդամ մը կ'ընեն։ Բայց
մեր մէջ տերեւահաւաքումէ յետոյ ա-
մէն տարի կը յօտեն։ Բարձր ծառերը
թէև աւելի շատ տերեւ կուտան, բայց
շատ տեղ (8-10 մէթր) կը գրաւեն։
Սերմի պատրաստութիւն երկու
տեսակ կ'ըլլայ .

Ա. Լաւ հասած պտուղները ժող-
վելով շուք տեղ մը չորցնելէ յետոյ
կը խորտակեն և կարգաւ աւազի
մէջ կը պահեն :

Բ. Լաւ հասած պտուղները ջրի
մէջ խմորեցնելէ յետոյ, այսինքն
ջրի մէջ 2-3 օր ձգելէ յետոյ (ջուրը
ամէն օր փոխելու է) մազէ խալուրէ
անցնելով ճգմելու է. հիւթը վրան կը
մնայ և սերմերը վար կանցնեն։ Լաւ
մը լուալով շուք տեղ մը չօրցուր :

Յակոր Խաչատուրեան

Աշակերտ Պրուսայի երկրագործ.
Կայս. վարժարանի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տոմարական գիտելիք	3
Օրացոյց	15
Օսմանեան կայսրութիւն	97
Օսմանեան Թղթատրութիւն	105
Հեռազրական կանոնագիր	115
Հոգեւոր իշխանութիւնը	122

Ց Ա. Ի Ե Լ Ռ Ի Ց Ռ

Յառաջաբան

Գթած եղիք	131
Արեւելսան որբանոց, Պրուսա	134
Արեւելսան վարժարան	143

Բարեյավելք

Սուողապահական ենրական

Ընտանեկան


Կանաց բաժին	175
Գործի մարդոց բաժին	181
Օրիորդաց բաժին	192
Երիտասարդաց բաժին	203

Հարցերու պատախաններ

Վիճակագրական

Եերամի հունտերու արտադրութիւնը	230
--------------------------------	-----

Զուարենալիմ	233
Մրցանակաւոր խնդիրներ	244
Թուաբանական	251
Պատմական	255
Գավղըպաղընըն մէնշափ զուհուրի	272
Եիֆաքեար օթլարըն մէնշափ	273
Գիտական	
Շանթ	275
Երկրաշարժ	281
Գնդասեղ	284
Թժեկական	
Երաժշտութիւնը իբրև դեղ	294
Նոր հիւանդութիւն մը	296
Երկրագործական	
Զիւնի օգտակարութիւնը	302
Ցորենը հնձելէ առաջ որչափ ըլլալը զիտնալ	305
Կորեկները հիւանդութենէ զերծ պահել	306
Ծխանի մուրը	307
Մոխիրի օգուտը	307
Հին կարազը նորել աւազ	308
Խառնուրդ կարացը գիննալին	309
Հաւաբուժութիւն	310
Թթենիի առնկ համայնքը ՀՀР	313



6744

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0031984

